Ոչ հանուն գաղափարի: Այլ հենց այնպես...
Ինչի՞ն է պետք:
Իսկ ես ահաբեկված եմ: Հիմարիկ:
Ձմեռ է: Մեռնեի միանգամից:

Մի՞թե ամեն ինչ կավարտվի այսպես:
Դեռ չի հասցրել ցողը չորանալ,
Երբ միայնության դրոշմը դարձյալ
Հայտնվեց ինձ վրա:

Մի՞թե աննկատ ձեռագրով մի
Ինձ դատավճիռ ստորագրեցի,
Անտեսանելի ուժով ջնջել եմ
Այն, որ մինչ օրս սնուցել է ինձ:

Չար խոնավությանը լցվել են քամուց
Իսպառ ցամաքած աչքերս նորից:
Ոնց է ինձնդորեն սիրոս ճիգ թափում
Բարբախել այնպես, որ արցունք հեղվի:

Եվ պտավում են հուշերս արթուն՝
Հանց նվիրական կադրեր կինոյի,
Ջանում եմ քիչ-քիչ զսպել ինձ թաքուն
Եվ խուլ չարտասավել ժխոր-մետրոյում:

Թող որ՝ դժվար է պատկերացնել,
Թող որ՝ առայժմ ներսում ցավ կա լուկ,
Վստահ եմ՝ ես դա կհաղթահարեմ,
Վերստին կդառնամ ինչս լիաթոք:

Ստեղների վրա սիրո մասին մեկը
Կասի ինչ-որ բան... Մի թախծիր, անգին
Ջնձաղիկների մասին դու պատմիր
Ու բո ետեւից տար ինձ դեպի կյանք

Հետո ինչ՝ մեկ չեմք
Գուցե բախտը մեզ
Պատահաբար է հանդիպեցրել
Եվ չկա նահանջ

Ջնձաղիկների մասին կարկասչի
Եվ բո անցյալի...
Աղջիկ եմ ես խենթ,
Լավ ու սիրելի

Տկակացրու պստ ստեղներին
Մատներով, սրտանց
Թող որ՝ հեռու եմք իրարից անչափ -
Մի բառ խճբծիր ստեղնաշարով

Թող մատները բո խոսեն խոր սիրուց
Իրականության մասին ստիր ինձ
Տուր ինձ հեգհաթին

Մի օր ասել եմ ես քեզ՝ «Հերիք է»:
Ու գնացել եմ ճամփով ոլորուն
Մի՞թե ազատ կյանք...
Մի օտար քաղաք, բայց եւ գեղեցիկ:
Անտարբեր եղա գոյությանը քո
Կամոնքն իմ ապրել եմ ո՛նց կարողացա
Ժամանակը ինեղեց զգացմունք ու հոյզ
Եվ կյանքն ասես ինձ չէր պատկանում:
Կառչելով լույսի ամեն շողիկից՝
Ես դեպի հեռուն լողացի անկանգ:
Եվ սխալներիս վրա փորձել եմ
Ճշմարտությունը եղծից տարբերել:
Իսկ կյանքը դանդաղ հոսում էր հունով...
Ահա եւ հագա ես հարսնազգեստ...
Ոնց ամենքի մոտ, ոչնչով վատ չէր:
Մոր կյանք: Մոր տողեր:
Բայց հոգնած սիրտս ողբում էր լալով:
Իմ մատները դեռ հիշում են անգիր
Թիվն հեռախոսիդ: Կորչի ամոթը:
Թռչում եմ, ինչպես ժայռից՝ ծովի մեջ:
Ասես յոթ տարվա բաժանում չկա:
Ասես չիք ոչինչ, որ ինձ ես պահի:
Հիմա քայլում եմ կողքիդ այն ճամփով,
Որ փափագել եմ երկար ժամանակ:
Քայլում եմ հոգու եւ սրտի կանչով,
Եւ թքած ունեմ՝ ինչ կասեն մարդիկ:
Ինձ համար սհա եւ եզակի եմ:
Եվ ուրիշ մի Ես չեմ ունենա ես:

Ես կապված եմ քեզ
Թեղիկով երկար:
Յոթ տարին թռավ
Առանց քեզ, անգին:
Ես կապված եմ քեզ
Թեղիկով մի կարճ`
Նուրբ, սարդոստայնի:
Փետուր հանց թեթեւ:
Ինչը քեզ կպավ,
Կիսված է հեռվում:
Ես կապված եմ քեզ
Թեղիկով մի նուրբ:

Ես մնում եմ: Հայելուց դուրս:
Չեմ ավաղում ոչինչ:
Գնում եմ ես թափառելու
Կաճաններով հետին:
Դու կմնաս հուր-հավիտյան
Իմ սրտի մեջ՝ գրառված
Քամուց, հեփից Ծիր-Կաթնի
Եւ փշփշոտ բեկորից:
Քո հետքերին ակնդիր՝
Նրբագճներով կֆայլեմ
Ճերմակ ամպի հեզույթամբ:
Հանց առաջին ձյուն կիջնեմ
Քո ձեռնասիին բաց ու տափ,
Ու կժպտամ աննկատ
Լուռ՝ հայելու այնկողմից:

ՄԻՐԱՀԱՐ ՁԿՆԵՐԸ

Մենք սիրահարված ձկներ ենք լուռ
Օղը քիչ է, հա՞
Մենք իրար ենք շնչում
Ջուր չկա՞...
Մենք սուզվում ենք միմյանց ներաշխարհը
Օվկիանոսը, որ ցածր է իմաստային գծից
Երկինքը, որ բարձր է աստղային մտքից
Մետաղներից կթոցնենք անունները նրանց
Աչքը կանվանակոչենք սրտի ուժով
Մենք աստղախալած արգայական որսի
հետպետողներն ենք
Կարմիր կապսյով նապաստակ՝
աղեղնազենի նետով
Երկվորյակներ ենք
Մեկը երկնքում հավասարակշռում է
անվով արեուդու
Մյուսի բաժինն են
երկիրն ու նախանձը
Մենք սիրահարված ձկներ ենք լուռ
Չի՞ հերիքում լույսը
Մենք շողարձակում ենք միմյանց ներաշխարհում
Քի՞չ են ներկերը
Մայրամուտի մեջ ենք ներսուզվում խելառ
որ լուսնի շնածուկը
սպառնում է հորիզոնին
լողորդ կիսադուսնով
Մենք սիրահարված ձկներ ենք լուռ
Մենք կարմիր դռներ ենք
Մենք երկնի ակվարիումում
լռակյաց բառի շուրթերն ենք ալ

ԱՄՊՐՈՊ

Մի խոսիլ ինձ հետ ամպերի մասին
Ուռած դեմքերը կաշում են
սառը սպակիներին
ծիկրակում են
մայրամուտի բոսոր ետնավարագույրից
Ամպերին անուններ չտաս
մի սնիլ նրանց մի վարժեցրու
Մի կանչիլ ամպրոպին
ինքը նախահարձակ կելնի մեզ վրա
Առաջին կաթիլներով գավաթը լի
թափել են փոշում
Փշրել են ծիածանը
սպակու կտորտանգի
Ահա բերում են ամպրոպի բեռները
կայծակը բզկտում է
հորիզոնը հեզ
ալերախության գրահամեփենաները
տանիփներն են խուժում
աշխարհի խաչն են ահեղաբար ճո-
ճում,
պատուհաններն են ցրն-
ցում,
վարագույրներն են պատ-
ռում
ռռնում-երգում են
հանգցնում լոյսը...
Բայց ոչ:
Իմ տանը՝ իմ եղանակն է:

Ինքներս ենք տարվա եղանակները
ինքներս ենք խոտերը,
հավերժ, ծառերը
Մի կապույտ աղվեսիկ նկարի
կարմիր գետնածի
մանուշակագույն ճայեր նկարի
երկնքի սրտին
ես կանաչավուն ավազի վրա
...բայց մի կանչիր այստեղ
ահեղ ամպերին

ԶԳԵՍՏԸ

Ձմեռամեղվի զգեստը հագնեմ
ձնաբեր ամպի գույնը սիրելի
Կբացեմ մոմե դուռը իմ առաջ -
մեղուն շարժում է տաք լռությունը
հավաքում խորիսիւր
վեցանկյուն -
ձնափաթիլը վեցթեանի
Ինձնով լի զգեստը
թռչում է վեա-վեա
պարում փեշերով
թեւերի հետ սեւ
Մեղուները գիրկընդխառն լողում են սահուն
պոլոնեզի քաղցր ու թեթեւ կշռույթով
Թեւերի նախշերը հաշտ գալարվում են
փայլարի շողով
Ժանեկազարդով
խայթող օձիֆի
Օղագրահով կառչել են իրար մեղուները -
մեղրահացն է զնգում
մեղրը եռում է խորիսիւի հոգում
օծվում է զգեստը ոսկե մոմահյութով,-
բավ է, տվե՛ք ինձ փեթակի բանալին...
Կեսգիշերը նստել է դռան շեմին
փռկվել է զգեստը հատակի վրա
դառը պաղ մեղրը
հովտաշուշանի
ձնձաղիկների մեղրը հալչուն
բռնը ոտիկներով
կպել է մատիս
բզգում է ոսկին սեւ ու լիահունչ



ԱՆԵՔՍԵՅ ՊԱՐՇՉԻԿՈՎ

Ծնվել է 1954թ. մայիսի 24-ին, Ռ.Ղ. Պրիմորիեի երկրամասի Օլգա ծովածոցում: Դպրոցն ավարտել է Դոնեցկում/Ուկրաինա/: Երկու տարի սովորել է Կիեվի գյուղատնտեսական ակադեմիայում, ապա տեղափոխվել է Մոսկվա: 1975-ին ընդունվել է Գորկու անվան գրականության ինստիտուտ եւ ավարտել 1981-ին: Հաճախել է «ՇվՏրՅՖ» ամսագրին կից գործող Կիրիլ Կովալցիի դեկավարած գրական ստուդիան, որին անդամակցում էին Յուրի Արաբովը, Եվգենի Բունինովիչը, Ալեքսանդր Երյոմենկոն, Իվան Ժդանովը եւ այլք:

Պարշչիկովի առաջին հրապարակումը /«Ամանորյա տողեր» պոեմը/ եղել է «Լիտերատուրնայա ուչյոբա,» ամսագրում /թիվ 1, 1984թ./: Նա գնահատվում է որպես մետամետաֆորիստական գրական ուղղության առանցքային դեմք /Կ.Կեդրովի բնորոշմամբ/: Պարշչիկովի բանաստեղծությունների առաջին ընտրաքաղը /«Դնեայրյան օգոստոս»/ լույս է տեսնում չորս երիտասարդ բանաստեղծների միացյալ ժողովածուում/1986/: Նույն տարում նա արժանանում է Ա.Բելիի անվան մրցանակին՝ «Ես ապրել եմ Պոլտավայի ճակատամարտի դաշտում» պոեմի համար: Մրցանակը տրվել է «բանաստեղծական լեզվի հնարավորությունների ընդարձակմանն ուղղված ոչ ծամծմված եւ համոզիչ աշխատանքի համար»:

1990-ին Ա.Պարշչիկովը մեկնում է ԱՄՆ եւ ընդունվում Ստենֆորդի համալսարանի ասպիրանտուրան: Երեք տարի անց ստանում է արվեստի մագիստրոսի գիտական աստիճան: 1994-ին նա տեղափոխվում է Բազել/Շվեյցարիա/: Նույն տարի ԱՄՆ-ում հրատարակվում է նրա բանաստեղծական առաջին ինքնուրույն ժողովածուն անգլերեն /«Պղնձարջասպ» - «Blue Vitriol»/: 1995-ին Մոսկվայի «Ոսկե դար» ամսագրի մատենաշարով լույս է տեսնում Պարշչիկովի բազմաժանր «Cyrillic Light» ժողովածուն, իսկ հաջորդ տարի հրատարակվում է նրա «Ընտրանք» գիրքը, որը 2010-ին վերահրատարակվում է նոր խմբագ-

րությամբ:

1995 թվից Պարշչիկովը ապրում է Գերմանիայում, որտեղ ի վերջո հաստատվում է Քյոլն քաղաքում:

2002-ին «МК-Периодика» հրատարակչությունը «Պոետ-մատերիալիստներ» խորագրով գրքում տպագրում է Ա. Երյոմենկոյի, Ի. Ժդանովի եւ Ա. Պարշչիկովի բանաստեղծությունները: Հետագա տարիներին Մոսկվայում հրատարակվում են նրա «Հպում դադարին»/2004/, «Հանգարներ»/2006/, «Գանդաղ կրակի դրախտը»/2006/, «Երկրաշարժ Ցե ծովախորշում»/2008/ գրքերը:

Մոսկովյան Պոետների քիենալիեի դափնեկիր է/2005, «Գրական լեզենդ» անվանակարգում/: Աշխատել է մի շարք պարբերականներում /«Գրուժբա նարոդով», «Ջերկալո», «Էստետ» եւ այլն/: Տարբեր տարիների հրատարակվել է ռուսական գրական եւ ոչ գրական առաջատար պարբերականներում: Նրա պոեզիայի մասին գրել են հայրենական եւ արտասահմանյան տասնյակ հեղինակավոր թերթեր ու հանդեսներ:

Ա. Պարշչիկովը մասնակցել է պոետական միջազգային փառատոների Գլազգոյում, Նյու-Յորքում, Սան-Ֆրանցիսկոյում, Ստոկհոլմում, տարբեր գրական նախագծերի ԱՄՆ-ում, Հոլանդիայում եւ այլուր:

Պարշչիկովի ստեղծագործությունները թարգմանվել են 15 լեզուներով՝ շարքերի, անթոլոգիաների եւ առանձին գրքերի տեսքով: Բանաստեղծը հանդես է եկել նաեւ որպես ակտիվ ու հմուտ թարգմանիչ: Նա հիմնականում թարգմանել է անգլո-ամերիկյան, գերմանական եւ հրեա հեղինակներից /Մ. Պալմեր, Ջ. Հայ, Թ. Հյուզ, Հ. Ջեքսոն, Լ. Բերինսկի եւ այլք/:

Ա. Պարշչիկովը մահացել է 2009թ. ապրիլի 3-ին, Քյոլնում:

2014-ին Մոսկվայի «Վրեմյա» հրատարակչությունը լույս է ընծայել բանաստեղծի «Դիրիժավներ»՝ ժամանակագրորեն եւ առավել լիակատար կազմված ժողովածուն:

ԱԼԵՔՍԵՅ ՊԱՐՇՉԻԿՈՎ

շիրմի հետ նրա հանդիպումն ասես շփում է
կեղտոտ մուրացկանի հետ
քո մկանները մարզված են եղել եւ մոտեցումը
տարրական չէր հեջ
նրա գերությունը դու չես վերհիշում այլ թախառում
ես կայարաններով

ճամփորդի համար շոյանք է հեռվի փայլը կրակի
կարող ես մեկնել եւ դու տանջանքով սկիզբը պիտ
տեսնես
արտաբնույթի եւ սերմնահեղուկի հոտն է գերիշխում
շարժակազմերում

որսալով ռիթմը թռչել օդանավով իսկ սովերը նրա
ընկած է կամա
չգիտես գործը մոտիկ սմայի հետ է թե այն հեռավոր
բնաբանությունի
բարբախում է նա չքվելով գետնին նրա հետ եւ
քո մարմինն իրական

դռնբաց բերդից երբ ճամփա ընկնես՝ տղնակները
պոկիր
ցատման ճայթյունները թող լրտեսները վառեն
շքամուտքին
քեզ հասնեն նրանք թե դռները սարքեն փրկեն
գրգերն ու սկիհները հին

թող ներշնչվեն քեզնով սայլակը Կարսագիւնի եւ դեկը
Քերուակի
միթե ճանապարհը նպատակ չէ միջոց հայթայթելու
ժամանակի քամին ֆռազնում է քեզ եւ դնում ի դեմ
աճող հոսանքին

ՈՒԺ

Լուսավորում է էպիթելային խավարը, իսկը՝
խայթոց մի անգն,
սռաջխաղացման մոլեգին ձգմամբ միաժամանակ՝
սռ մարմին՝ գազի վերածվող արդեն,
միաժամանակ՝ սռ գազը՝ հեռման կետը զգացած:

Դա մի ուժ է, որ աճում է մեր մեջ նաև արտաքո,
հանց արջը գանգով պկոկողահար,- մոտերքում
կրկին
շողուն տներն են, որտեղ անիծյալ հացն է
մարմնաթով:
Արջն է ուժ առնում, մոտենում լիքը ճաշասեղանին:

Կանխատեսումն էս դու այդ ուժի, որ պարավում է
անվերջ,
դու այն որսացել էս նյարդաթելով էս կմախքիդ ճկուն
ոսկորներով,
դու չես տեսել նրան, քանզի քարջ էս տվել սառը
դագաղի մեջ
էս հատ-հատ հաշվել էս մկանաթելերդ ողջ:

Անձայր լեռներում՝ այս աշխարհի հետ՝ ի մերժում
թռչող,
այս աշխարհից հանկարծ քաժանվելով՝ նրան
խոցելով ճամփին,
քաժանվում է, սսենք՝ ինչպես կգատվեին
ռադիոալիքն ու նավթը սեսացող,

ՓԱԽՈՒՄՏ-2

Փռշի: Փռշի եւ ավագ: Դանդաղորեն, սսեսս
ճանթված պարկը ցելոֆանե՝ շարժվում,
ընդլայնվում եւ
սղոտանում է հիշողությունը: Օդանավն ավագե
իջնում է, սակայն ունենալով այլ ձեւ:

Աշխարհների կռվում, նախ, օշինդրն է
գահավանդակն առնում:
Մեկնումից առաջ ինսամբով մաքրել եմ սեւ
միջաստներից
ռադիաստորը, երբ հրդեհը փութով ճարակել է
երկրի մոտ կեսը, բայց մեզ չի ճանկել՝
որոնվողներին:

Բենզակայանի մոխիրը թունոտ: Ալեքսիություն,
վոշի, շուրջբոլոր՝
ոչ ոք, լոկ սարբն է ընկած մի կողմի:
Հեծյա՛րը սյստեղ սռկայծեց մի պահ, թե՛
երկնից գոռ
ավագ են ցրել ալեքսիության գծերով ծուռտիկ:

Փայլում են բարում կոշիկներ, մատներ: Պարվում է
պարը, սսեսս ոռկանը կրիայի ճանկում: Զուր եմ
փնտրում բեզ, ջիներով ինքս, հավանաբար մեզ
երկիրն է կլլում խորքն իր սեւգեհեն:

ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԻ ՇՆԵՐԸ

Տցուն ձմեռվան հաջորդեց գարունը գոգավոր,
թույլ է հիշողությունը ճիվաղի մասին՝
վերստեղծված ոսկոր առ ոսկոր:
Բայց ուրվագծվում է արդեն մեջքը նրա ծովի
երկայնքով,
եւ իր ճանկերով իսպակնում է արդեն կենտրոնի
հրապարակում:

-Լեռը,- ցույց տվեց Այրնան,- սառեցված գիտուն է
լուրջ:
Այդ կուրացուցիչ լեռանը ակեռոց հազցրի կարկամ:
Ամեն ինչ փոքրացավ մեկեն՝ հանց արքայակր
տիեզերական,
որ պատվում է ոսպուններ գործող ճիվաղի շուրջ:

Մթնակերը թողեց «Երազատեսության
մեկնությունը» եւ մազերը ցցեց,
ոնց «Ուլիսեսի» 17-րդ գլխում,- իսածելով պոչն իր:
Շները շրջանում մեկեն մոռացել են ստեղծության
ու վրեժի մասին:
Լակոտ Ատողը, որձուն Կասողը ամբողջ հասակով
ձգվեցին մեկտեղ:

Ցուցարարները շարվեշար անցան շների հետ բիպ:
Կարգը պաշտպանության ջարդված է,- իսկ այն
ինչպե՞ս է եղել:
Զինվորների թուլե՛ք սատանայացել են
ճշմարտությանը իրենց,

բայց, ի դեպ, ասեմք, որ նրանց ոգին սիրո
կադկանձ է:

Զինվորների եւ ցուցարարների շները իռնվել են
սրսակով վուրթկոտ:
Այդպես Աթիսը թավուտներն է ձեղում, չգիտես՝
դեպ ուր,
գազանանոցում ընձառյուծները իրենց թաթերով
կարծես մեխված են կեղտոտ հատակին, - երախում՝
սառույց եւ պղտոր ջուր:

ՄԱՆԳՂԻԿ

Ջեղնահարկ նորսոճ: Այստեղ նորեկ եմ ես:
Լսել եմ՝ ո՛նց է աճում խոթի տակ ծաղիկը հեզ:

Նստել ես դու սանդղիկին, հանց հայտնի գոհար
անտի,
սատեցի, զգալով թե՛ չսփումն ինչ սահման ունի:

Դու եղար խտացումը ամենայն իր ու վարժի,
դր ճամփին մոտենաս քեզ - շրջանցես խոտորնակի:

Կանանց հովիվն էր աստ եւ հողաչափը նստել:
Տանելի էր վախը, հանց նրբահյուս մետաքսաթել:

Կարելի է քեզ ամեն ինչ: Ծիծաղեց Ֆոման:
Թույլ տալով՝ բանտն է սակայն ընդարձակվել
այնքան:

Ոգին ձեւ է տալիս ինչքին շուրջանակի - ձեւ՝
աղեղով նեղ:
Թե շտկվի-ուղղվի մի օր, կիմանաս՝ ով ես եղել:

Օրինակ՝ եթե ցուլից աղեղը հանես թափով,
որդի մուգ գծի վրա կընկնի նա սայթափելով:

Մեզ փնտրող հարցականը քմահաճ արարքով իր
կսեղմի աղեղով այդ ճանապարհ, շունչ ու տարի:

Պահանջված հումք էր ձեռքիս պաշարը փորոսիփի,
կանգնած ջրում սայրել եմ ես սարսուռով սեր-սլիփի:

Բայց գնաց տուն ու գործին երգչախումբը կուշտ
Գլորիայի հետ միասին՝ հանց բոլր կանաչած ուշ,

գործնական աղջիկներով՝ թառած անիվներին,
անհասպաղ քնել է պետք գոտում առանցքային:

Գանգը իմ շաղափեցին կոստյուներն այդտեղ:
Բացճակատ տաճար մտա, իսկը՝ ո՛նց թանկ
որմզդեղն:

Այդ պահին Էկրաններից գետինն էր ներքե սողում:
Էվոյուցիան ահա վերստին զրոյից է սկսվում:

Ջուզված ու հոյժ զինավառ բեմ էլավ բռնակալը,
բնության իստացանկում նա սակայն
պիտույք է իւեղն:

Խորհեցի ես քո մասին, որ այստեղ, մի պահ առաջ
մեր իմբին մեկեն հասցրիր գաղտնակուր
մոլեգնության:

Կկարեի ես քեզ համար երկարաճիտք կոշիկ,
որ մատներս միշտ հիշեին ռուբերիդ պացքը շիկ:

Իսկ սանդղիկին՝ իսավար կրկին, սրտակից իսավար
պասպակ:

Կսպասեմ ես քեզ այստեղ: Չես էլնի ինքո մենակ:

ԼՈՒՍԱՆԿԱՐ «ԸՆՏՐԱՆՔԻ» ՀԱՄԱՐ

Հանց տկրոր փշերի մեջ՝ սեղմված ես հենարանին,
ասեղը նետիր ետև՝ կբացվի սռագաստ հանց:
Գրանից անդին՝ հեռվում, շողանքն է ամայուտի,
հոգին է ուրկից դառնում՝ անուշադրի
հոտից արքած:

«Cyrillic Light» շարժից

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ ԿԻՆՈՂՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Խաղարկում հեծյալները սրընթաց թռչում են
 իսանդակի վրայով:
 Նրանք ձուլվում են թամբի հետ, ինչպես որ`
 ճկված Ծ եւ 10:
 Ռիտմի ետեւ անբաններն են կեցել «ու-լյա-լյա»
 կանչերով:
 Կասկադյորները հայհոյում են, սակայն չունեն
 ինչ-որ կշիռ:
 Չռված շտատիվով անվերջ պտտվում են
 այս ու այն կողմ:
 Խաղարկի հատակին ջուրը կոյուղու գոլորշուն է
 իսառնվել:

Այդ խաղատուրայի նկարահանմանը աչքը
 անպատճառ դու կվնասես:
 Տեսնես` հո՞ծ իտմբը մի նոր վերմուտի ետեւից է
 վազում:
 Տաճարի տեղը եւ հոտառությամբ իմացա հեռվից:
 Ջկնկուլն արդեն շեշտ նկարված է լճափուսի մեջ:
 Ծովում - մեկ ժամվա հեռավորությունից - գորտերի
 գինետան ձենն է հասնում մեզ:
 Իսկ փխտասկները սրնբաձկներով ու նավերով են
 կերտել:

Պետք է տաճարը դնել ու պարզել նկարերու
 ձեռք ճշգրիտ:

ԱԼԵՔՍԵՅ ՊԱՐՇՉԻԿՈՎ

Կասկաղյորները իրենց գլխարկներով՝ հանց
ցուպիկի գլխին օղակներ սեւ:
Մոտենում եմ ծովին՝ գետաբերանի հսկա
ծովախորշով,
որ ասես լինի դեղձի ծակոսկեն կորիզ ձվաձեւ:

Աչքի մի անկյունով ես ողջ տիեզերքը նկարեցի
հստակ:
Ո՞վ էր անդրանիկ լուսանկարիչը - Պերսեսը
հաստատ:

ՀԵՌԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1.

Մենք նայնպես քայլել ենք Էլեաստորների
տանիքներով՝ մեր սուղ պաշարով
լուռումունջ սսես մոլորակ ենք սեղմել ատամների
տակ
Ես ստորակետ եմ Գու՝ միջակետ,- աշխույժ
քաղաք էր՝ ոնց որ ափիղ մեջ
հրդեհները թմրել են շաղափի թանձրուկով
եւ մեր աշխարհի ֆերականներիս ահը ջնջել է
հեշտ ու հիմնովին
մեզ Ֆլորեր էր սրագ թելադրում նորեկ ս. Անտոնին

2.

Աջից՝ ներքեում՝ երամակներն են, ոնց ջրիմուռներ
ժայռոտ գառիվերին
ձախից՝ քաղաքը՝ սովորական ինքը եւ աղջիկները
լաիրշ խունտայի
մենք իմել ենք աշխարհի սրարման կենացը
Ջոկոնդայի քնուշ ոսերի ետեւ լեռնային բիլում
քնակեցված վայրից երագելով
մետաղապարով անշեղ վազվզող նշանոցի մահը

3.

Պայմանական փարոսն է գրմում անխորհուրդ
Տանիքն է ճոճվում,- ծովում կոշիկի գոյզն է
տարութերվում
Ընկերս իր թաղման ծրագրերն էր հեռագրում ինձ
կարեւորվելով ու ծռնկսվելով

դժոխքում անրջում էր ուղեկցորդուհի կուսաձաղիկը
կպած քառատրոփող ագռավի մեջքին

4.

Եւ նենգափոխել եւն քեզ անկիրք մի պահի
Օվկիանը անցավ հար փոփոխական
Ժամանակացոյցի
Քո գնացքը մեկնել է հրդեհի գոտի
Կրտսեր ընկերս ծեծկռտվել է սառեցված
կողաձկան հետ

Քեզ

նենգափոխել եւն խորտակման պահին
Պատահում է սակայն
կարեւորը չխաբվելն է իսառնաշփոթում Հիմա
ո՞վ քեզ ինչ-որ բան կբացահայտի
Կի՞նճը միթե

5.

Կան անճոռնի ճիճվակերպ շատ զինվորներ
Էժանագին վերմուտի հոտով պարուրված /ամեն
ինչ թաքցված է իրենց թիկունքում/
Վկաների մեջ չկա կեղծարար -
այս ու այն կողմ հրշեջներ ու փրկարարներ եւն
Ինչո՞վ է սպառնովված վկայությունը
Ինձնով մահախոտականի սյունակով նաեւ

6.

Եվ ճգնակյացների դարձան հայթայթողներ
Չինացին հրապարակում պառկած է իսկը
թեփուկի պես

Պատմությունն ավելի վատթարն է ուզում ուստի
շարժիչներն է գործի գծում
Սահմակելի է
թե մենք լինեինք պարզ ու հասարակ
Լուսանկարները՝ ինչպես լույիկեր հին ու նեխած

ՄՆՄԱՀԸ

Նրանց ծոծրակները պրկված են հար:
Անմահը՝ ծծակն է ամեն հավատի:
Իմ դեմ երկուսն են: Իսկական իսցան՝
մեր մթնոլորտի ճոճուն հատակին:

Պսակն է ներկված: Այն կարմիր է վառ:
Նշանառությունն է ճշտվում մի թափից
պատվանդանների կենտրոնի վրա՝
հանդիսատեսին մատնելով մեղքի:

Ի՞նչ սավառնակ է պատուհանից դեն
պտտվում խելսո՞ւ՝ անհարթ սպակու ոլորքով երկար -
նա շրջանցում է խոթերը բոլոր: Հենարան է ձիգ,
սմպերից հեռու անվերջ դեգերող խելքի պատասշիկ:

Ծաղիկ անթառամ - ոչ դրասանգ է, ոչ փշառոգի,
ոնց սառցակալած ընկույզի ներսում
պտուտակահան - փոշեցրելով կրում է կրկին
առանց վրիպման ոչինչը սին:

Քարտեզն է պատից պրկում անվրդով,
որ Կոպեռնիկոս գիտունն է գծել,
եւ Տարտարուն է փաթաթում դույնով -
պատճենում իրեն անմահը ընտել:

Կարմիր դագաղին նա հակվում է վարժ:
Նրանում մահն է սեպվել փեղկի պես:
Երկու մեջք ունի: Կարճշուրթ է ու պարզ:
Բախտի թարմ խոզան: Սրտի սաժիլ հեզ:

ՈՂՋԸ ԱՑԴՊԵՍ ԷԼ ԿԱ

Կույսի բերանը շարժվում է անվերջ, եւ քամին
թնդանում է իւերես գինու պես:

Կախարդիչ բռնագները եւ կիկլոսայան խորին
երազները

մարգադաշտերի: Եվ Ամերիկան ցատկում է
ինձն իր վրայով, գոհ են բոլորը

Նրանով, ինչպես կիրճը խուսավարում է՝ ոնց
Թռչող Հոլանդացու ողնափայտե դեկ, որ
մխրճվում է մարդու ուղեղի մեջ, որին
գլուխցած քարշում են սրածող շենքի
աստիճաններով:

ԱԳԱՐԱԿՈՒՄ: ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

Երկու ցույ ենք աստ շամփուրով խորովում,
Լարիսան,
բաժակ առ բաժակ գունատվելով՝ օդը կույ է
տալիս եռուն ինքնատեղի գլխամոցի նման:
Գի՛նու տակառների՛ն՝ սկսած ներքեից,
մինչեւ աստղերը ութերն են թեթեւ
միահյուսվում իրար:

Ուղղաթիռի
սանդղիկը
հարթավայրի վրա:
Շրջակա լեռների՛ն քունը հատկական է առանց
որոշարկման:
Ոգնիների մարտը
քո սանրվածքում մղվում է անմեղ հոգիների համար:
Բեկոնի նման զոլավոր խաղաթով ես դեզերում եմ
ավտոտնակների տաբուկ երկայնքով:

ՀԸՆԹԱՑՍ ԼԵՈՆԵՐՈՒՄ

Առայժմ «Բվեարկում ենք» շրջակայքում,
ոգիս նման է գողացված պարկի -
արտաբնասպես՝ իսկառ, ներսից՝ պատահմունք:

Փուչ ցեղաստեասկները շերտավորված են,
լուսարձակների տակ դժժում, փշրվում են հեշտ,
բարերն են սողում, հանց օձի ուղեղ:

Սանդալի բուղերը մեկեն արձակելով՝
դու լեռնաշղթային կատարներ ես լարում,
ճկույթով կայծբարից արյունը մաքրելով:

Ներբաշված խճուղու ընթացքի մեջ բարդ՝
դու երազները մազերով բաշում ես: Բերանդ՝
հանց սնդիկ սեսիրա ձյութի վրա:

Եվ թիթեռները բուսր, բյուրախաշիվ
իրար բարձրացրին եղջյուրների վրա՝
սպիտակարյունությունից գալարվելով ճամփին:

Եվ ասերի հոգին, բախվելով իրար,
պղնձից կարող են ալյումին դառնալ
եւ ճայթել Երկրից մեկ կիլոմետր վեր:

Իսկ ուղին առավոտ շիկավուն էր եւ
սեղմված դանակի ազդեցության պես:
Նոճու ստվերը անկյունում: Տոթ է:

ՏԻՊ: ՀՈԿՏԵՄԲԵՐ

Վերև էր գնում, բայց մթության մեջ շարդվեց
անադմուկ:
Ճիլտված՝ իսկը հանգստորի տրիչ, եւ անուժ՝
իբրև արձակված գոտի:
Նա չգտավ ոչինչ, իսկ առաքելություն
չէր կանխատեսված:
Ինքնախաբեություն, ոնց օրացույցում մեխով
բացված ծակ,
շապիկին որի - քաղաքն է /պլանը՝ վերելում գծված/,
ուստի բացվածքն ընդունվեց հանց օդապարիկի
գովազդ, բայց որը կրկնակի չկա:

**ՍԱՆՏՐԱՆՑԻՍԿՈՑԻ ԱՌԱՓՆՑԱ
ՀԱՆՐԱԽԱՆՈՒԹԸ**

Հարթակում առյուծն է քրքրված, լիալուսիներ
կլլում է նրան:

Civic Center S.F.

Կրծված ու հղկված գլաբարերի կույս:

Հավի գլխիկներ՝ երկնուղեշ ծառերի պատնեշի վրա:

Իրերի իսավարում ավարտվեց ինճակեր
լողանցումը:

Քնկոտ ողոբիչը ցածր է քո մարմնի ծոված օղերից...

Վարպետ, մի փռվիր բերանբախվայր, հանց կոկիկ
կույրը ձվերի ցանցով:

Հիշիր ձյուններում լքված ու անտեր օղանավերի եւ
հին-սղոցված սուզանավերի կակամի մասին:

Մի մոռացիր սղոս գծագրերի,

Գա Վինչիի անհաս ինելոհների մասին,

որ տրաբում են անվերջ վազվզող բարեկամի
բարակ

սրտի նման: Հիշյալ

նմուշներում հեզ կեցության - թռչող ինելները եւ
պարագծված պղպշակները

լավել-խցանվել են անգո գոտիներում՝

ննց զսպանակ սեպված,

ճայթյուն լուծոյթների, հասարակ սանտեխնիկա:

Մի գոռա:

Քեզ ինայել են:

Կաշվե բաճկոնի ու մոտոցիկլի միջև մի ընտրիկ
ոչինչ, նրա ծածկոցը
կաշում ու փռփռում է կեսգիշերվա քամուց՝ ինչպես
սուշկինյան ձեռագիր դողդոջ:
Գրիր՝ ջոռանադով ինչի մասին,
Ժամանակը կաթում է անդադրում մուրճից:
Միայնությունը կատարելություն է շնորհում
բեզ հանգիստ:
Երազը երկատվում է գորտի ու օձի միջև գալարվող
հակազդման թավով:
Վեր մի մագլցիր հանց սուսեր կլլող,
հանգստացիր դե,
դու լիովին բռն ես:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

Շագանակենու սաղարթով ահա փոխադարձության
կարգն եմ սովորում:

Ույանովը արմավենուց շինած համրիչն է՝
պիտներական հայտարարը գանող:

Ջանադրության գրգանքը մեզ հեռուն է նետել
կարիքի ուժով:

Դարը ավարտվեց անգիտակից կերպով:

Ծովառյուծը լեզվատակի ցցվածքն է կախովի
դոյակների սռնչությանը:

Դոյակների միջով տիպարս պացամ,
չեմ փնտրում նրա անունը, նա մեզ հետ է:

Ծովառյուծներ՝ մոտիկ կորնթարդ խանդակում:
Մազլցումը եղել է բաղքը խոնջանքի նմանությանը:

ԵՍ ՈՒՐԱՑՎՈՒՄ ԵՄ ԿԱՊԻԿՆԵՐԻՑ

Ես կապիկներից ուրացվում եմ եւ երդվում
Քեզ հուշիկ:
Քեզ ուրիշներն են երդվել, սակայն չեմ կարող
հրաժարվել քեզնից:
Չեմ նվաղել այնքան, որ սկսեմ ինչ-որ
երկրորդականից:
Խրտվիլակ մարդու, իրտվիլակը մարդու -

Ինչու եմ: Թեքվածքը լճի անդրադարձվում է,
իսկ ես չեմ ուզում:
Տղամեք լճառդի իր տեսակի մեջ, հա, երբեմն լավ է:
Ես քեզ եմ փնտրում:
Դու գտնված ես ազատությանդ մեջ:

«ԱՊԱԿԵ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ» շարփից

Օ, ԱՅՁԻՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ...

Օ, այգին ընկերներիս, ուր ցցվել էմ ես ճշամալով,
աչք փախցնելու համար սույում եմ ահա
 խենթ ու անհավես,
մեր աղիքներն ենք արծաթաշրոմ մկրտության
 զինով,
կեցցե ներսը մեր, որ առկայծում է սիրով՝
 մեզ ի տես:

Անունները մեր բազմապատկելի չեն, բայց սատ
 բազմակի
ծելված ենք հողին,- ում եռանկյունի
 մտքերն անձուկ,
ու՛մ հոգին ճարտար պահանջում է ես
անդորր ու աղմուկ, անդորր ու աղմուկ:

1971 ԹԻՎ

Գու ժիր փայտփորիկ ես, գապանակ, ցունկ,
կամ նա ես՝ աշից՝ շաղափիչ, վանդակ,
կամ սա՝ կենսորոնում՝ խելացի լակող,
ստվերարկվում է. վերջն է համերգի ես դարձնում է
փակ,
ախոյան, որ ձգվում է սառցագետի պես,
ծանրաձողի դոնդող, տողանի կարմիր օձիք
վերսնկված:

Մնդիկն է երկարել, ծուխը՝ ոլորվել,
եւ ռեֆլեկտորը կծկվել է սակված եղջյուրիկ ինչպես,
սեյֆերը փվել է շուռ են եկել, լցվել սվազով,
որին սիրհոժար արեւհարվում ենք վուչ
հայիոյանքով,
սեւ այգիների, հրաձգարանների աղմուկի ներքո՝
լվացվում ենք մենք կայծ, նրբաբոյր կռահումներով:

Բյուրեղներ սնող խոյության մեջ, ինչպես
բարեյոնյան գետում լողացող խուժան,
հաշվել ենք խաչվող նավակորուստը
պարեկող լույսի փնտրտուքի մեջ,
եւ ներշնչել ենք քաղաքներին ու հեռու թափուտներին -
մեզ ծվեններն են բռնել ու պահել:

Գու փաթեթի մեջ ես, կամրջին, կրունկը
կարմրակուրծիկ է,
բայց նա չէ, ով հեշտ գերեզմանոցը
վարդագունում է,-

ԱԼԵՔՍԵՅ ՊԱՐՇՉԻԿՈՎ

կոնֆի սսկորներ, կողեր, կոշտուկներ, ոսքեր,
որ մթում սվլում են կրկես, սերտած սյթուքեն,
որ լորձունքը հատուն հոսի կուրորեն,-
երգեք, ընկերներ, հետադարձ կապի
խորացման համար:

Սուսերների միջես ոնց հայելու թիթեռ՝
արտաբերվում է մեր խոսքը համառ,
բայց մեզ իսկ խորթ է քայլը մարզական -
դիմակ սրամարտի, ուսեր հաղթական,
երանայթյան տակ մոդելն է դողում,
թավալվում մաքուր, կոկիկ անկողնուն:

ԵՐԿՈՒ ԳՐԻՄԱՐԱՐՈՒՀԻ

մեռած ընկած էի սիկտիվկարի տակ
գիշանգդերը եկան հոշոտեցին ինձ

պառկած էի օրշի սառը երկաթադուռ
երկու գրիմարադուռի մոտեցան ինձ լուռ

գոտու տակ խրած սանրերով արծաթ
նրանք մարմինս գտան լուսնի վրա

մեկն ինձ գրիմեց հսկա ժայռի մեջ
մյուսն ինձ մատուցեց սեղանժամին գեշ

պատաս-պատաս արված կրծքավանդակը դեռ
հիշեցնում է ինձ կախված դղակներ

խսկ երբ խրախճանքին շեփորը հնչեց
մեկը սրասայր կացինը վերցրեց

գաղիաց արվեստի շողանքի ներքո
իմ քանդակը տաշեց բնորդասիրով

երկատվածությունս ինձ թողության մղեց
ինձնից առանձնացավ սյուն մի երկնադեշ

խավար լույսերով եւ շեղակի գնաց
ճգնավորների խուլ թափորը հանց

ԼՌՔՈ

ԹՎում է՝ ջրում իդամատ է փորված:
Լողալով գծում է ալիքներ փշուռ:
Ուշքն ու մարմինը սեղմված են իրար:
Ասես նա ելք է՝ ննջասենյակից՝ լուսին երկարող:

Թե ձեռք սուգես՝ ստորջրյա երկրում
կիտսեն քեզ հետ՝ գրով ձեռնասփիղ:
Ափին թփրտում է արգաձուկը թունդ
եւ սառչում, ինչպես բերդի բանալի:

ԱՊԱԿԵ ԱՇՏԱՐԱԿՆԵՐ

Օ.Ա.

Վաղ առավոտից խռիվ անցնում էին նրանք
փողոցով

աշտարակները ձիգ ու ապակե
կախված վիհի վրա

ուր աչք կտրի
թափանցիկ մեղուներ են իրենցից իսկ փախչող
դա հենց կապն է վերուստ կապը հանապազօր
կանչը պաշտպանությունը հարկավոր պահին

բոլոր կողմերից
ճկույթի միջով
տեսանելի են ծունկը եւ ցայլը
խաբուսիկ տափկնոցի
ապակե աշտարակներ
սրվակներից ու զգայուն գեղիկներից
միջին հասակից աննշան բարձր
կատարին դատարկ ջերմաչափեր

աշտարկը ինամբով փոխում եւ ըստ քեզ
հարցուկի նման կորանալով փափուկ կոթունի վրա
մտնում եւ նրա խորքը բաղդադատումով

թեթեւ վարդագույն է
ասեւ մայրամուտին նա կթառամի գորշ
տափաստանում

երանը հոտ է քաշում նրանից

նկատելով կոցումն ու բարիքն անկասկած
իրականում նա երթեւեկում է դողդյուն մետրոյով
միշտ քեզ հետ է եւ վարդագոյն է թեթեւ
ասպակե աշտարակներն անսովեր են ասես
բակում ժխորե

մռայլ առավոտ է ինչպես դարեր առաջ
նրանք գնում էին դեպի ճերմակալանջ լեռը
բամբակե
այնտեղ գառն էր կեցած չանգռելով կճղակն իր

հանդիպողից ինչ-որ վերցնում էին նրանք վասն
նմանության
նրանց կերպարանքն են առնում կատարյալ
նրանց աչքը բնավ չի տարբերում փռված
տարբերությունները
ասպակե աշտարակում անփոխարինելի եւ ես

գլխավորը չմեռնել ասպակե աշտարակում
թե չէ չես նկատի լեռնագագաթին վառվող
խրձամոցը

իմ հաշվով նրանք սխալվում են ավստի
ահալոր է շատ սխալվում են նրանք

նրանք բարձրացան լեռան հորատանցքը
եւ նույն ընթացքով վիժեցին ցած
ափսոս քաղցրակեր ես եւ թթիւնոր համակ
աշտարակում քնած քեզ չի փրկել ոչ ոք

փախուստն աշտարակից հնարավոր է
մագնիսական ուժով

շրթանց սուրճով ոգեշնչելով եթերը ողջ
պետք է նրա հետ դեռ երկար վազել
որ գիտցես առանց բեզ նա դատարկ է եւ փուչ

փշրվում են նրանք եւ կմթնեն շուտով
նրանց բեկորները հագում-խշրտում են
ներքանների տակ
սպակե աշտարակները հակադիր են ծովին
գոլորշիացումը նրա սուրբ է ինձ համար
աշտարակներն այդ թափանցիկ են եւ չկան
խավարում

վերցրու սեւ սենյակի բանալին սեւ
եւ մարակը որով վարժեցնես նրանց խոր
սղոթներին
եւ սենյակը թող ցատկոտելով բոբջա
սերմնագրավի պես

ոչինչ դու չես տեսնի բայց ձայնը կլսես
կրկնօրինակներն ահա առանձնաձևում են
սպակյաներից
լանջն է պատվում նրանց բեկորներով անտես
ճերմակափառ լանջը հյուղակը դրախտի

ԱՐՁԱՆՆԵՐ

Այգու մեջ լքված կուռքեր նվաղուն,
նեց տղամարդը գինով հարբեցած,
եւ հողակոշտով ողողված բկում
երկայնաձուկն է ամրանը բորում:

Մեռնյան լույսն է ճակատին թառել՝
ողողված մսի գաղջ, մութ ցուցափեղկին,
թիկունքից երկու ավերակ անտեր
բիբերով իրենց մեխվել են մեջքիս:

ԱՄՅՈՒՏ

Ես ամայուսում չեմ սարել երբեք,
որ հիշեցնում է մի մեծ իսառնարան
բոջվոր անցքերով: Ինչ հասարակ ձեեր,
նրանց ծանրաշարժ հեղաշրջումները

կարիճի, կրկնակի օձի շորջբորո,-
թվում է՝ ոչինչ չիք հավելելու
հանգուցակետին: Տնցումները գետնի
դեմից եկողի գծերն են ջնջում:

ԵՂԵՐԵՐԳ.

Օ, ինչ մաքուր է մարմարահանքը վաղ առավոտյան
այն ժամին, երբ ես զբոսնում եմ հանգիստ գետի
եզերքով,
երբ գիշերային ժամանցից հետո գորտալճակից
վերել եմ ելնում նախշուն արկղիկներ:

Եվ հրաշալի տարբեր զարդերով պարուրված են
միշտ
նրանց հար կանաչ, ջղուտ, լպրծուն մաշկերը
խոնավ:
Ինչ գոհարներ են նրանց լեզվի տակ պահվում
գերգաղտնի,
զուցե նրանց մոտ խորհուրդ են հայցել
ավգուրները հին:

Ինձորն հայելու վախեցնում է իր ճարճասյունով,
թագն էլ, թվում է՝ միջուկի ճեղքում լուսահեղությամբ,
բայց սիրում են, երբ ջուրն է թիակի շուրջը պստվում,
և գետախորշում թուփն է չորանում
գարշահոտությամբ:

Օրիորդ ժամանակ՝ ասեղնագործում,
ամուսնանալիս՝ իսավիար են ուտում,
հանկարծ մահացու կռիվ կսկսվի, եւ դղրդյունը
կմարի կամաց:
Թե չէ՝ ինչպես որ Ռանթեի մոտ է՝ կստոչեն սառցում,
թե չէ՝ չեխովյան գիշեր կլինի՝ լի խոսակցությամբ:

ԹՈՉՆԱԿԸ

Կամունալ բնակարանում ներկարված «զինգերով»
դեղձանիկը՝ կետագծի իսկական պարկ,
վերնագգեստ թեյասեր տղամարդու համար:

Գեղգեղանքը նրա զարնվում է կրծոսկրին, սրվում
անսահման, եւ այն ուղղահայաց պահում է
կտցին իր հանց կրակ - ցատկիր իմ վրայով...

Երկնքի սիրելանը եւ փեսացուն ժիր -
դեղձանիկն ու մարդը -
խաչվում են հայացքով, սաես թելված են
նշանառու անցքով:

Ջայնեղ տեզն իր նետելով հեռուն՝
նրա դարձին է համբերությամբ սպասում՝
ազարտին գերի,-
կգա՞ արգայությունը, եւ ո՞ւր, որդիս...

Երբ մարդը կիթառն է վերցնում եւ ջանում երգել
ի սրտե, թռչնակը, ծիծաղից ու տանջանքից անել,
սպիտակ ճանկերով իր վանդակն է փաշում վեր:

Իրեն ինչ՝ երգիչը մարդկային,
թե ողջը նախամարդ կրոնանունեց է,
թեկուզ նա սունտուն է իր...

ՊՈՆՏՆ ԵՎ ՄՈՒՍՆ

Պոնտն ու Մուսան շողկատված են իրար լուսե
փարշակներով,
տարածության հագիվ աղմուկ սրձակող
կաթոցիկի հոսքով,-
պոնտն ինչքան էլ փութով է սուզվում
մոլեգնության մեջ՝
կանացի շունչն է այնտեղ անպատճառ սուլում
անդնդմեջ:

Մեծ կոշիկներն են իսկոյն դուրս սահում
նրա ուղեբից -
ջղային կոճերն այդ ունեն այդպիսի անսովոր
համար,
կինը նվիրած թխվածքն է ուտում մոլորավարդից,
երկնքով քայլում է կլոր ու ճաղատ մի
տղամարդ գառ:

ԻՐԱԿԱՆ ՊԱՏՆԵՇՐ

Անգո քաղաքից դուրս նետված որս ենք
փոխադարձորեն:
Միրում ենք քիչ մը խոսել սրբազան բաների մասին:
Այտոսկրերից բո հանում են ոսկու փոշեհատիկներ,
իսկը՝ սեխաձեռ, քայց արդարությունը չէ այստեղ
կարեւոր:

Ապագայում մեզ կվերաբնակեցնի աղյուսե
փլատակ-
պատն այդ, շարվածքը որի նման է կովերի նախրի:
Հատկապես պատը կմնա հավետ,
փոխադարձությունն իսկ
կփոշեցրվի ողջ աշխարհով մեկ, չգտնելով
մի անկյուն մշտական:

ԵՍ ՉԵՄ ԸՄԲՈՆՆՈՒՄ ՔՈ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես չեմ ըմբռնում բո ընտրությունը:

Ու՛մ...

Գիտության խանդավառի,
որ ծառի ձայնը ճանճից տարբերում է
սուսկ այն միջոցով, որ ձյու՛ն է
եկել...

Ոչ, այստեղ, կասեի, ինչ-որ դժոխքի
տունդրա կա փռված,
իսկ սմբած մարգարեները դիվային
սանրվածքով, ինչպես հարբեցող բաղեսամոլներ,
քեզ կորսան մեկնված բաժակների մեջ:

Այստեղ նային է անկումն ինքնաթիռի,
լուցկու, գնդակի,
կա մի դատարկություն, ու մարդիկ երբեք չեն
հիվանդանում,
եւ բո լվացված կիսադեմը՝ բյուր պայծառացմամբ լի՝
սովորույթի ուժով պահպանում է իրեն սլայդի պես:

Դու կարող ես փչել ուզածդ ուղղությամբ,
երկուսի տեղակ:

Իսկ ժամանակը՝ լոկ հաճույքի համար:
Ըստ դասագրքի հովազ կպատկերես
ձնակույտի վրա:

Նմանատիպը բնած է կազմին:

ԱԾԵԼԻՆ ՎԱՅՐԱԳ ՓԱՅԼՈՒՄ Է ԼՈԳԱՐԱՆՈՒՄ

Ածելին փայլում է վայրագ լոգարանում,
իսկ դու մենակ ես,
Փերզի պես՝ փրփոր տաղբերակներում
իհստ խճճված,

Եւ նուրբ սրբիչների շիկացած կտավը,
ուսերից երբ որ սահում է ցած,
բեզ երեսակայում ես դավաճան կանանց ընկերուհի,
որ չունեն ոչ մի գերող-սիրեցյալ:

Սառնամանիչին, որտեղ սառցակույտն է շռայլ,
եւ ուր ամբոխը բազմազան է, բան
աստիճաններից գահավիժողն, այնտեղ
մեզ միասնաբար սպառնվազրում են
Ժամն ու Աչքը մռայլ:

ԵՍ ՔԵՉ ԲԱՑ ԹՈՂԻ ԿՈՒՑՐ ԳԱՅԼԻ ՀԱՆԳՈՒՑՆ

Ես քեզ բաց թողի կոյր գայլի հանգույն,
ճարտար մի վարժով, ամաչում եմ հիմա,-
կոշիկներիդ բողերն օղին է արձակում՝
ծովափի տակից փչող քամի հանց:

Գիտում եմ՝ ո՛նց ես ուսփերդ փոխում:
Ինչպե՞ս ամենքը: Հա, անթերի ես դու հոյլ
գործում այդ:
Արեւոտ ճամփին երկչոտ ես եւ հում,
զզզզված, ասես նոր պոկված լյարդ:

Գեպի Ոչմիտեղ է Շուն-օղին լողում,
եւ առ քեզ Ոչ ոք նրան քրս չի տալիս:
Գու վեր-ուսփերով ես ջրի վրա բայլում,
իսկ մազերիդ մեջ կակղամորթն է լալիս:

«ԴԻՐԻՇՎԱԸՆԵՐ» շարքից

Եկատերինա Գրոբյազկոյին

3. ԱՆԳԱՐԸ ԱՂՋԱՄՈՒՂՋՈՒՄ

Անգարի եղջյուրները իրվել են դաշտում:

Բարձրության ցնցում, ուր նյութն անչափ
խիտ է ու սեղմված:

Կիսակառույց դիրիժավի ճակատային մասում
ասես լայնակի երախ է բացված:

Մենք օդից թեթև ենք, եւ ազատ ընկնում ենք
հորիզոնականով: Մենք լցնում ենք ծալերն ու
ծակերը մեծ:

Շուրջը դատարկ է, բաց պատուհաններով
կայարանի պես:

Լողում է դիրիժավը՝ որովայնի տակից
արձակելով բոցեր:

Այդ ո՞վ է ցերեկով եռակցման վահանի տակ
թափցրել ուղեղն իր: Գրպաններում իրված են
մրկած գործիհներ: Ամբողջովին ահա
անգարը փլվեց: Եվ թմրած ռոբոտները պահում են
ճոճուն փաթեթները դեռ:

Մարեց անգարը, չբացավ: Սակայն ինչ-որ բան է դեռ
անգարում շարժվում անկյունից անկյուն,
աչ ու ախակ:

-Ի՞նչ ես գլուխդ ճոճում: Ի՞նչ ես բայում սղոպես
նուբերով վեր...

-Ես փնտրում եմ դեմքերը սրբազան մարդկանց:

4. ՏԻՏՈՆՈՒՄ-ՃՊՈՒՌ

Ելնում է Էոսը, բրիտանացի երկու պատմաբան
Ժամանում են Քյոլն:

Ցուրտ քամին սձեռ շուրթերով իր փչում է
հին քարտեզի երկու կիսազնդերին:
Ծիծաղելով՝ գործընկերները իջնում են ուղղանկյուն,
երկնագույն դահլիճն արխիվների:
Հանց տանիքագործներ

Նրանց ձեռնոցները սահում-ընկնում են
պատյանի թեփածոփով՝
շփվելով երկար քաղտաքանիս, իսկ նրա տակ
իբր գնչուհին է:
Շարժվում է եգիպտացին, պարանն սանդուղքով ոնց,
շիկացած քարով,
որ շեղգծված է: Ծակոտկեն բեկորներ եւ ինչ-որ տեղ
հեռվում ճպրուն է ժրախոս:

Պատյանի ծալքում պապիրոս էն գտել Սապֆոյի
բողոք-ձեռագրամար:
Լացիր, շերտերի տակ մամլված փռվածք:
Նոր արհայության ժամանակների մոռացված
մումիան
հիշում է ցանցկեն տոպրակը մազի՝ տեսքով
ճպրու հանց:

Էոս բառի մեջ գործվում-ընկնում է դարոցական
փափուկ գունդը՝ գիրքուս,-
նրա հասարակածով դու կարող ես հպվել

բուն առանցքին Երկրի,- ստացվում է, այո,
մոնոգրամ՝ Էոս:
Մ.թ.ա, դարում, Եթովպիայում նա Տիտոնուսի հետ
խնդիրք է հղել հանուն անմահության եւ ստացել՝
«այո»:
Բարձրյալները մոռանում են հաճախ ամփոփել
գեները ծերության ու անկման,
եւ Տիտոնուսը վիսքադենցի գիտուն Ալգեյմերի հետ
աննկատ նետվել է դիրիժաբլի մեջ - աշտարակը
սառցե:

Ճպրուքի ձայնը ելնում է իրոք ոչմիտելից, եւ
օտարանում երկաթափոշում:
Սուսս, շիկավուն շպարը մաքրում են թղթե
անձեռոցիկով թաց,
կամ թղթադրամի տրցակը սեղմված է ամուր
մատներով,- եւ կյանքն է պարտակվում:
Տիտոնուսն իրեն զգույշ շոշոփելով՝ ճպրուքին գտնում է
ճյուղին կորացած:

Նա մոռացվում է, նրա մարմինն ասես
գրպանիկներից է բյուր...
Որտե՞ղ: Ո՞րի մեջ... Աչքատակերի մույթ
պարկիկներ կան, բայց աչք չես գտնի:
Բրիտանացի երկու պատմաբան Լա-Մանշից վերեւ
անհետանում են անձեւ-անանուն
հեռաստաններում:

6. ԹՂԹԵ ՕՂԱՊԱՐՈՒԿ

Տաբ քամի, ճոճվող սանձապարան,
ազդանշանային օդապարուկը
լողում է Երիզովի լուսամուտներն ի վեր:
Բոսորագույն պարանը հետևում է նրան:

Միջնորմները նրա հուսալի են թափցնում
տկարամիտներին ու կոյրերին խոնարհ,
որ ստանձում են տուփերը փխրուն,
իսկ քամին նրանց ներսն է թափանցում:

Հանգիստ ձգում եմ ներքնաձիգը ծույլ,
օդապարուկը փռվում, սպա եւ սմբոփվում է հեշտ,
անցումից անցում վերեւ են ելնում
միջաստղային չափը ճշտող էոններ:

Մերթ պահնտվում է երկնքում անձիր՝
թիավարելով դեպ իրեն կամ ետ:
Միլիմետրանոց մեկ քառակուսին
նա զգում է իր խոր ծավալի մեջ:

Համառում է, երբ իր դեմ-հանդիման
ամպերի գորֆն է մոտենում շտապ:
Ատամի վրա պահն է սրանում,
երբ գիտես՝ չեղիր դու նախահարձակ:

Ծուռ պոչով՝ ամբողջ Չինաստանով մեկ
դեզերող է պարզ՝ թուղթ, փայտածողեր եւ՝ սուփնձ,
եւ՝ ներկ:

Հեռանկարում՝ կնգումի մորթով կին է նա հարկավ՝
նուրբ եղունգների շոյանքից շտկված:

Իր առջև ցցված միջնորմները բիլ
թափանցում է նա գաղտնի սողանցքով՝
դեպ սպաստանը սխալ գոհերի,
սպահասպանների, նաեւ՝ մեր կողքով:

«ԼՈՒՄՆՈՏՈՒԹՅՈՒՆ» շարժից

1. ԼՈՒՄՆՈՏՐ ՀԱՏՈՒՄ Է ՄՕՎԱԾ-Ը

Ի՞նչ է անում երկնի սառած հովիտներում:-
Թ-ափառում է՝ ամեն ինչ հետաձգելով:
Մա արգելակված է... Ինչո՞ւ, ինչի՞ վրա: Մրա վրա,
ինչ որ ինքն է դարձել:
Մա քարացել է, որովայնի մեջ՝ խցանված լյուպին:
Մա հանդուրժում է օդանավը եւ բերանով որսում
երկու կաղամախի.- գնում է տերմինալ՝
լոկատորներով բյուրեղը հսկելով:
Մա երբեք չի ընկնում գետնին,
օդանավակայաններից գլուխ չի հանում:

Ի՞նչ անի գետինը... Երբ մի կողմ դնելով
բոլոր ուղղությունները, հրնթացս անդշում է.
կակասասերմի արկղում քթմնջում է,-
թող՝ զծագրերում Արմագեդոնն է դեռ,
ամբողջը սպիտակեցնում է՝ գրված ցեղի մասին,
փոխարենը նա օդագնացությունն է անհուշի
մատնում:

Մա զգայուն է, քան կապը անտես
կամ՝ երկնախորշից մերժված օդապարիկը:
Մա որսում է՝ ոնց են Գրենլանդիայում պայթում
գալար սառույցները:
Լուսնուտը տեսնում է՝ ոնց է մարգագետինը հենվել
խլուրդների մեջքի վրա:

Նա գիտե բոլոր երթուղիներն իր՝ սաես զույգերով
շարված ճոպանին,
բայց երբեք ջրին չի հարվում նա:

Եվ ջերմաշտարակներն երազների իսադադ
ակումբներում փակում են շրջանը:
Գիշերով փայլում է կոթողը թվացյալ:
Շրջանից դուրս՝ երկիրն է եւ հոտընթացը ցաւուցրիվ
եղած կառուցվածքների:
Լուսնտուն ու հովիտը իսաշվում են հանկարծ, ոնց
սկսվաւաակն է գլորվում մեկ այլ սկսվաւաակի ետփից,
նրանց համատեղման գոտին սպիտակում է
շուշանի պես:

Լուսնտը՝ գլխում իր հատու հրաման, լուսավորվում
է կապույտ տերեփուկի շողարձակմամբ,
եւ կծելով լեզուն՝ սաստում է իրեն՝ մի ցնցվիր,
պահիր հավասարակշռությունդ:
Այդպես զանգն է զգույշ՝ դուրս փշված թեթեւ
օդապղպջակի տակ:
-Հիմա դու գնա Արբատի հասցեով...
Ճամփին՝ տատասկափուշ, երազանքով լի կանաչ
սղբամաններ:
Մի քայլ մայթից անդին՝ եւ ճամփան է՝ քամու
քաղաք տանող:

-ՄՕՁԸ- Մոսկվայի օդակաձեւ սվտոճանասպարհ

3. ԼՈՒՄՆՈՏԸ

Գարշնե շուրթերով, կաղնեասղարթի պես իւշուն
մազերով,
նրա ակնոցները, նախ, մգացան դանդաղ,
ճերմակակաթով ողողվեցին սպա,
ուր սիրահարները իսաճանկում են իրենց քթերով,
ուր ուղղաթիւն է ծխահար շարժվում՝ չհիշելով գոնե
մեկին սիրոճար:

Ես գերանից թռա եւ իսաշիսաշի մարգում ծանր
տասպալվեցի՝
կրակմարիչ, դանակ նրան նվիրելու թաբուն
ցանկությամբ:

Ոնց շեմը սողալով հասող խեցգետիններ՝
երկու հավակնորդուհի մենամարտի ելան:

Լուսավոր ու կորսվող անվանումներ հին՝
ճանկառված՝ դպրոցական նստարանի նման,
երբ ես մայրցամաք եմ տեսնում Շուտանդիայի
Եւ Նորվեգիայի միջեւ՝ քարտեզում ցայսօր չգծված:

Գա թորած ջրի, սպիտակ սղմուկի մայրցամաքն է,
ուր չկա որ ջրվեժ, ոչ կրակ ու լիճ:
Մենամարտողները Ույալյումին գոնե վկա
վերցնեին:

Ավաղ, ինքնասպանությունը փախչում է ինձնից:

ԱՌԱՆՁԻՆ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՄՅԻՈՒՄ

Օրերում մեր այս, երբ հիշում ես մռայլ խաղաղիքը՝
բուռակ,
որ պատրաստում են հողերից ու ջրուս
թիկնալարերից,-
եւ ցողուններ կան, որ կարելի խժռել՝ կրծելով
հանգուստները պիրկ:
Նրա մռայլին ձեռավորվում են երկու ծնոս:
Պատվանդանը, որին ազատ հենվում է նա,
սրակիչ չէ, սակայն տակից հույս են տալիս,
եւ նա փուլ է գալիս, հանց չորսունները գորողկի
խաղում:

Մենք կարդացել ենք վիհերի մասին, բայց չենք
կասկածել, որ հորիզոնը այդքան խախտված է:
Հողն պեկոծվում է, ներքեից ճնշում
պատվանդանները, սսես հարություն են առել
բուռակները ընդերկրյա ծովի:
Գայրոցում խոշորացույցն ուղղում ես միջատին, եւ
թռչում է նա՝ չանցնելով այլեւս նախկին չափերին իր:
Ածխի շեղջի վրա ջովել են մի գույգ մոլեկուլներ,
եւ մենք ռունգերով զգում ենք՝ հարավն է:

Մեկնումեկն մեզնից տեսախցիկը շրջված կզնի՝
ուղղված երկնքին, մոլորակներին հետետելու համար:
Եվ օդապարիկը լռվել է քարե բակում իլլթիլթացող
ջրհորից վերեւ:

ԱԼԵՔՍԵՅ ՊԱՐՇՉԻԿՈՎ

Այդ լուսանկարը Երկիրն է սրել՝ պատվանդաններից
նեղված ու ճնշված:
...Երբ որ կոճակը կարում են վրադ, թելը կծիր-հատիր,
որ հիշողությանդ մեջ անցեր չմնան:

Եվ պատվիրակների մեկեն հայտնվեցին
կինոթատրոններում, գրասենյակներում ու
մարմնամարզական սրահներում լայն:
Անմարմին՝ նրանք շուկով ու հպմամբ խոստացան
կապել թե միավորել...
Այդպես դասակարգիչ Ռումֆիուսը կիզիչ
ինդոնեզական կղզում հարդուկել է սմբած հրեշներին
եւ շարել դրանք երկար լարի վրա:

Նրան հետզհետե ճահճուտի այդ ողջ սպանիչ
ճենճահուտը իրագործում թվաց մոռացության
տրված կտակարանի,
/չրավազանում ցած է գլորվել կզակի վրա, ձեռքերը
ջած ինքը՝ Լյուցիֆերը/,
որ մարգարաշտեր է լեցնում բերներերան, որտեղ
խուզարկում են մուսֆի դռներին:
Վառ կարմիր ձկներ՝ ինչպես փարաջայի
փռփռոցին ընկած:
Բնորդի լողված մեկնարկումները: Հաստումն
ոլորտների:

*-Պերդ Ռումֆիուս - գերմանացի քնախույզ,
մահացել է 1702թ., Ինդոնեզիայի Անբոն կղզում*

ՃԱՆԱՊԱՐՀ

Ռոտտերդամում, որպես կին, ես ինձ չափազանց
ազատ եմ սքսեղ.-
կիսաշրջագգեստ եմ կրել գուլպաներով, ես
մատերս եմ լիզել, ինչով՝ գայթակղի:
Այդ օրից նա ինձ կանչում է իր մոտ:- Եվ ահա
հագել եմ
թանկարժեք կոստյում գործնական ոճի ես սլացել
նրա բնակարանը նոր: Ողջ գիշեր
անդադրում չաչանակել է՝ ոգու հասունության,
մետաֆորների, նախկին կանանց մասին:
Ոնց եռչրով դադված՝ ես դուրս եմ նետվել դեպի
մաքուր օդ:
Ինչու՞ նա, որ այնքան նման չէ ոչ ոքի,
անդմբռնելի է ես,
խոսել է արվեստի ու այլ բարձահունչ թեմաներով -
ինքնին հասկանալի բաներ:
Հետդարձի ճամփին կատարությունից պոկեցի դեկր
ավտոմեքենայի,
եւ ինչ հիմարություն՝ քայլել կրունկներով, դեկն էլ
ձեռքիդ:

ԵՐԱԶ

Քաղաքն այդ հառնել է բամու վախճանին, ժամը
տասնույթին, դու ճշմարիտ էիր:
Կերոսինն աչոք շներ, ծխացող ջահեր,
նողալթիռներ:
Եղջերվի նայվածքը դատաստան է բացել եւ թողել
բոլորին՝ հանց մզված թայթամն:
Բազմահարկ ու խճուճ լաբիրինթոսով ձգվում էին
անթիվ շրջադարձներ:

Սոխի կլեպները թեթևորեն ընկան սառույցների
մեջ իրված նավերին:
Հաժանավի վրա հրազենատրան է սկսվում մանուկ
հրձիգների:
Պատերազմ է ահա եւ կրկնակների հապճեպ
ընտրություն:
Առաքելական ձկների որսն է - շոշափման գծով
ուռկանն է ձգվում:

Նավահանգստում կբարձեի վրադ կարտոֆիլի
կամ սոխի մեծ պարկեր,
քանի դեռ դու չես ծիծաղել սրտանց ու շնչացել՝
գնա դե:
Երուսաղեմը ոչինչ չգիտե անցյալի մասին իբրեւ իր
պատկեր, հեռանում է նա ահա իր գործին՝
ըստ կարգի 4D:

ԵՐԿՐԱՀԱՐԺ ԱՐՃԱՐԱՆՈՒՄ

Նա զսպանակը կույ տվեց ձեռքի տրանազավաթից,
մի արծաթ է այն՝ մեղմահեզ մարդուն
հայտնագործել,

աչոք հսկում է ճավեր-զինվորաց՝
լայն իտալաթի մեջ փակված փնթիից,-
ջագ-բանդը՝ ասես ետցասկ իրանձուղից -
ետնաթաթերին պտտվում են հա,
պարողք հագել են սնդիկե շապիկ:
Առաստաղն է սեղմում անճիգ-միալար:

Այնժամ Բուխարեստը արյամբ ջոկել է
ամեն իտնարիում, եւ դա՝ ըստ կարգի,
մարդն իր գարջապարը հավասար զգաց
խաչին գմբեթի, իսկ թիակները՝
ասես դյուրավառ բազմոցին հենված,
եւ այդ դիրքում նա, թույն պարապի մեջ,
աթոռի պտույտ-պատասխան փուլում
վերադարձվում է գունդ-արճարանին:

Մի ինճնասպան, որը կկվին է լսել,
ժամանակ ուներ՝ սուրբ համարվելու,
ըստ տակտի գնալ, վերջապես քնել,
բայց ոչ, նա մեկեն բարձն է դուրս բաշում
տակաշոր հագած, փոխելով ռեյիեֆ,
իսկ նա, ով ճամփով գնում է մեղստո,
նրա ոտի տակ ծառն է որոտում,-
թող իհիտ ծածկույթում վերադարձ փնտրի:

ԽՈՒՍԱՎԱՐՈՒՄՆԵՐ

Նավերի պողպատը նավթն՝ կճատ արեւի տակ:
Օդում՝ հանրագիտարանն է ծովհանգույցների:
Թակարդից նա ելավ, ով գիտե ելքը մոգակամ:
Մնացյալը՝ ինքնահնար՝ հարդուկված գլխի:

Վախեցրին հոտը՝ բշտով իջնող ինքնաթիռի տակ,
մատի մաշկակոշտը իր կետգծով ասես խիլ է
վազվզուն:
Միա բացվեց շասսին՝ երկու ձայնանիշ
երգարանի վրա:

Հարված թռիչքություն:
Ողջ է դեկապետը: Վերում՝ անհողմություն:

Երբ մագնիսական հողմը ջրմանուշակ գեհե՛նում էր
փնտրում,
առափնյայի ռադարները մտան թախծի
մուգ դրդա-
կետգծային սպիտակ քարտեզներին համը
մի վիժվածք էր սողում՝ սպակե սուրսայր
գունամատիտներով:

Մագնիսական հողմը բեռներն է բաշում,
իբր գերանկոճղեր,
հանկարծ գաղտագողի մետաղձողով սահեց
ուժը ոսկորների:
Փախուստ տալով՝ ափին շնթռկել է կատուն
բանակային:
Մոնիտորին հողմը եռակցում է տիղմը
նախշապակե:

Շապազնում են ջրին զինվորները, սատա՝
չեչոտ, անշարժ, կապույտ, կոփված ժամանակին:
Զողանյութի նման տրաբում է բարակ
իւեցգետնամաշկը հին,
որ գողից պոկվում, տափակում է քարին սեւ ու
ծակոտկեն:

Մեռիր ցայգին, երբ որ սաստիկ ուժասպառ են քո
մտերմիք:
Անհայտ վիժվածքը դանդաղորեն մետաղ
հոսալիտալ կիսուժի:
Գավում կզրնգան սսեղները՝ մեկ-մեկ պոկված
մարմնից:
Լեզուդ կթաղվի սվազների մեջ, որ ալեքախությունն
ես քաշի կրկին:

ՏԱՐԱՆՑՄԱՆ ՀՈՎԻՏ

/«ՆԱՎԼԹ» պոեմից/

Ես զենքը թափցրի, անջատեցի կապը եւ շրջվեցի
դեպի Տարանցման հովիտ:
Մնաս բարով, ծիծաղելի իմ առափնյակ:
Ի՞նչ եմ ես փնտրել...
Չեն սափ Կրորժենն ու Գարիոն: Հետագույց
հայելում ագռավն է կաղում, երեխն է
տալիս շնագայլը ծեր:

Լեռներում հովիտը պղպջում էր՝
ասես զինադադարների հավաճք լինել:
Մեղուն՝ գառիվերին, ցածում՝ գլադիատորական
դպրոցների բաց հրաձգարանն է:
Ենթակայանների սպակիներն են եւ
խողովակաշարերը՝ հարկ հարկի վրա:
Եվ նավթագործների սովերներով լեցուն
վերելակները կաթսան են ծածկել:

Հանց էլեկտրոնային երկու խուճուճ ոլորք,
նկատելով միմյանց՝
ի փոխ անհետացան ագռավների երկու
սովերները, սպա՝ շնագայլը ծեր,
ոնց էլեկտրոնային երկու ցուցանիշ, որ դողողալով
մաքրում են համառ մանրամասները:
Հովիտն, հակառակը, արձակվում է՝ նման
օդապարանի:

Եվ շրջանի ամեն տեղամաս ճշտիվ մեղսագրված է
ու նշագրված,

նա դատարկ է եղել, եւ առավելա՝
դատարկությունների հրաշալի կարգով,

ոնց խորանարդիկ՝ միշտ վեցի վրա,
կռահումն է հուշել
մնացյալ այն հինգ մակարդակների
կեղծության մասին:



ԱԼԵՔՍԱՆԴԻ ԵՐՅՈՄԵՆԿՈ

Ծնվել է 1950թ. հոկտեմբերի 25-ին, ՌԳ Ալթայի երկրամասի Գոնոշիխ գյուղում: Չարինսկ քաղաքում ավարտել է միջնակարգ դպրոցը: Ծառայել է նավատորմում, աշխատել Հեռավոր Արեւելքի շինարարական կառույցներում:

1974-ին ընդունվել է Մոսկվայի Գրականության ինստիտուտը, սակայն չի ավարտել այն: 80-ական թվականների կեսին Ա. Պարշիկովի եւ Ի. Ժդանովի հետ ստեղծել է «մետաֆորիստների» գրական ոչ ֆորմալ միավորումը:

Նրա բանաստեղծություններն առաջին անգամ հրատարակվել են 1987-ին՝ «Փորձնական ցուցափեղկ» խորագրի ներքո:

Վերջին տարիներին Երյոմենկոն հազվադեպ է հանդես գալիս նոր բանաստեղծություններով: 2002-ին նա արժանացել է Պաստեռնակի անվան մրցանակին:

Բանաստեղծի հրատարակած գրքերից են՝ «Ի հավելումն նյութերի դիմադրության»/1990/, «Հորիզոնական երկիր»/1994/, «Ինվարիանտներ»/1997/, «OPUS MAGNUM»/2001/ եւ այլն:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐՅՈՍԵՆԿՈ

Ձեռքերը՝ արմունկով թեորեմից ներս,
մինչ ուտերն է սուզվել, բայց վախ չունի, դեռ
հին ժամացույցում ավազ կա սորուն,
ինչքան որ՝ ստրուկ անտի թիանավում:

Դեռ լեի-լեցուն է մառանը գինու:
Մոռացված երկնում բյուր աստվածներ կան
եւ ուր - ամեն մեկին՝ ըստ հավատի - միտքը
ընդունվում է ինչպես մթին ուրացում:

Անպրոպաճեղքերին համընկնելով, երբ
ջրի շայունը կկախարդի մեզ,
ես ծանր ու սպիտակ այգիները մեծ
կշարժվեն հեղուկ շոգենավի պես,
փակե՛ք ծխախոտի տուփով գիծ-շղթան,
ուր «Բելյոնորը» ամպերմետր է հանց...
Օ, ինչ հզոր ու սադափաստես է
երկնում սկիզբ առած միթոսը դեռ...
Նրա համար եմ ես հենց անել ու
սեղմել ոտնակը ադոս՝ վերեւից,
որ մանրակներս կցեմ ի վերջո
այգուն այս խոնավ՝
հարմար մի դիրքից:

Ջույզվում-պարում են եւ սողում պատից
կանաչ թվերը, պատերն են զարկվում:
Թափով, միանգամից խեղվում են գեներն՝
ավտոգենի պես ծափ տալով ստից:

Հետո ռեֆրենը երկատվում է քիչ:
Խաղակապուկը հանում են բեմից:
Փրփուրն է լքում տիկինը խաչի,
եւ ծնկի շուրջ է փրփուրը կիսվում:

Պոլովեցկյան խան, քնի մահճիկ մեջ:
Անենքը՝ հարբած, կուշտ են, գրպանած:
Կտրված ծառի օղակները թաց
միգում շողում են՝ հանց սանդղագծեր:

Ա.Պ.

1.

Թե՛ժ արեգակի եւ լուցկու միջեւ տարածայնություն
այստեղ չկա:
Մինչաստղային ուղին, որից ծագել եւ միայն
ակամա,
եթե հնագանդ լինի մաշմշված զարդանաղերի
թվին ուղղակի,
փառք ասածո, արդեն գայթել էինք հեշտ դրանցից
մեկին:

Երեւի կալցիում դառնայի, իսկ դու՝ մագնիում
չբացող,
կնվաղեի ծայրահեղորեն եւ կտրվեի ծնկաչոք
խաղին,
խոր կլոմեի ասեղին, մոխրում, լիսեռին ձգող,
կգունատվեի, եւ՝ առնետատաքան, դեր կիսադայի
կինոյում ընտիր:

Վերձիգ անկյուններում, չարչարանաց այդ
ճիգերում վերին
հայացքդ կրկին վրիպած է եւ ջախջախված նրբին...
Երազը կտրուկ վեր է թռնում եւ կավճացած սակվում -
հարբեցող դասու, ձիու քայլ, նաեւ՝ երկվորյակների
առեղծված արթուն:

2.

Ճամփան ելնում է անտառից անձայր,
եւ նորից՝ կտրուկ շրջադարձ,-

մանրագարերով հրեական ջարդ,
թենիսի կորսեր անտեր ու արձակ:

Եվ իստնակցության ամպը երկերես
շեմին հառնում է ընդոստ ու անկամ:

Աթամայով խորունկ փշված է սսես
մետրոյի բուկը գորշ ու բետոնյա:

Խռիկաճեղքն ահավոր է շատ,
քան շրջանակը արբապատկերի,
մարգագնդերից անկարգ են նրանք
եւ իսկ են շարժից գորականների:

Ձախ ես թեփում, հանց վերահաս մտրակ՝
ձաղկում է քամին արնոտ լուրերի:
Թե աջ թեփվեցիր, պնդողակն է հին
պարույրը իրում ոսկորքը մինչեւ:

Հոգիս հանել եմ մինչ խորքը կավի,
մինչ զսպանակը սեւ ու սրբագան,
որ երկու կեսը հաշվեմ անսխալ,
եյնեմ մենմենակ

այնպիսի լայիրշ մի չինացու հետ,
որ ինչքան էլ դու ջանք-եռանդ թափես,
հանել չգորես, որքան էլ փորձես,
կրճիդ փայլվումն նետը խոյահար:

Չես ուղղի հարբած ժեստը քնահաճ,
լարված՝ հանց ճշտիվ սմանակաչափ:
Չշարժվել տեղից, որ հանկարածակի
տասպալվեմ նրա ճոճումի վրա:

ԱՆՀԱՅՑ ԶԻՆՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վաղուց ոչ ական, որ հրդեհ
չեն թնդում կեչու եզերքում,
բայց ինչպես Մինին-Պոժարսկին՝
կանգնած ես հայրենի հողին:

Հաղթական երգն է գալարվում
հարազատ չաղափ-գյուղերով,
սիրելի մայրերին անբուն
դու կտասս հոգիդ հավատով:

Անմռաց Օսկենցիումը հիշենք,
մոսկվացիք, Պետրոգրատը ես:
Զոուլին Լենցից կարող ենք
տարբերել, եթե կամենանք:

Թող որ՝ սիրանքդ անմահ է,
սերնդի անունն ես դու կրում,
եւ որպես անհայտ մի հյուլն՝
տարրերի Մատյան կմտնես:

Մանդելշտամի հետ իմել եմ Կուրսկում:-
Քրկեր, ախաններ պայթում էին վարար:
Երկաթե գավն է նա սեղմել ձեռքում,
լացել Մարինայի ծաղիկների վրա:

Մեր իրամատը Պաստեռնակը սողաց,
սասց, մոտ գաղով դատարկ փորի վրա.
«Օ, դաշտ, ո՞վ է քեզ ցանել ծայրեծայր
շաղվադած ու ծեր մայրներով այս»:

...Ռազմավար մոմի լույսն էր բլինդաժում,
գրկախառնվեցինք մենք բնաթաթախ:
Ճոճվում էր դաշտը միգահոտ, դժժում՝
մանկան օրորոց չտեսած ավաղ:

Անբնություն: Ետնաբեմ Հումերոսը գնաց:
Ջիանի ստանաներով լի եմ կիսով չափ:
Աշխարհները՝ հանց նագանի համակարգ՝
մեքենայի պես սատ գործող հստակ:

Յոթ շրջանի է թմբուկը կիսված,
բոլորին՝ տրված աճել յոթ անգամ,
ամեն ռասայի՝ ոռնոցի դրոշմ,
հասցնել մինչեւ լոյս - ինքնասպանության:

Պոետի խոսքով՝ «հաչոց ռետլվերի»
/եչեմ լուսանցքում՝ հաչել եմ ինքզինք/,
քաղաք-այգին, թե հանդերձյալ դրախտ
մտնում ենք, ըստ մեզ՝ հանց Փոքր Հաչան:

49 ստանա եւ սլաստսիսան մի սուր,
իսկ սա երկհաստորյա մեկնություններ ունի:
հասկացա՝ մարդը իջնում է հանց լոյս,
եւ ամեն աշխարհ կրակոց է մի:

49 ստանա եւ մի իոցում դառն,-
ու՞ր եք լողում դուք, Հեղինե՞ն դեպի...
Ուր էլ որ նայեք՝ փեշերն են նրա,
նրա ծունկն է ցից՝ ամեն աճյունից:

Ամեն ինչ պրկված է նրա բախտով չար,
ուր էլ որ նայես՝ փեշերն են նրա:
Ամեն գրույցի վերջն է Հեղինեն՝
ոնց սեռը փոխած պոետն է ստել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐՅՈՍԵՆԿՈ

Բայց Բուդդան ճիշտ է՝ միշտ հնար կա աստ,
ոչ ոք չի փախչի պարենատարդից:
Ես անգիր գիտեմ 49 ստանա,
պորտվեյն «777»-ի հետ չեմ շփոթի այն:

Ստիխը թե չի՞նի, հնար ունի լավ
ամեն մեկը: Բայց վերանում է այն սուլոցով բարկ,
եւ 220 վոլտը, 49 ստանաը,
եւ անգամ Բաբվի 26 կոմիսարբ...

ԳՈՂԱԿԱՆ ՍՈՆԵՏ

Երանելի է՝ հավատում է ով: Գիժ է երիցս,
ով մի անգամ տրված Երկրում այս չքնաղ,
սրհամարիելով ոգին բնության,
ցանցեր է սարում սեւ-մետաղական:

Աստված իմ, էլ ի՞նչ է սպասում նա համառ:
Տեղկոմը փակ է, տերը ընդմիջման ճաշի է հիմա:
Բառերը վազում են երեխաներ հանց,
եւ հանկարծ սառցին զարնվում ծնկահար:

Աչք կկոցելով, ծխելով խորհիր,
որ ամպից ընկած սղսղնին այս ժիր
գուցե կախված չէ պայմաններից, ուր

ասենք՝ զուգվում են ընձուղտ, գայլ ու փիղ:
Ու եթե միտքը համազոր չէ բառին,
այդժամ ինչո՞ւ ենք կայֆ բռնում իզուր...

ԱՆՀԱՆԳ ՍՈՆԵՏ

Մենք իրսում ենք աստ տարբեր լեզուներով:
Դու դիվոտվում ես, հանց ձիուկ խելառ,
իսկ ես կանգնած եմ պարանի դիմաց -
չեմ կարողանում տնետս կախել:

Նա ընկնում է ցած՝ ես որսում եմ այն:
Նախ, արի միմյանց ներենք արտագին,
բակենք հանգույցն այս պիրկ ու անիմաստ,
հանգուցենք նորը՝ մի ուրիշ ձեռով:

Բայց այնպես, որ մենք իրար չդիպչենք,
որ չվնասենք ձեռքեր, ոտք ու վոր:
Վերջապես կոկորդ չկտրենք հանկարծ:

Որ ամեն մեկը, ով թռչում է դեռ
այս անծայրածիր թռչելի երկնով,
հեռուն միշտ թեի, ուժ ունի որբան:

ԵՐԵԿՈՑՄԱՆ ԱՈՆԵՏ

Գաղուկ ծաղիկներ, ես սիրում եմ անգեն
Նայել տարածությանը, որ ձախից փակ է
լվածաղիկներով: Թորշունել են ձախից,
աչից՝ քնաթաթախ սատղածաղիկներն են:

Երեկոները ես սիրեցի նայել՝
ոնց քկերախի խաչմերուկում չոր,
կրկներգի նուրբ թելիկով իջնում են
ծաղիկները՝ ինչպես շող-վերելակով:

Այդժամ հայացքն իմ, իր երկարության
մեկ երրորդով սկած, ճոճվում է անվերջ
ուռկանի նման՝ կախված մեր միջև,

արդեն մասնակի հաստված այն տեղում,
ուր կոկիկ դրված մահը անանուն
իր շուրջն է զննում չաված աչքերով:

Ես հուշարձան եմ ինձ...

Բարի եմ, գեղեցիկ ու լավ,
ինաստունն՝ օձի պես հարկավ:
Կնոջը երկինգ եմ թռցրել,
եւ իմն է այդ կինը դարձել:

Երբ ես «Մասանդրա» շուրջ
հասում եմ ռեստորանը լայն,
հարթած՝ դեսանտային հանց,
եւ ճարպիկ՝ քարայծի նման,

մատներով մեջքիս են խփում,
եւ ինձ է շունչը հասնում.
Կնոջը նետել է երկինգ,
եւ կինը կախված է երկնից...

Ձանթ չէ՝ խոստովանել ձեզ -
բոլորը կանգնում են, երբ ես
մտնում եմ, գրկում են ինձ պինդ,
համբուրում ու փող են տալիս:

Ձանձր ուրախ են դառնում
եւ սսես մի փոքր հարթած,
երբ ես կարդում եմ բեմից
լուրերս անիմաստ կովից,

եւ գործը ծեծի է հասնում,
երբ որ սարիները հետո

հիշում եմ մարդիկ ինձ սրտանց
եւ վիճում՝ ո՞նց էի հագնված:
Վճռական, փութկոտ, ածիլված,
ջղերս մի կծիկ դարձրած՝
նախարար կարող էի եւ
աշխատել, նաեւ նավարկար:

Յերեւ ձեզ երեւ օրինակ.
կարող եմ արդրտների անել,
անգիր եւ Հումերոս կարդում,
օգանալ եւ վայրէջքի տարել:

Մի բանում մեղա եմ գալիս
եւ անկեղծ ստում եւ հիմա.
տիեզերք չեմ թռել, քանզի
ծիում եմ վաղուց մոլեգին...

Իհարկե, ուզում եմ հավետ
աշխատել, ապրել, սովորել
ի փառս նորեկ սերնդի՝
հերգելով դետեկտորը ստի,

որպեսզի ամեն ոք նորովի
ի գորու լինի ստելու.
կնոջը երկինք եւ թռցրել,
եւ իմն է այդ կինը դարձել:

ՏՈՆՎԱՃԱՌ

Սալառնում է սալառնակը կորսաթաթ
եւ պտտվում երկնածովում մարզական:
Մերթ լռում է՝ հանց կշեռքի սեւ պաք,
մերթ երգում է գնդակի պես իոյսահար:

Պրոպելերը՝ մրգաջրի հանց կորիզ,
մետաբաշտի պատաստոտուն՝ ունկերում:
Հատակն անցավ: Հավերժական շախն է ուր՝
ինչգին՛ք՝ սսես հավերժական մի շարժիչ:

Միմյանց վրա ընկան: Խռիվ, անշապիկ:-
Կորիզի եւ շան արանքի տարածքում
տիեզերքը բենգաբաբից մեծ է քիչ
եւ տաք՝ ինչպես՝ ծովը, ինչպես՝ նեղ աճուկ:

Փայտի երեկո: Աղջամուղջ: Անդորր:
Խախտված, երկարուկ կովեր անանուն:
Նրանց փորերը՝ արևոտ ու թոսոր,
թրիֆն ընկած է՝ հանց շքանշան:

Պատուհանից դեն՝ անտառ ծավալուն:
Հանց ձվաբջիջ: /Հանց կրծքի դողոջ/:
Ուղղալարն է նրա ներսում չարգործուն,
իսկ ձյունը նստել է նրա փռվածքին
դիրիժարը ննց:
Չընկնելով, ներքե չգուժելով, բայց
այնպես է խնրվել ցանցաթաղանթին,
որ գետնի բոլոր տեղամասերը
նրա հետ ճոճվում են ընկած քիվի պես:
Եվ ամրանի հանգույն արմատների հետ
նրանք մտնելով են մեծ արձագանքում,
խիտ ավելի, քան շքանշանը, եւ ծանր՝
խարսխով խոշոր վահանակից...

Այդպես ձգվում էր անտառը
սպիտակ էլեկտրագնացքից,
եւ ներս կիսվելով՝ աշխատավոր մարդիկ,
երբ ասացի նրանց, սեւեղեղին վրաս,
եւ ավելի նրաց
ծխախոտ ու լուցկի:

Երեկոների թանձր լուծույթում,
ուր ոռնոցն է ձիգ պատշգամբների,
եւ փայտե մութն է աստիճանների՝
նրանցով իջնում աղաղակի մեջ,

մասնիկավորված, ճշմարիտ մեզն է
ճոճում լսալսերե ճոճանակը սեւ,
լսալսերն է ճռռում, նրբատախտակե
նրա լույսը չար դողում է՝ ինչպես մանուկ
մի շաման:

Տկարություն: Եվ մրգաջուր համով:
Մի մեծ ձայնավոր երգում է կրքոտ,
երգում՝ մրսում է ոտքը կծկելով,
կեսճանապարհին սառչում է մեկ-մեկ,
երբեմն ճամփով ցուրտ ու նվաղուն
մի կտորաշեն ինքնաթիռ է սուրում...

Ռացիան երագի, Ֆերմոպիլների հոյները նաեւ -
մանդապատում հուշ՝ մտրակով աճած,-
թփերում մեղքի,
փայտամածերին հոյժ կասկածելի,
դրսում վար իջնող ձնափաթիլում:

Այդպես ճեղքվում է սառույցը, սառչում
չափը գրկաչափ եւ անկյունները մույժ ու ուղղաձիգ,-
կողմնացույցի մեջ չեն սալում, նաեւ Դեկարտի
մոտ են
մոլեզվում, թռչում սղոցի տակից...

Վառվելով, սպիրտը՝ ոնց պիտներուհի,
որ հուզվում է խոր, երբ խարոյկի մոտ,
ամոթից սատտիկ կարմրատակելով՝
վզկապն է փորձում կապել անթերի:

Վառվելով՝ սպիրտը նման է խուսիս
խուլուհամրերի, երբ բնից առաջ
նրանց գրույցը՝ հանց գունանկար,
խամրում է, հենց որ անկողին են մտնում:

Վառվելով՝ սպիրտը նմանվում է ջրին:
Վառվելով՝ խուսքը սպիրտ ոնց լինի:
Ոնց խփված մի գամ, արարչից անտես,
փափուկ ներմխված ազատությամբ մեջ:

Անդրդվելի են չափերը հոգու:
Անանցանելի է Կարակումը նրա:
Ձախից՝ բաղդատում են ինչ-որ սանդղակներ,
գոռում են աջից՝ մոլորվել ենք սատ:

Իսկ վերում, լարված լռության ներքո,
հոյն գիտունները անհոգ հայացքով,
Էգեյան ծովի ժայռերին նստած՝
մատիտ են սրում ծանր ու գունավոր:

Անդրդվելի են չափերը հոգու:
Օրհնյալ են նրա միջանցքները մութ:
Մինչեւ մի վշտից մյուսին ես անցնում,
հարկավոր բաժնում՝ չկա ոչ մի շունչ:

Գոյել, բայց Էդ ի՞նչ տանձիկով պատռա...
Տափտու վրա ենք ողջ փողը մսխել:
Լոկ սղերսում ես հանդիպած տան մեջ՝
վերցրու ամբողջը, լոկ լույսը թող վառ:

Ե՛վ Շուքերտն է ջրին, ես Գուշկինն է սեռով
պիրկ ու մարմնացած:

Ե՛վ Լերմոնտովի աչքն է՝ իսավարին վարժ ու
ակնդիր:

Ջեզնից եմ սովորել, ճյուղթիներ օրհնյալ՝
առանց դանակի խոնարհվելով շարքին:

Մսես կախված եմ ես բորբոքավուն
հասարակական գուգարանի բովում:
Ձեռքս մինչ արմունկ կոյախյուսում է արդեն
ընկղմված

եւ սուզվում է մինչեւ ուսս արեւհար...

ՊԱՐԶՈՒՆԱԿ ԽՈՂԵՐ

Ապուշություն՝ հասցված ավտոմատայնության:
Ցրվող փոթորկի ամպիկը վերջին:
Օձ-Տղա՝ ծեղից թմրախտո ծխած:
Ավտոմատիզմ՝ հասցված ավտոմատայնության:

Լուսնի տակ կյանքը պարզ ու հասարակ է:
Ամեն անկյունից Ռուսիան ես գիտեմ, եւ գարշելի է:
Խոհ եմ խորհում ես՝ թռչելի արագ չուզում ռելսերով:
Ողջը՝ պարզունակ: Եվ առավելս պարզունակ է
պետք:

Մեխը ինքնիրեն մեխվում է կոճղում
կնճռոտ-կատաղի:
Հարբած տարածքում հեռանկարային է
նողազգիծը սուկ:
Զինվորն սսիդոլով վահանակն է մաքրում
երկար, տաղակալի: Եվ առավելս պարզ
ձեռով է պետք:

Բաժանման գծիկը մնացորդ է կանաչ մուգ ու
անջնջելի,
նղեղն ուռչում է թռչելու պատրաստ, հանց
գերթափանց գունդ:
Թեքվածք չես տեսնի տախտակսամածին
ավիակիրների,
ճիշտ դատվածությունն է ամենից անկեղծ բախտը
աշխարհի:

Շիկամորուս ընկեր՝ գերմիջաթափանց ու
գերիշխող գեր,
խփում է խունուճի աճուկին, ասում. «Ինչո՞ւ չբանալ»:
Հանճարեղ բանը պարզ է, բայց ահա ինձ
այն չի հասել:
Խորհիր՝ հարվածը պարզունակ է շատ եւ միշտ
անտեղի:

Տարբերությունը «մոսկվի» բանամեկի եւ սովորական
նայն խաղի միջեւ՝ որ «մոսկվիեր» կարծես
պարզմիտ չէ,
ինչ-որ հատակ է, անձնական, ճշտիվ...
Եվ պարզունակ է, ահավասիկ, հա, պարզունակ
անչափ:

Արագ ընթերցման պահին կարելի է բանալ
միջանցքներ
եւ ութնյակներում հանճարեղ ու պարզ,
եւ մեռյալ գոտում:
Ամեն մի կոսմոս՝ նախատեսված պարզ հատումի
համար,
հասարակ է շատ, բայց ճիճունները պարզ են ավելի:

Խիստ երկրնատրամբում դու խիստ մտքե՞ր ես
որոնում անբուն:
Ծարավ ես տափակ որոշումների, ո՞չ արարչական...
Տանիքից աղյուսն ուրիշ կերպ է միշտ խնդիրը
լուծում.
մաքուր, թափանցիկ, անմտորեն եւ հեռանկարով:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐՅՈՍԵՆԿՈ

Մեկը կտենչար ծառի պես լիներ կանաչ
ճամփեզրին:
Ես կտենչայի՝ իռզի պես կանգնել սաշտակի
կողքին,
պարզ հոգիներին սեղմվել ու լինել ջինջ ու չունեւոր,
եւ պարզունակ, ոնց՝ ցցված ոսկորը ջարդվածքում
ներքաց:

Երանելի ու օրհնյալ կիրակի.
Երբ կրկնափեղկերից այնկողմ սկսվում է
դանդաղ շփումը
բուժվող վերքերին:
Տարբեր մակերեսայիններ:
Ոնց գույգ ճոճումն գնացք:
Թե՛գուղու վրա, ի հավաստիք սսես՝
գոտկաստեղից ծռված:
Եվ ճյուղերն են շարժվում,
ինչպես արյունը զարկերակի մեջ՝
ինքն է վերածվում արյունաբերի՝
վերձիգ երակները հաղթահարելով,
ձայնարկությունները երկար-եռանդուն,
ինչպես մեղալի պարզ կողապատկեր,
վերջավորություններ հոլովաձևերի,
շնչելով նվազ տարածություններ:
Ոնց առնչական կասկածներով բյուր,
ոնց կասկածելի առնչություններով -
հանկարծ ցնցվում են ուղղական կարգում,
արդեն ետձգված հանգամանորեն...
Ախ, մեսսադական թվականներով՝
ջանքով ուղղորդիչ,
որ ժամանակը կդառնա երկար
եւ հույժ պարտադիր...

Կերոսիւնի նման քննվում է դյուրին
լճի մակերեսն անտառակալուն:-
Մռնակ ես նետում - ծածաններ են էլնում:
Երեքանոցով՝ ձկներն են էլնում Էժանագին:

ՀՈՔՈՒ - I

Բացել եմ պատուհանները:-
Թող քամին վազվզի սենյակներով՝
հանց կենտրոնախույս պոմպ:

ՀՈՔՈՒ 2

Տոթակեզ կեսօր:
Գինու շիշ եւ թոցնում
ունիվերսամից:

Գիշերն այս տալ է, ինչպես ռադիաստոր:
Նման գիշերներին՝ նման մասշտաբի,
ես մոռանում եմ, հանձարեղ եմ որ,-
լիրիկան խեղդում է, հանց հարթած կնիկ:

Աստղերը մեխված են թույլ ու անբնին:
Նրանց ռեսինե լույսն է աղոցված:
Մերթ անմատչելի է, մերթ՝ գորշ-գետնամած,
ոնց շտաբի պետի ուսադիրներին:

Խաչքառի նման ձգելով իրեն՝
շոգենավն է շարժվում դեպ կառանագից:

Ցուցափայտը մղվում է հեռուները դեպի
ասեղնավորված քարտեզաշապիկով,
սուսերամարտի դիմակի, քամու
եւ առ երկինք հղված ասֆալտի միջով:

Ժեստերն այս՝ ծեծված հավանգի մեջ,
չուզունե սաղի ամանակաչափը,
սեւահողը՝ խոշորացույցի տակ լկտիացած,
ուժեղ են պտուտակի խոր պարուրակից,-
կապույտ պարուրակը
պտուտակի վրա:

Վարդակը խրվում է դեպի հեռաստանը,
լարվում է դոմինոյի արյունը բարկ:
Հնչունային ֆիլմի ծայրին հայտնվում է
անձրեւի տակ վազող որսաշունը թանկ:

Նկատել եմ՝ ինչքան էլ խնում եմ,
ելնում եմ, մեկ է, գինեմոլությունից:
Նկատել եմ, որ մե՛նք երկուսով էինք:
Ես դեռ կանգնած եմ այս ծայրամասում:

Կարող ես հոգիդ շտկել շուտափույթ
հոգեհանգստին, գայլականչը նախ:
Միսայմամբ նրան արձագանքել եմ,
փառք Աստծո, արդեն դրախտում է նա:

Վարագուրեի՛ն սեռով Բայկալը:
Մի թափից խեղդել սրեզիան ամբողջ:
Գազից թունավոր մարդը անընտել
բեզ վրա բաներ դեռ չի կարդացել:

Նույնիսկ կարելի է կայցնել մի նոր լար,
բայց արդեն դու չես կցակարելու
դատարկությունը, թե երկիրը այս
թողնել չես կարող մի երկու օրով:

Կարելի է աստղին վարդակապ դնել:
Եվ տպագրել ստիխների տարբեր:
Երկինքն անտառում արտացոլվում է՝
 հանց ծովում անփույթ,
եւ կանգնած են ձիգ ծառերը կապույտ...

Փոխզնդասպետը ինքնաթիռ նստեց:
Ռեակտիվ փոշին գետնին է խփվում:
Նա հիմա կտրուկ մարտական դարձով
Իսրայել է թռչում:
Ի՞նչ գիտենե՞ք մենք այդ խիզախ օդաչուի,
տիեզերքների պիոների մասին...
Տիեզերատորմի ծառայող էր նա,
իսկ հիմա մեկեն թռչում է մեզնից:
Գուցե ավելի լավ ե՞ք դուք ստում,
բայց հե՛հաթ չէ սա, այլ եղելություն -
այն, որ մարտական ինքնաթիռով նա
Իսրայել է թռել:
Գու՞ք նրան երբեք չե՞ք սիրել, իսկ նա
միջատղային վառ հերոս է եղել:-
Հիմա սաղում է նա Իսրայելում,
ուր կապիտալի կարգերն են իշխում:

ՋԱՆԱՅԻՆԻ ԳՐՈՂԸ

*Դ. Ռիդի «Տաս օր, որ ցնցել են աշխարհը»
գրքի մտախմբություն*

Արեւելքն է վառվում նոր հրացուլքով:
Ալեքսանդրյան սյան շուրջ ահա
ամբոխն է խմբվել:
Ես վեր կացա ու կացրի ծխախոտ:

Յունկերներից մի պառլամենտական
խնդրեց, որ իրենց չգնդակահարեն:
Հրացանները նետեցին նրանք
եւ խարույկի մոտ ձեռք տաքացրին:

Մենք կրկին առաջ մղվեցինք ետքից՝
մտովի «ոռա» գոչելով հախումն,
Ժողովուրդն էինք ներկայացնում,-
ուսապարկերն են ճոճվել ետեւից:

Մենք գրավեցինք Ջանայինն այդկերպ:
Եվ միշտ գրավված պալատ մնաց այն:
Եվ ռեյխստագի վրա դրոշը մեր ալ
վառվում է, ինչպես սրտադյունը մեր:

Երբ բախտաբերի ծածկագիրն է ճեղքվում,
երկատվելով նեղ անցումի վրա,
հանճարն է մարդկանց վրայով սահում
դեպի «ելք» թարթող գրությունը վառ:

Անեն համակարգ ներառվում է կողում:
Մեծ տեղանքները կողավորում են հընթացս,
արագ:
Կոմոդից այնկողմ գիշերասարքն է սուլում
սուր-բարակ,
դիողն է ծաղկում ճեփ-ճերմակ հոգում:

Ահա մի այգի՝ բանջարանոցով:
Մոտ մեկ տարվա չափ շուլալվել է զով
բանջարանոցից այնկողմ՝ թխենիս,
խոշոր ու սպիտակ, ինչպես ջրածին:

ՀԱՅԱՑՔԻ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

Ինչպես զորակոչիկի հասակն են չափում,
ինչպես քանոնն է ետ ու առաջ անում,
այդպես ձիգ հայացքը՝ պատուհանին հարմար,
ողջ աշխարհն է պահում բարձակի նման:

Այնկողմնային հայացք - Էյնշտեյնը ուներ:
Թեև ինչու՞ն է արժանիքը նրա...
Նա հանց դատարկ բաժակ, բարձակ է շրջել՝
նրա կառուցվածքը չփոխելով բնավ:

Աշխարհն անասան է: Կետերին ամուր:
Էական է սակայն հայացքի փաստն ինքնին,
սպա մնացյալը, ինչ տեսնում է մթում:
Հայացքի երկարությունն է հրատապը կրկին:

Նրա հետ արժե գնալ աղբյուր՝ ջրի:
Մի գնա նրա հետ՝ թղթի թափոն տալու:
Ու թե մկանունքով ողջ իրանը պատվի,
երկար հայացքն այդ կչվի մաքուր:

Այստեղից ինքնիրեն մեր հայացքն է ծագում
դատարկ հայացքի երկարության հարցով -
որ հանրագումարը ողջ հայացքների
երկարությունն ունի դատարկ հայացքի:

...Աշխարհն է պահում: Որ գյուղ-քաղաքների
մակերեսային աներեր մնա դաժան համակարգով:
Ռատարկ կիևթատրոնը: Հատակը խանութի:
Պատերից ներս մոռցված ամանակչափը գորշ:

Չճանաչված թռչող դու օբյեկտ,
ինչու՞ ես թռչում չճանաչված
ջղային մարդկանց վրայով՝
գեշ ծխախոտից ազդված...

Դու հարգիր շինօբյեկտ ու սուն:
Մի կախվիր մեր այգու վրա:
Թե՞ ջրածնային ռումբի գինն ես ճշտում...
Բայց մենք չունենք այն:

Թափանցե՛ր ես ուզում ինտելեկտի մեջ...
Միայն մի թափանցիր գաղտնիքը մեր:

Վհա իմ կինը ննջարան է մտնում -
Չճանաչված
Թռչող
Օբյեկտ է:

Հորիզոնական երկիր:
Աղոս որոշիչներ:
Այստեղ անհամաչափելի են
անկյունագիծն ու
կողմը:

Տունն այգի ունի:
Լուսամուտը՝ կոկիկ քառակուսի:
Ջրունը մաղվում է անկյունագծով:
Իսկ վաղը կույտի կվերածվի
այնտեղ, ուր կողմն է այլ:

Բայց գոյություն ունի քաջքը՝
անդունդներից շինված:
Այսօր հանճարն է հանճարեղ միայն:
Բայց նա չի հիշում ոչինչ:

Ճիշտ է ամեն ինչ, ընկեր իմ լավ:
Խմիր ցմբուր:
Տունը այգի ունի: Խշշում է ազատ:-
Եվ ո՞վ գիտե՝ ինչ է փնդփնդում նա
երազից անդին...

ՏԽՈՒՐ ԿՄՆԻՍՏԵՍՈՒՄ՝ ԸՆԿԵՐՈՋՍ

Մեզ խաղարկում են՝ նոտաներով հանց:
Մի մասին՝ այնպես, մյուսին՝ այսպես,-
դու կդառնաս մոլի հայրենասեր,
իսկ ես՝ բանաստեղծ վառ ու գերազանց:

Եվ կբայենք մենք դատարկ տարածքներով,
ինչպես ողորկած մանրահատակով,
ես ունի մեկը կհարցնի մեզ՝ ո՞վ է
գողի հանգերով պահմսովել այնտեղ...

Իսկ մենք կարծես թե էլ չենք նկատում,
ես խոնարհվելով շաքաթ օրերին
պատվիրանների վրա չորացած՝
մեր հորանջոցը չենք գայի արդեն:

Եվ կփակվենք մենք շրջանում չարյաց,
ուր մենք թերթային դարձադրձումներից
կառկայծենք իրար, բայց արդեն որպես
կույր նմանակներ արգո հիմարաց:

ՊԵՐԵՂԵԼԿԻՆՈ

Անտառների գիրգ գալվանապաստիկա:
Օդը լուծված է իոններով պաղ:
Պերեղեկիկիյան լանջերը՝ զծված
Ժամացույցների ներկազմի նման:

Անառանցում բնած են: Գրսում
դառը քամին է: Ժամը հինգն է աստ:
Կոնդը շրջանցող անցումի վրա
թռավ բուերի երամը բնաստ,

քամի բարձրացավ եւ դաշտը ցնցվեց:
Անկաշկանդ, պայծառ ու գեղեցկատես
Աշունն է ելնում գեխությունից հին,
սեղանի տակից ելնում է այգին:

Գաշտերում իստնակ եւ բոստաններում
ավերածության հետքերն է մաքրում
աշունը՝ մարդկանց, ամպերի հետ իստն,
լուռ թափառում է բաց ու ինքնակամ:

Անձրեւ է մաղվում... Լռություն է հեղգ
շտաբ-բնակարանում ծեր պատրիարհի,
իսկ անգլիական պուրակի մեջտեղ
Վեներան է ձիգ: Առանց վարտիփի:

.....

Ամառանոցում խոնավ է ու իսառն:
Կերոսինի բոյր-հոտն է ռունգերիդ:
Անձրեւ է մաղվում... Քնած են որդիք
օղի ու կոնյակ կոնձերուց մի լավ:
Խաչերից տարտամ թռչում են կորմեջք
ագռավները սեւ ու գաղտնակորով:
Եվ գիշեր ու տիվ գիտնականի պես
Պաստեռնակն է աստ քայլում շրջանով:

Աշից անտառն է՝ սպիտակ, ցանցի պես:
Ձախից զանգվածն է շիրմաբարերի:
Շունն է տաք ոռնում, եւ Ֆեդինը խեղճ
սակված նստել է կէշու ճյուղերին:

...Այստեղ իմեցի ոսկի զարեջուր՝
մարմնավորելով մահը, ոչ՝ կսկիծ,
բայց ինչ-որ մեկը մեկնված ձեռքիս
սեւ քար է դրել... ու մաղձի փշուր:

Խաղում է քամին, փեղկերն են զարնվում:
Իսկ կայսր ծռվում եւ ճռռում է մառ:
Իսկ գիշերները Ստալինն է շրջում:-
Վնասակար է հյուսիսն ինձ համար:

Հիվանդասենյակի ցուրտը սոսկալի
եւ հարվածը՝ չեն հնազանդ խելքին:
Կարկաստանի պէս կարված ենք թեթեւ
անընդհատությամբ ժամանակների:

Օստրովսկին այդպէս բուժակին ասաց
եւ իր մարմինը ծռեց հանց աղեղ,
սխալի վրա Պերովսկին շահեց,
ու գնացին մենք ճանապարհով այլ:

Եվ դնդողաձեւ, իսադուն ճամփին այդ
Բելոմորն է եւ Պերեկոպը հին,
եւ ժլատորեն լացող Բուդյոննին՝
Վորոշիլովգրադը մեկեն գրաված:

Նրա հայացքը ջրանցքն է գտել,
կապել ջղերը, արյունն ու հոգին,
ու երբ չոր հագն էր նրան չար ցնցում,
սղմկում էր հանց գրչատուփ լեցուն:

Հիվանդամահճակին դու էիր պառկած՝
արհամարհելով կյանքն հանգստավետ,
հրետանազարկերը հաշվում էիր, բայց
ըստ զարկերակի ու հրավառության:

Նա մագլցեց ու,- օրը երկուշաբթի,-
սյունասրահից հասցրեց կախել
Փուտբոլկան, ջինսը, շապիկը դեղին,
վարտիֆը՝ նման նուր սոսնձի:
Անենն ընկած է շփոթ ու խռիվ,
ինչպես կեսօրն այս անխելահաս,-
վոդոլազկայից, գուլպաներից եւ
հայացքս է տանջվում՝ դեպի ետ ուղղված...

Գարունը Սարատովում նման է Օդերի
գարնանը, գուցե՝ գարնանը Նեյսի -
տարբերությամբ, որ գերմանացիք են այնտեղ
գրոսնում,
բայց չեն սիրում նրանք տեղական գինի:
Այն տարբերությամբ, որ պատահաբար
թե՛ ձեռս առնեն թերթը մոսկովյան,
աչքս կվազի տղանց վրայով,
հազիվ նկատեն թվական ու օր:
Տարբերությամբ այդ: Եթե: Աստված չի
Սարատովում եւ Հռոմում նույնպես:
Ամենն այդ կարող է ժամանակ սպանել,
բայց դա ահավոր չէ ծխախոտափոխից:

Անհանգիստ լուսին:
Լույսը՝ դարչնագույն:
Միրում եմ քեզ, երկիր՝
բամբակ-սպականոց:
Ամենը, ինչ տեսնում եմ
իմ մոճիկի օրը
մի շիշ գինու շուրջ -
բամբակից է, հա, նաեւ՝ սպականոց:
Ապակին թափվում է
բամբակի հետ շեմին,-
օղակաձեւ ճամփով՝
սպիտակ քաղաքն է անտ:-
Վիթխարի սպականոց:
Վիթխարի բամբակից:-
Շրջանաձեւ սղոց,
լույսը՝ դարչնագույն:
Չի կարելի նրան չսիրել հոգով:-
Չեմ կպնի ոչ ոքի,
կտողամ սպակով՝
հանց բետոնասալով:

Երբ իշխանները երկրի վրաց
խորհուրդ են նստել խիճկալիով,
պտղունցը փակ են պահել նրանք
ին հասկացածով:-
Հավաքել ազգի բեկորները,
պտղունցում սեղմել եւ ապրել հար...
Բայց եթե վախը հաղթահարես,
բացես ձեռնասիղ աչքերիդ դեմ,
ուղիդ քո առաջ դու կտեսնես
բզկտված աստղը հինգթեանի՝
ճիշտ նմանությամբ սպանած մարմնի:

Անձրեւի շեղակի վահանով
ճնշված են դեմքերը մարդկանց,
հիվանդանոցն ու շրջկամի շենքը,
ուր ցածից տաղտուկն է ծառերի,
վերեւից՝ ճնշված են վահանով
նկարները փքուն առաջնորդաց,
եւ ինչպէս նախաքան ինձովս՝
«համաշխարհային պատմություն» հաստորին -
մասկված, շպրտված, մոռացված,
ռռնում է, ինչպէս տանիքից
նետված, կուշտ կերած, գազագած,
մոլազար փրշոտ պալեոլիթ,-
եւ դրված անկյունաշատի տակ,
փրցնելով գիշերվա փերթեր,
ծանրորեն շնչում է, իլլթիլլում,
եռալով իրար է կարում
գիշերվա փերթերը խոնավ,-
սեղմում ենք յոթերորդ արագություն...
...ճանկերով կառչած ավտոդեկին...
...եւ հանկարծ՝ ոչ մի հիշողություն...
ծանր ոսկորփին մեկի...
Տնցվում եմ, նժույգից ցատկում,
եւ գննում սք ձեռքս հեռոցով,
երբ ինչպէս մի լսկոտ ժպտալով՝
ՀԱՄԷՆԻՆ Է ՆԵՏՎՈՒՄ ԻՆՁ ՎԻՄ:

Անտառի սպակե-դասարկ ուրվագիծն է այնտեղ
փշրտվում,
սոսափում է իր եզրագծերով, սպա անպիտան
սաղարթին տրվում:
Ճամփի երկայնքով հեռագրասյունների բզզումն է
կախված,
որից ցավում է գլուխդ, ինչպես թույնից տրակված:

Օդն է փուլ գալիս, եւ իսպրիվում են կապերը
անծայր
ուրվագծի եւ ծաղկի անպտուղ խոկմունքի միջեւ,
եւ ակամա գետն է սահում ինքն իր տակով,
խշում է սպա, եւ համընկնում են ֆազերը նրանց:

Էլեկտրական քամին պիտո կապկապված է փուշ
հանգույցներով,
եւ կարմիր հողին, թե նրա վերին շերտը ետ տանենք,
վերծիգ սոճիք են, կտեսնենք, գամված
տակից հեղույսներով, պտուտակով կալե:

Ու հենց պատուհանին եղեմիները առկայծեն
երկշարք,
կտեսնեն՝ գետի կեղտակուր սջում
բանավանն է թրթռում հեշտին ու անհագ,
սղյուսի գործարանը անցք ունի կողում...

Հետո ինչ՝ այստեղ չեմ եղել մի ողջ
տասնմեկ տարի...
Աշնան անտառակ տանող կածանը մաքուր ու ջինջ է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐՅՈՍԵՆԿՈ

Այնտեղ բեկվածքը նույն տեղում է, ինչ ժադոբին
Կոլկան
խաղաղկի մոտ գլխիս արձիճ է թափել:

Այնտեղ իմ կինն է երկար բազմոցին ճաղկոսում
տրտում,
այնտեղ հարսնացուս նստած է ճոճուն մի աթոռակի:
Այնտեղ իմ մայրն է վայ տալիս կրծքին միգում
ակնակուր,
եւ պատուհանին հենված իմ թռչը ավերված օդի
միջով է նայում:

Ես մեռա այնտեղ երեկ կեսօրին,- լսեցի աղոս՝
ննց էր սաղարկով երիվարն անցնում իր լի
խոնջությամբ,
լսեցի նաեւ՝ երբ լեռը մտավ,
ննց ձիաուժը նրա թափ առավ, հանց բենգասողոց:



ԻՎԱՆ ԺԳԱՆՈՎ

Ծնվել է 1948թ. հունվարի 16-ին, Ռ.Գ. Ալթայի երկրամասի Ուստ-Տուլատինկա գյուղում: Նա ընտանիքի 11-րդ երեխան է: 16 տարեկանում պատանի Ժղանովը աշխատանքի է անցնում Բառնաուլի «Տրանամաշ» գործարանում: Ավարտել է երեկոյան դպրոցը:

Սովորել է Մոսկվայի պետհամալսարանում, բայց ուսումն ավարտել է Բառնաուլի մանկավարժական ինստիտուտում: 1975-ից ակտիվորեն մասնակցում է Մոսկվայի ոչ պաշտոնական գրական կյանքին: Նրա առաջին բանաստեղծական հրապարակումը եղել է «Ալթայի երիտասարդություն» թերթում, 1967-ին: Մոսկվայի գրական մամուլում Ժղանովի անունը շրջանառվում է 1978-ից:

Բանաստեղծի առաջին ժողովածուն՝ «Դիմանկարը», լույս է տեսնում 1982-ին, որը հեղինակին բերել է համամիութենական ճանաչում եւ մեծ արձագանք է գտել մամուլում:

1998 թվից Ժղանովը ակտիվորեն զբաղվում է լուսանկարչությամբ: 2002-ին Կիեի «Էկսար» ցուցասրահում կայանում է նրա «Այս օդի միջով ինձ նայում է Աստված» խորագրով ցուցահանդեսը: 2008-ին «Digital Camera» ամսագրում/Մոսկվա/ հրապարակում է լուսանկարներ եւ հոդված «Բնանկարը որպես խոչընդոտ եւ դրվագ» խորագրով:

Ի. Ժղանովը երեբեմն անդրադառնում է բանաստեղծական թարգմանությունների եւ գրական թեմաներով խոհագրության /մասնավորապես, Գերժավիմի, Բուլգակովի մասին/:

Փոփոխակիորեն ապրում է Ալթայում, Մոսկվայում եւ Ղրիմում:

ԻՎԱՆ ԺԴԱՆՈՎ

Ժդանովը արժանացել է Ա.Բելիի/1998/, Ար. եւ Ան. Տարկովսկիների/2009/ եւ այլ մրցանակների:

«Դիմանկարից» բացի նրա հրատարակած գրքերից են՝ «Անմանրելի երկինք»/1990/, «Հողի տեղը»/1991/, «Մարած կրակի ներկայությունը»/1993/, «Արգելված աշխարհի ֆոտոռոբոտը»/1997/, «Օդ եւ քամի»/2006/, «Մի երեկոյի գիրք»/2008/ եւ այլն:

ՀՈՐՍ ԴԻՄՆԿԱՐԸ

Կծածկեն հայելին: Մանկությունը մով
կայցելի հորս, չտեսնելով նրան,
կգա նա խոնարհ խոտերի միջով,
դեղնավուն դաշտի արահետով լայն:

Այրվող թեւերի հոսը կփռվի: Եվ փառքը՝
վառվող ճարպամուների դեղին հովտից վեր:
Ամենքին կտրվի անանց իրավունք՝
ընտրել հենց իրեն, եւ չի լինի գիշեր:

Չարժե ուժ դնել տափաստանում ամա -
նախշաշրջանակով կցոլա նա զով,
եւ դաշտը կտեսնի մեջքը հայրական,
երկինքը՝ ուղղանկյուն լուսամուտներով:

Լուսամուտից անդին՝ սենյակը նեղլիկ,
եւ կակաչագույն որոտով դաշտում
մի մանուկ է իսաղում, եւ անդունդը՝ լի
չոր թփուտներով, տանջահար է լինում:

Եվ շրջանակին իաշխաշն է գարնվում,
շրիսկում փոքրիկ քարկտորներով, եւ կժայթփի նա,
հարթ շերտիկներով լուսանկարը
հանց մի դեղին դաշտ՝ լուռ կմոխրամա:

Կպարզվի հայելին, իմանալով՝ անդին
աշնանային ջրով խորքը կլողա,
իրերը լվալով ծանրությունը կանցնի,
եւ լույսը չի իսամրի հեռավոր աստղին:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Հոգին թաղկանում է, եւ երկինքն է սմբում,
եւ աստղաց միջեւ բռնեցքն է սեղմված:
Օհ, ցամփց ինչպե՞ս ազատվել իսպառ:

Անճանաչ եմ ես:

Ասես ես չկամ: Ոչ ոք չի սպասում դարձիս երագած:
Ժամերն են վազում, ընկնում թիկ-թակից:
Շուռ տալ տունը, սակայն չըռչափել նրա

հատակը գորշ:

Ասես ես չկամ: Ունկս լարվել է ձայնիս ետեւից,
բայց ձայնը կորավ գիշերվա միզում՝ բունը

խախտելով:

Հոշոտեր նրան՝ ոնց գայլին՝ որսի

կատաղության մեջ,

եւ սիրտը իրեր մատներն աղյունտ:

Բայց ձայնը մարեց: Եվ մեղմ նոտայով

սովերում է նա, պարասպի խաղաղ անկումների մեջ:

Տերեւաթափ է գալարվում տեւորտ,

մղվում մաշկիս տակ:

Այնպիսի մութ է շուրջուրեք՝ կոպդ չես ուզում բացել:

Զգալ ինքդ բեզ: Գիշերն եմ դրդում

անհանգստության,

բայց՝ ոչ, գիշերը խաղաղվեց - արդեն հավատ

չունի նա:

Եվ ինչ-որ տեղ Երկրում, իմ ծննդից առաջ,

մինչ ճիչն իմ, մտավ շնչառությանս մեջ

տերեւաթափը հեզ - փրկությունս անանց:

Ես աշխարհում չկամ: Նա գիտե՝ ճիչը կլինի անկեղծ:

Զի կոհակվում ջուրը, ասես ունկ է դնում

ՁԱՅՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Ցավ, դու մնա սստեղի մեջ:
Քամի, մնա դու ձարստիւնջում՝
վախդուկ նժույգի:
Աշխարհ, թաք կաց հեռու՝ դրսում,
դարձիր անչափ լավը կամ վատ,
բայց չխուժես դու իմ հոգին:

Թող որ ես մտնեմ սստեղի մեջ,
բայց ի՞նչ շահ-օգուտ ինձ դրանից:
սռանձնություն չկա այնտեղ:
Ես կդառնամ քամին ձարստիւնջի
եւ այնտեղ՝ անցում սուր սստեղի,
լուսասենյակում ցածրիկ ու նեղ
եւ մարած լոյսի մեջ կմտնեմ,
մասնելով ինձ ոչինչ-անգոյություն:

Բայց բավ է իոցել
մեկնումեկին, տեսար՝
լոյսն է ողողվում ծովածավալ,
աշխարհն է զարթնում մարմնիս ներսում
եւ ձայնն է հնչում հոգեպարար:

Ինչ-որ տեղ ձիերն են ոստնում կարուկ՝
փրկվելով ցավից հալածանքի՝
հառաչանքի մեջ կորսված իսպառ,
հետքը կորցնելով մարգագետնում:

Սուտ չի՛ք այդպիսի խաբեության մեջ:
Ե՛վ վերբում պահած դովյունը, նա
ամբակների տակ կճգմի հար:
Ե՛վ երամակը իտլ, գիրկընդիսառն
բաշերին բախտի ծուխ կտանեն,
եւ ճանապարհին կժիկրակեն լուռ
խավադում կիտված դեզերը, հանց
կենդանակերպի նշանների պաղ:
Վերձանիդ դրանք անվերսպահ:

Ե՛վ կանխագագնամբ գերության՝ դուք
ծունկ ե՛ք չոբում, սակայն
խոտի դեզի մեջ՝ ոչ մի սսեղ,
ինձ չե՛ք գտնելու:

ՀՈՒՂԱՅԻ ԼԱՑՆ

Հուդան լացում է - թող ցավը լինի:
Նա աննեղ մեղքի կնիքն է դնում
դարձյալ ջրերին սառն ու անհանգիստ,
եւ իլանում են ձկները Բանից:
Լացում է Հուդան - թող ցավը լինի:
Արտագովում է նա ջրերի մեջ:
Եվ ալիքները թեաքախելով,
գլաքարերը՝ գորտեր շնչելով՝
հետևում են նրան:
Երկնակամարը թեփուկով է պատվում,
եւ արցունքներով լի ու հագեցած՝
ծուխն է քարանում:

Հուդան լացում է - թող ցավի լինի:
Առաջ ընկնելով Քրիստոսի վշտից՝
ձգվում է դեպի իր սասողը հեռու
եւ զգում՝ փուչ ու սնամեջ է այն:
Այնտեղ չիք լույս ու ջերմություն խորին,
լոկ մոխիր է մի նեխած ու սառած:
Նա ոչ արյուն է եւ ոչ էլ ջուր,
մեղքը լվալու ժամանակ չկա
եւ ոչ մի հնար:

Եվ մնում է լոկ իր ձայնին մերել
կշտամքանքը Բանի՝
հանց կրակի աղմուկ:

Երբ զարկված թռչունը մեռնում է՝ սրտում
լացում է անձայն գեղակը հոգևած,
որ երազել է ուրախ թե սրտում
սավառնել միայն՝ ազատ թռչուն հանց:

Ջուրը աչքերում չի սուզվում - թախծի նշան է:
Աչքերը դեմքի մեջ չեն սուզվում - վախի նշան է:
Դեմքը ամբոխում չի սուզվում - ցավի նշան է:

Քարայրի նման ցավը փորված է մշուշների մեջ -
գազաձեռն հայելում արտուռ ու ողորկ,
տատապանքի շեմին խռնվածների պատին:

Օ, եթե հանկարծ մեկնումեկը մտներ քարայրն այդ՝
իր նույն դիմապատկերով, նա կլսեր, որ
ցավը երգում է եւ ինչպես է դեմքը երգում
թարթիչներին:

Մեւ է նավթի պես, պատրաստ՝ ճայթելու,
նա պիրկ է տուփից կինոժապավենի,
ուր ամեն կադրում կակասն է թռչում,

ուր մաշկն է փոխում կակասն անդադար
եւ բմբուլի տեղ հայելին է շոյում,-
հայելին էլ սենում, գոլորշիանում է:

Դեմքը ամբոխում չի սկում, միայն հեռանում է նա:
Արժե ետ նայել, բայց մշուշներում՝
լոկ թիերի ճռինչ, ճողփյուն ու ճոճում:

ԱՇՈՒՆ

Ընկնելով՝ ծառաստվելը քաշում-տանում է
հտեհցը ողջ տերեւներին:

Գիշերը եկավ՝ ամեն ինչ իրեն մոտեցնելով,
եւ սովերներին իրենց ծանրացան
տները՝ հպման խորքը սուզվելով:

Եվ ժամացույցի դողանշը մթնեց՝
համր պատկերը տալով փոփոխվող
հեռավորությանն ու բաժանումին:

Թվաց՝ ոչոքի չի շրջանցել լուս
ներկայությունը մարած կրակի:

Եվ սուկ բարդին էր կանգնած մեկուսի,
միայն նա էր իր պատկերով լցված,
նա բարձրացրեց ամենից վերեւ
բնահաճության շրջունները տաք,
մատներով դիպավ լսողությանն այն՝
կրակի երգը ոնց կորավ բոցում:

Գերազանցել են խորքերը նրան,
նրանց ներսում էր, ոնց ամպիկի մեջ,
նա տերեւները սփերից հանեց
եւ սուր շարժումներ նվիրեց նրանց -
վերեւներ դեպի, ուր տանելի չէ
ոչ սահ, ոչ դատում, ոչ հանգստություն:
Որտեղ երկինքը գիշերն է շրջել՝
նրա մեկ աստղի նշանակությամբ:

Ուղղաբերձ գետը անձրեւի՝ առանց
ափերի, կորսվող մեր տեսադաշտում,
տերեւաթափի իշշոցն է լցվում
եւ հոսում քամու պոռթկումներով ցած:

Մա հոսում է հեռու դյուրաները ու
կանգնում մերձակա ինչ-որ դաշտի մեջ:
Հանց կլառնետի մեղեդին ի ներս՝
ամպերն են իրար վրա կուտակվում:

Մման գետեր եւ չեմ տեսել երբեք:
Ողջ լարվածներն ու հորձանուտներն այդ
հուշում են՝ առանց ոչ մի պատճառի
մարդն է նրա մեջ սուզվում հուսաբեկ:

Եվ ջրատղող լճափոսերն արդ
վերեւ են ձգվել, երբ թվում էր, թե
ոչ ոքի իբր բախտ չի վիճակվել
խոնարհվել ու լսել ինչն իր վրա:

ՀԱՅԱՑՔ

Հայացքն ուղարկվեց - եւ ծառը քարացավ,
մեղուն ինքն իր ներսում թռել-անցել է
ծաղկի վրայով, եւ ընկնելով իր իսկ
ծանրության վրա՝

նուգի տակ քարը շրխկաց ու սևկվեց:
Այնտեղ լռությունը առանձնություն գտավ.
Կեղերը ճեղքված է, բայց հյութ չի կաթում,
եւ կծված ինձորը ամբողջական է:
Ծառերի ներսում տերեւներն ընկան
հասակը աչքի՝ ձյան սպասումով,
որ գիշեր ու տիվ ձմեռ է, ձմեռ, ձմեռ բխառատ:
Զնակայտերին շեշտված հայացքի՝ միջատի թռելը,
եւ սառցա-կարմրավուն ինձորի ներսում
արեւածաղկի սերմի պես սեւ է Ծիր-Կաթինը սառն:
Նրա շուրջ տաղտուկն է եռում ու վառվում,
եւ մրջնի վախուկ շոշափելիքով
նա բիրբից դեղին օղակ է պոկում:
Ագռավի աչքին մրջյունը գոհ է,
որ սորուն ձյունում թաթիկն է մեկնում
դեպի վեր, որը այլեւս չկա:
Ես չկամ այնտեղ: Հորիզոնին խուսի
ծառեր կելնեն վեր ու կկայեն նրան -
եւ նրանց երբեք հասնել չեմ կարող:
Այնտեղ լռությունն առանձնություն գտավ,
իսկ այնտեղ իր հետ տափկնոցի է խստում
նա, ով հայացքն իր ի գորու չէ փրկել,
ով չթողեց ծառին մնալ ընկած աճյուն՝
Հուպայի սրյուն նուբում զգալով:

Հայելիներն են նվաղում, սպա սավերքը տիկնիկ
ծանձադուտով արագ շրջանցում են նրանց,
եւ միանգամից հիգ արյուն-մատներ՝ ոնց ջնջված
ցոլանք,
կթոթափեն լուսնի անպտությունը ճնշիչ:

Այդպես ստորգետնյա ցնցումից առաջ
կատուն կտռզի՝ ոռնոց-մլավոցը խառնելով փոշուն:
Թ-աղված ամպրոպը կջարդի Պերսեսի
վահան-հայելին,
եւ հարություն է առնում անձրեւը, ժայթքում
ընդերքից:

Եվ տերեւները չեն թոթափելու դողը սսեղյա,
եւ ձեռք չի մեկնվի, եւ բիր չեն որսա:
Անդ հանգափարն է տապակվում նավի
կմախքի համար,
եւ ընկոյզն է սստ գլորվում անդեմ գետի
երկայնքով:

Միս ճրոթոս թույլ ոգին հեռու կվանեն շաապ,
եւ սառույցի տակ գետը կսփոփվի իսաղաղ
ծփանքով,
եւ լացից հուզված ձեռքն անշոշափ
ալ օրորոցից կմղվի իտրքը իտնարի հայելու:

ԳԻՄՆԱԿԱՐ

Գու կարող ես լինել շեկ ու հավերժական,
երբ հայելու առաջ դողով անսկզկալ
սրտի խոր ցավից ճշաս դառնագին
եւ ձեռքից զցես սանր ու վարսակալ:

Այդպես մթնշաղին ճյուղերին են նայում,
նրանց անհատակ կախարդությանը,-
որ մաշկով զգաս քամին հմայուն
եւ նրա պաղած մաշկը բորբոքված:

Այդպես մերկացած ծառերն են նայում
տերեւաց՝ ընկած ջրափոսը խոր:
Այնտեղ, երեսի, կանչել են նրանց
ինչ-որ աղմկոտ հավատ ու սիրով:

Եվ սանրն է կողքիդ, եւ հայելին հարթ,
կողքիդ են ծառերն ու ջրփոսերը մութ,
եւ հայացքից ինչ-որ կայծիկ թափցնելով՝
գաղտնիքով են սպրում աչքերդ հուր:

Մաքուր հայելու մեջ ես ընկղմվում,
անկռահելի շուքի մեջ նրա:
Նրա խորքերը պաղ-արծաթավուն
մոմ ու սառույց են ասես նոր կակղած:

Առկայծող քամին՝ միշտ վերաձեւված,
խուժում է տաճարն անտի ու շփել:-

Աֆրոդիտեի նիւր հավիտյան
աննշմարտրեն ներկա է այնտեղ:

Նրա ժպիտն ու վրդովմունքը սին
լուսավորում են դեմքդ մթամած,
եւ մի անկյունում շողշողում է վառ
մատի դողով լի ոսկե մատանին:

Հիշում ես՝ ոմն հարսնացու ես դու,
օտար՝ սեղանի օրորուն ծայրին:
Եվ ժեստի կարմիր պատրանքն անբուն
լուռ փաթաթովում է հայեցող ձեռքիդ:

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

Անտառաշենին կանգնած ես մենակ,
ուր տերեւ ամեն ժառանգորդ է սպասման,
եւ քայլն ամեն պարզ է՝ վերջինն է հանգ:

Ներշնչանքը չէ կանգնել բո առաջ,
դու ներշնչման մեջ կշռույթ ես փնտրում -
այդպէս խոտերը, ամպերն ու ժամն են
շնչում համաչափ:

Գեմքը անձրեւի լացակումսած էր հեռացած օրից,
հիմա նա պայծառ ու գեղեցիկ է -
նրա աչոյք ես նայում ճյուղերին:

Խորանարդակերպ հայելին ես մտնում,
ուր շրշում է թռչնոց գիշերը թովիչ
եւ անցյալ ձյունն է շուրթեր խուտուտում:

Ոնց մահացու ձայն իսավարից թռած՝
դեռ անտեսանելի, բայց ծանոթ արդեն
մեկուսի խոսքն է թափնվում փռու մեջ:

Միրտը այդպէս չէ՝ կշռում բարախն իր...

Հոգին կգաղթնի եւ այն ժամանակ
վարար ջրերը կլացնէ խելառ:-
Քոյրը եղբորը կգանի հաստատ,
եւ հրաժեշտի ժամն է մեզ համար:

Ջրին կցնցվի օղակը նետված,
եւ այժմանան մի մոյթ կհասդեմ
կառկայծի եւ լուռ կժպտա սալա:
Քոյրիկն է նրան արձագանգելու:

Տերեւքը կրնկնեն շրշունների սակ,-
նա մեռյալ է եւ ճշմարիտ է հար:
Նրա աչքին ի՞նչ պատկեր է իջնում...
Ոչուրեք չկան կճղակ ու եղջուր:

Մի բաժակ, այն էլ վշրված է եւ
Ալյոնուշկան է հատակից նայում,
եւ քամին բոլոր ձայներն է իսռնում:
Մենք լուռ մտնում ենք խորքը շշուկի
եւ այնտեղ գտնում կանչող մեր հոգին:

Այստեղ օգնում է մեզ ճաճանչը վառ,
եւ գոյգի համար բաժանում չկա:
Քոյրը կգանի եղբորը կորած,
եւ հրաժեշտի ժամն է մեզ համար:

Չեն ընտրում նման գիշերը -
Որբ-Մստվածն է նրա ներսը մտնում,
եւ ստերին են սեղմվում գետերը:
Եվ աշխարհում ոչ մի լույս չմնաց,
երկինքն էլ հորդող անձրեւի չափից
վոգր է, եւ նրա ոտքերին կայած:

Եվ անկյունն այդ տամուկ ու մեկուսի,
փտող տերեւների աղմուկը աստ
մութի չէ՝ մեր մեջ են սպրում հաստատ:
Մենք հիշում ենք լուկ, մենք չենք տեսնում,
Սուրբին էլ անգամ չենք նեղում մենք,
լուկ սովերները կրմբունն մեզ:

Մեր մեջ անցյալը մնաց միայն,
դու ինձ հետ երբեք չես համբուրվել:
Դու վախեցած ես, թեթեւ ես դու:
Քո խուսերը բեզ կարեկցում են խիստ:
Եվ ոչ խավարի՝ բո ձեռքն ու դեմքը
իմ ներսում են սհա սպիտակին տալիս:

Մահանում ենք արդ քիչումիչ մենք,
մենք չենք եղել, ավստ, ուղին այն բորբ,
նրանք չենք տալու ավետիսներ:
Այս գիշերվա միջով՝ լացի պռոթկումներով,
սյլեւս իբրեւ ոչինչ վերահաս՝
մեր ոսկորների խարույկ կմտնենք:

Երբ պարզ չէ հանցանքը, մեղքից թանկ ոչինչ
աշխարհում չկա -
աստղերը վերել են նայում եւ ցածից չես
տեսնի նրանց:

Նրանք մեզ կողքից են նայում, երբ ասի մեջ ենք
գլխիկոր,
բայց իսկը՝ ասին են նայում, մեր դեմքը նրանք
չեն տեսնում:
Չի հուզում նրանց, թե հիմա ձյուն է, հազնվա՞ծ ենք,
տկլո՞ր,
ուստերը վառվում են անկրակ, թռիչքն է թեւում
անթռչուն:

Նրանց չի հուզում բնավ՝ ինչպես են իրերը ցույում:
Նրանք միշտ կողքից են նայում, փշեր են լույսերին
ցանում,
եւ լույսն իջնում է ձեռքին, որ փակ է՝ հուշից
նեղսրտված,
եւ նահանջում է ետ, բայց այնտեղ աստղեր էլ չկան:

Նրանք շրջված են մեջքով, չես տեսնի ցածից
նրանց դու:
Բայց ո՞վ է, ասեք ինձ, մի անգամ գեթ ելել վերել
կամովին,
որ տեսնի՝ ոչ թե քիվով ինչպես է ցուլանքը սողում
կամ ձեռքի ստվերը սրտով, այլ՝ նախաստիներ
դեմքի:

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

Թե ինչպես աստղերին կանչել, հայտնի է Տիրոջը
միայն:
Ոնց զսպել ցավն անհասակ, գիտեն լոկ աստղերը
կրկին:
Ոնց հարություն տալ սրտում սիրուն կամ
տազնասպին անծայր...
Լռում են: Եվ մենք կանգնած ենք մեր առաջ,
նաեւ՝ երկնքի:

Եվ ձյունն է անցնում մերկացած, անհուշ,
աննշմար, անխուս,
եւ երկարում է թռիչքը վաղուց մեռած հավերիի,
եւ աստղաց լույսը փոխելով՝ նախատինձն է
սահում տանիքով,
այլես չես զգում ես քեզ, եւ սին է արտաբավել
դեմքից:

Վառվում է սիրտը լուռ, աշնան հոգով,
ասես անտառի հայելում կարմիր
իրեն է նայել, չստին իր զգալով,
եւ խոսում է նա ցոլանքի հետ իր:

Վառվում է սիրտը լուռ, աշնան հանգույն,
ասես հայելին ծփանք է հուզում,
վառվող տերեւն են ասես բազմանում,
պարսպն է իշխում անտառի հոգում:

Եղև ինչ-որ բան եւ անցավ անդարձ,
լուկ սիրտն է պարսպել անտառի նման,
տերեւաց ինչ-որ խարկանք տիրացավ,
տերեւաթափում՝ ջերմություն ու լաց:

Միայն թե՛՝ ո՞վ այդ անտառ կմտնի՝
դյուրոված նրա ալ տեսիլքով վառման,
զգույշ, բանի դեռ հնար ունի նա
եւ դեռ չի չքվել անհետ-հիմնովին:

ԱՆՑՈՐԴ

Անցորդը մղվում է խորքը քաղաքի,
իսկ ելնում է նրա հակառակ ծայրից,
չկասկածելով՝ կենտրոնը վաղուց ետևում է թողել:
Նա չի խորհել անգամ,
որ գույգ ուղղագիծ հեռվում հատվելով՝
մոտեցնում են հեռանկարը,
որ երկնակամարի աստղը միայնակ
նեղացնում է հայացքը լայն:
Նա հոգնել է, ինչպես փղերի նախիրը,
որ դեգերում է Ալպերի միջով՝ քաջ Հաննիբալի
գորականների մտրակների տակ:
Նա գնում է, քանի դեռ մեղսավոր է համակ:

Դաստարկ սայլն արդեն ետևում մնաց,
եւ լծասարքը նետված է բեզմից, կրծքավանդակում՝
հույսի մարմնի քաղցր ածխակտորներ:
Դու գատված ես վազբից, ստվերի պես անբուն՝
ձիու հագուկապի դաստարկության մեջ:

Այդպիսին հայտնվեցիր այստեղ՝ տիրական
հարթավայրերի արձակությունում, հանց
խաբույկ նետված՝ վազբի օրենքին եղար հնազանդ:
Այս տեղերից դու հեռանում ես ահա
ժամանակից այն,
երբ սայլը խրվեց գիշերվա մեջ խավար:

Իսկ այնտեղ՝ սայլի ետեւից ճռռան
դեղձան մանկությունն է հեռանում տրտում
դեպի մութը, ուր երամակն է դրվում ոտները
վեր ցցած,
եւ զամբիկն է լացում հողմածիւի բովում՝
շուրթերն իր հպելով Էությանդ բաց:

Երկնային երամակն է խշռում ջրի պես,
այգաբացի հետ լեռը կմոտենա, երբ
խոտը վերեններում բույա-բույա կելնի դեպի
արեւներ,
եւ աշխարհի վրա աստղը կկախվի՝
ջահել զամբիկի ճակտի գիր ինչպես:

ՄՐՃԱՐԱՆ

Որտեղի՞ց նշմարեինք մենք, որ երեք կմ այստեղից,
ժանտահոտ սրճարանից այս, ուր ընկանք բախտի
ծուռ բերմամբ,
դաշտերում գնդային փայլակներ, զինվորներ
գորական եռֆի,
մեզ նշմար կտան պինդ ձողով՝ գարեջրի սապակին
ճեղքած:

Որտեղի՞ց իմանայինք մենք՝ մեզ հետապնդել է
թունոտ
ճյուղը մեղսավոր սնձենու՝ օշինդրի փայլը
մաքրելով:
Բայց երկայն կտրվածքի մեջ հեռախոսաջիլն է
աստղերը հյուսել,
եւ հանդիպումները՝ բյուր ու կանխորոշված,
խճճվել են այնտեղ:

Չի ճայթի լարը հորոսկոպի, քանի դեռ թվերը
հեռախոսի
ծիկրակում են սառը խցիկից բեռեռի կյանքի
մաքսամամբ:
Կթորթա թելը շապիկի, Պերսեփոնեն կճզմի
սնձենին,
եթե բաժանման աստղաթելը ձգում է կտավն
աննկատ:

Ղեռ պատրաստ չեն հուշ ու հանդիպման, քայց
պիտո են համաչափ անկման,

մենք այստեղ՝ կաղնու փշակում, կսառչենք
գայլուկով պատված:
Քայց ինչպե՞ս մարել փայլակները, երբ նրանց
խիզախման երկնից
հեռահար մի արկ է լարված մեզ վրա՝ որպես
թիրախի:

Թող էլեկտրական հուր մաշկով պաշտպանի
իրեն սնձենին,
թող գիշերը մնա իր տեղում, ոտքի տակ հիմքը
չքանա:

Օջախը գիշեր է ես խնջույք, մնացյալը
աշխարհ է օտար:

Մենք ազնիվ ժառանգն ենք գիշերվա՝
արժանի էլ հոսանք կտրելու:

ԱՂՈԹՅԱԼ

Ձայնային պատնեշից այնկողմ, ձնե շերտերում
օրհասի
լուսինը երեսփառված է սողոթող ձեռնատիկի մաշկով:
Խլուտը ծածկում է խլուտ՝ բազմաճյուղ աղյուն
ոթելով,
բունն այստեղ նման է ի մեջք ընկած դանակի կոթի:

Ձայնային պատնեշից այնկողմ ոլորքը դարձող
երամի
բո դեմքը կգծի լուսնային՝ ջրհորում լողացող
բանդակով,
դու նրա մեջ ես թափանցում իմ ու բոլորի մահով:
Հաղչում է ջիղը ցրտաշունչ՝ կանխելով ժամը ամեհի:

Հիշողություն՝ սգացող դու Մայր, դու հավրժ
ցոլանք ես հրկեզ
Աստծո ցասկոտ շեփորին, ես հույսն ես՝
ամեն ինչ ներող:
Կեցության երկար խցերում երկնային ջրեր կհեղես,
եւ Պոկրով կրկին կդառնա արծաթե հարսանիքը բո:

Գիշերվա շեփորի շունչը լույսերին դիմում է
խոսքով,
եթերը շրշում է խաղաղ փայտի կապտահոտ
փառքով,
կաթեկթող հեղուկը կփոխվի խորանարդ ամպերի
դաշտի:
Աշխարհին կներվի ճնշումը: Երկնքին բարձունքը
կներվի:

Ծովը, որ սեղմված է թռչնոց կտուցներում - անձրեւ է:
Աստղի մեջ տեղ գտած երկինքը - գիշեր է:
Անկասար ժեստերով ծառը - մրրիկ է:

Հոգիներով բզկտված քառակուսին - իսպ է,
Արծաթե փուշի մեջ օրորվող սեւը - իսպ է:

Մեղեդու պարույր լարիդինթը - սկավառակ է,
դեպի իսպ շարժվող ծառը - հատվածք է:

Գեգերում է հաղումաշ ասեղը
շուրջանակի, ճարճատուն վառվում է
սեւ ու անվառ հատվածքը կեռ:

Սլաֆավարն այնտեղ կրակ-թաթմաններով
կախված է ամայուտում մազերից իր սեւ -
սլաֆները խռնշտված են մթության մեջ:

Եվ սառցե այգում, հանց քանդակներ հեզ,
փռված են կախովի սպիտակ այգիները -
սեւ ու անվառ հատվածքներ որպես:

Եվ թրծվում է երկաթը ասեղի համար,
եւ լարը ձգում են գամերի համար,
սղոցում են ծառը իսպի համար:

Ծառեր կանխող ժեստը - տերեւ է:
Երկինքը, որ աստղ է քացում - լույս է:
Երկինքը, որ հոշոտում է մեզ - իսպ է:

Կթափանցի շողը պարապի մեջ սեւ
բախտասպավեն, եւ կֆարանա կախյալ,
եւ կջարդվի հանկարծ, եւ ճեղքվածքից ի վեր
լին կժայթքի ուժգին եւ պռոթկում վարար:

Կտանձվի ափերից ներս լինը փոփրադեզ
եւ լոյս կառնի դաշտից եւ լեռներից՝ աչք,
եւ կխեղդի նա ձուկ ու կենդանաց, կֆաշի անտես
անիրեղեն հեռուն ձգողության մեջ իր տափ:

Այդժամ կվերհիշես, որ կյանքն ի սկզբանե
դուրս է ժամանակից, թե բո սրտում չէ այն,
չկան գոհ ու մեռյալ, ում էլ նա բողբոջի
ծովերից ու արձակ անդունդներից անտակ:

Ամայի է ճամփան՝ ոչ աշխարհ, ոչ Տեր,
շողն է միայն եւ բախտն է բեկվում նրան,
եւ սլացքով իր գծում է նա ճամփա
եւ հեռաստան, եւ պահ - միտված դեպի իսավար:

Ի՞նչ է շողում այնտեղ, ի՞նչ մնաց սկզբում,
ի՞նչ է ձեռից ընկնում ուղիներին տարտամ...
Այդ լրաբերն է գալիս անդուր ու հոյլ՝
ցողի մեջ կորածի պատմության համար:

Ընկերոջս՝ Լ.-ին

Փորձիր ասել ինձ, որ ես ուրու եմ
եւ մասը մեկի, ընդ որում՝ ցավող,
թե չէ՝ ես հիմա ում ցավն եմ ընտել:
Ի՞նչն է ստիպում ինձ օտար բերանով
սղատակել ու ցնցվել ոսկորքով
օտար կեցության ծանրության ներքո:

Թվում է՝ մարմինս անձանոթ հոգու
ժամացոյց է՝ կորսված տառապանքի մեջ,
եւ միշտ կողքից է նա դիտում իրեն -
եւ առուծախը շարունակում է թեժ,
շներն են գրմամբ շնչառությունից իմ
եւ անգոր եւ փախչել, ինչպես որ՝ մեղքից:

Այդպես բաց թեւքի սեւ խլությունից
կոչ ու արշավի ժեստն է պոկվում դեն՝
զցելով թափանցիկ ուղեւշանները,-
եւ գետնի տակից, չհիշելով իրեն,
կարթնանա ցավը իռնչացած ափի՝
թաղված ցմախը ժամանակների:

Նույնիսկ արթմնի տեսնում եմ մեկեն՝
ինչն է ինձ ծանոթ անցնող մարդու մեջ,
իսկ նա երբեւէ չի հանդիպել ինձ:
Ասես ժամանակը շրջան գծելով՝
մատնախոտության բավիղն է իցկվում,
չսպասելով գալիք Գատաստանին ահեղ:

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

Կարծես ժամանակը հանգույցներ է կտալում
ինձն իր վրա եւ դեպքերը խառնում:
Եվ երկվորյակն իմ՝ այլեւ թախծահար,
մոխիր չտեսած աշխարհն է փնտրում՝
քննելով հիմքը բուն ներշնչանքի
եւ բախտն իր պահած ձեռքերում իր սառն:

Ուստի ինչո՞վ է ուժամրոցս վառ
եւ սիրտն ինչո՞վ է հուսալի առանց բռնագրավման:
Թվում է՝ թույլ եմ պայմանի համար:
Բայց կարծես մեկը ուխտը դրժել է,
որ երկինձն իր ջարդված կնիքով
խոցի ինձ՝ ինչպէս բոց ու պարսավանք:

ՈՒՐ Է ՔԱՌԱՍՈՒՆԸ ՔԱՌԱՍՈՒՆԻ

Նորակառույցների գրանխան օդում
հանկարծ կտեսնես վարդը բյուզանդական -
հին գմբեթ է, կուռ, քառասունավորներից
մեկը ծեփածո, որ բերվել է այստեղ՝
հյուսիսի գիրկը ցուրտ ու մոգական:
Մա մինչեւ հիմա սնուցում է խուսուլ:

Ինչպես ջրի տակ՝ օդը պղպշում է -
փողոցը միգանում է գմբեթների անխոս
հրմշտուփից,
ասես բազմանդամ թուփը սուզվել է
դաշտերով հոսող Կայալի հասակ,
եւ իաշխաշի փունջը արտաշնչում է,
եւ լվացվում մաքուր արտասուքով:

Կայալի սփերը լայնորեն փռվել են
մինչեւ տերության սահմանները ծայր
եւ լիալցվել Վոլգայի ջրով,
Գռնի վտակները Ամուրին են հյուսվել,
նրանց չի կոտրել Ուրալ լեռնաշղթան,
Ծիր-Կաթինի նման՝ լույս տալով երկնին:

Ինչ որ հիմնված է ապտակի վրա,
ցողել է սիրտը անհագ արյունով,
չհագենալով անափ կատաղությամբ,
այդպես մնացին կանգուն ճամփից դուրս -
եւ չի երերում լեռը, սուկ կարկամ
փետրափոստն է մուգ լանջը պարտակում:

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

Տեսապայ ունի ամեն հանգրվան,
ամեն ճամփորդ իր ուղեկիցն ունի,
նա սսես թփի կիրք է աճումի -
ցուցանել իրեն ու կերպարը լրել:
Շանթը երկնի պես թե կանգնած է պի՛նդ,
չի հիշում, ուրեմն, երկինքը ոչինչ:

Մեկը լավ է, բան հազարն հազարից,
բայց նա այլոց պես ամբողից է նույն,
հազարից հազար, միեւնույն թփից,
որ աճում-փայում է նրա տրտից իսկ:
Օտար հոգին դու մի բարձրացրու
բո աչքերից վեր, պահիր աչքդ նրան:

Քարը լողում է հողում, այստեղ թե այլուրեւ,-
նսկե դարի կոտորուկ, պահակ՝ իսպ-ամբոխի,
բայց քո ոտքի տակից նա պոկում է ուղին
եւ նետում է վերեւ, որ պան պես վառվի:

Չեմ թրեւել հանց գող, կամբիս չեմ բռնացել.
եւ հոգի չեմ թափել, ո՛նց գինին՝ հողին,
բայց ամոթն է գալիս, որ իմանամ նորից -
ինչ որ դրսից իսաչ է, լուսամուտ է ներսից:

Ծեղում չեւ խրի այն, ինչ զսպելն անհնար է,
եւ անձանոթ լույսը փոշոտում է քեզ քաջ,
արմատներով ծաղկանց հալածում է ետ-ետ
գալիք ոսկե դարի գույնը՝ ասլիդ սռաջ:

Երկրացու արյունից իսկ մոտ է լուսինը վառ,
եւ լուսնային ցեղը աճում է ի թիվ մարդկանց:
Տեսար՝ փողոցներից ու դաշտերից ի վեր
թռիչքի պես սեպն է՝ լուսնագորգի վրա:

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երբ երդումն է հնչում, պսաղում է թո տակ
կշեռքը մետաղափայլ, եւ դու նժարն ես մի,
մահացու ընտրյալն ես օտար գեղեցկության,
որ հարկեր է քաշում հաջորդաբար դեպ վեր:

Ոնց կողոպտված կարկուտ՝ վերադարձված լրիվ,
թո տակ սփռված փառքը աշխարհների,
վերեւներում շող շոգին քար կտրած -
գտիչ պարասպուտից ձիւղ է քեզ հղված:

Այլակերպված՝ ուխտով եւ այլաշունչ դարձած -
ողջը՝ ուխտով չստիւգ եւ այդպէս՝ թիրախ անտի,
վերջապէս մենակ եւ դու, եւ գրիմ չկա դեմքիդ,
թո գտած բախտի մեջ եւ սուզվել դու աներկբա:

Գործակից՝ կողոպուտիդ եւ միջնորդ գաղջ
դատարան,
ծաղրածու, ականաստեւ, քեզ նետած գրվանի տակ
վերջացող թույլ կնիքի, եւ գաղտնի գործարանն այդ -
իր քայլերն ունի սիրտը անձանտթ կողերի տակ:

Գու գիտես՝ երդման խոսքով ում եւ քեզ
գրավ դնում, որպէս գոհ ինչի առաջ իրիստ եւ շատ
ու անհողորդդ: Քո ինչքից մնաց մի բերդ,
բանտի չունի նա էլ: Մնացյալն սվազն առավ:

Ե.Ս.

Թե հավք է - ապա ճախրի սովեր կա,-
գիտեմ, թե ինչու հրաժեշտ տալով՝
ձեռքդ ակամա ազատ կարձակի
մեկին անպատճառ եւ առանց խուսի:

Նման արյուն կա՝ կոյր է հայացքով,
որ սրտիդ կողքին կարող է ապրել:
Կա մի ժամանակ, որին չես կարող
հետեւել ոչ մի ճիշտ ժամացույցով:

Ազգերը, անցյալ երկրներ ի թող,
տերեւամարտով առաջ են շարժվում,-
երկինքներն ահա հանց պատուհաններ՝
կառամատույցով կլողան հեռուն:

Ռեմբերը նույնպես դանդաղ կլողան,
կճա հավքը - մահ կա տերեւի:
Մոսկ երկար, երկար պիտի շարունակվի
նրա թռիչքը բո ձեռնարկի տակ:

Քրոջս հիշատակին

Չմանդվող տիրության գոտի -
շուրը փետրավոր ամպերի:
Յոթ սարի ետևում ծնված՝
շահել է իմ բոլոր դարձյալ:

Նշանված անմեղ բախտի հետ՝
երդմամբ չէ կինը նվիրյալ,
ժամկետով սահմանված սերն անանց
հավերժին ընծայեց նա անցավ:

Ինչպես որ եղավ ուսուցիչ՝
այդ պահից կավիճն է ձեռքին
խաչ կնքում ազատ-ինքնիրեն,
եւ գրում դատարկ տախտակին:

Տառերը կամ պարզ ու հստակ չեն
կամ խորթ են աչքին, անընտել,-
սղ քամին հաճում է դաշտում,
շուրթին է անունը վարդի:

Խճճված նշաններում սուրբ՝
նշողվում է անտառակը հուր,-
կավիճն է փշրվում կամ զուր
ստողերն են ավազին թափվում:

Գու դեռ օտարուհին ես այն,
ում համար անճանաչ եմ ես:
Ձեռքին իմ կավճակտորն է այլ -
մենք դրանք կկցենք իրար:

ԿՐՆԿԱԲԱՑ ԴՈՆԵՐ

Անձրեաների Ծովում լուսնի մանգաղն է
ծայրով իր դիպչում նահատակներին՝
անանուն, հավետ անվերադարձելի:
Որ իրենց չեն հիշում, չգիտեն նրանք:
Լքված գյուղերով կրակներ են շրջում
եւ գիշերները շրջում անդադար հեռախոսներում:

Դռները բաց են կրնկի վրա, երբ փակել է պետք,
նրանք չգիտեն, որ այստեղ ոչ ոք
չի հսկում նրանց աշխարհը թողած:
Եվ ճանապարհը, որով տարան նրանց,
ցարդ կախված է եւ չի դիպչում երկրին,
լուսնի փոշին է լոկ հասնում մինչ ծունկ:

Նրանց ու մեր միջեւ՝ խանդը չէ, խանդակն է,
անօգ փոփռացող գորշ ծածկոցը չէ,
այլ մոռացության թափը բնաբեր:
Բայց հոգին անհայտից կրկին խոսում է,
լուսապսակը մանգաղի է փոխվում, վառվում
անշշուկ,
եւ կիրակի օրվա լացն է տարուբերվում:

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

Հապաղած խնձորը բնավ չի ննջում,
գողացված ամպը չի ցնդում երբեք -
նա դեպի ուրիշ ժամանակ է թռչում,
իսկ այս ժամանակ նա սավառնում է:

Աղոտ է, ինչպես դրախտը ազատ,
նա արդեն ուղիղ հիշեցումն է այն,
որ զինք ստեղծված է տիեզերական
տանջահար փառքով՝ վերելից առ ցած:

Եվ օդն է կանգնած ծուռ ու աներեր,
երբ սնուցվում է նրա չգոյով
ոչ ամպն այն՝ դեպի անհայտը թռչող,
այլ ամպն այն, որը սավառնում է դեռ:

ԿԱԼԱՆՎԱԾ ԱՇԽԱՐՀԸ

Ես դեգերել եմ արգելված ու խղճուկ
ավերակներով,
ուր հուշագրերի նկուղն է դղողում,
եւ պտտվելով դատարկ ու գունատ խորիսխների
շուրջ՝

կալանվածներին փնտրեցի անդուլ:
Կալանվածներն իմ արգելված վախերն են,
խղճով չփորձարկված գողերը համառ,
հետաձգված գոջամաք կավաստներն անբուն,
աչքակալների մոլթն ու մենությունը:
Կալանվածեր են այլանդակները, իտր
մոռացության
բնարարներն ու ահաբեկված ուղու
մոտանումները, որ
խոսում են ճոճվող թիրախի մեղքից
եւ ախտյանի թիկունքից են զրկված:

Եվ սպանություններին հեռաստաններ տալով,
պատերազմներին բաժին ընծայելով՝
եւ՝ հալածող-օտար, հաշվեհարդարի
բաց թողնել նրանց չկարողացա:
Օրինականացրի նրանց թանգարանով,
բարտարանի մեջ գրառեցի մեկ-մեկ,
բայց նրանց համար եւ նույնպես իսպառ
կալանավոր եմ,
ամբաստանված առանց կանոնի ու պատվի:-

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

Կալանված երկնքում ոչոքի
տրված չէ գտնել թանկ ոչինչ:
Եվ ինչ աղետներ են անցել այնտեղով -
նսկրի կոտորվածքով չես իմանա երբեք:

Բայց հարության՝ հավերժ ձգված պայթյունը
մահացու գահն է կառավարության հանում:
Չի թողնում ուղեկցորդը դիմել փախուստի
ետժամանակյա սափից ու հուշից:
Եվ ծոպակները ծանր նենգության
կամ ուրվագծի դաշտը սկանսապատ՝
փշրված դարի փշրանքներ են դրանք,
բարացած արյունը աշխարհաստեղծման:
Թե նորից սհա վերածնվելի եւ գոհ սրբելի
ճակատն իմ խորին մոռացությունից...
Բայց ինչո՞ր այդժամ ցավալի է անչափ հարությունը,
եւ ինչո՞ր պայծառ է հոգու կիրակին...

Ես լուսնուտ չեմ, բնում եմ ես ուսփի վրա:
 Շուրջս պերճաշուք սյունաշարեր են,
 նրանց արմատները չեմ զգում, նրանք
 քարացած կումեր են աներեւոյթ թկում:
 Ի՞նչ են կիսատ ըմպել, կա դեռ, էլի ի՞նչ
 պարտավոր են իմել, ի՞նչ տեսակի թոյն...
 Տեղանքի հիմքերը թե հաշվի առնենք,
 դրանք արյան պես պիտ կարմիր լինեն:
 Բայց ոչ, մոխրավուն կապտուկների վրա
 քար է զգեցած՝ ոչ լուսնային հարգի,
 այլ նրա, որ մոտ է «ու» հնչունի կրփն:
 Ահա վերջը իսաղի, ահա շները սեւ
 իսայթիչ հաչոցով սոջամուղջն են կծում,
 ինչպես վերմակից, որի տակ հապճեպ
 գայլորսի կորչող հետքն են հոտոտում:
 Հե՞տքը... Բայց սառա՝ ու՞մ է պետք հետքն այդ:
 Թող դրանով ուրիշ մեկը հասնի տեղ:
 Իսկ ես կանգնած եմ: Շուրջս՝ սյուներ պերճ -
 Բիրնամյան անտառը՝ հընթացս սառած:

Քաղաքն այս ձախող ֆուտուրիստ է
աշնանը վիժած իռնոր կարկուտի:
Յոթանիշ թվով նա մասնուցվում է
որպես իսկ վախի իրավունք անտի:

Ոսկե անցյալի ֆուտուրիստն այդ
սպակեվորված, դրված է այնտեղ,
ուր նրա կողքին խաբեքաներ են
եւ նման կարգի ուրիշ պարունայք:

Ինչպես լուսնահար՝ բազմակի ոտքով
հարկերի վիհը թռնելով անտե,
ուրու-բաղաբը մոլորվել է մտոք:
Կեղծ վախը մեծ է կեղծիքի վախից:

Թրեում է նա փողոցներում հին՝
չգտնելով իրեն ոչ մի անկյունում,
ուր անցորդներին, տներին, ծխին
դուրին է լինել անձրեւի շայուն:

Կազմված է սակայն ֆուտուրիստն ահի,
սառնամանիքով անտառն է գծված -
ձկներ-նիշերը կամ քուրք-գիշեր
սպրում են այնտեղ՝ անգետ հրաշքի:

Արձակության մեջ, ուր հեռաստան երկու
միտված են իրար թշնամությամբ այնպես,
որ աննկատ են երկաշխարհներն իրենց,-
այտեղ մեռյալների կովշտոցն է եռում,
աստվածներն են շրջում անհոգ-անկարեկից,
եւ անկոչներ չկան իդախճանքում այդ:

Հարցրու Տիրոջը՝ ու՞ր է Կայենը բո,
ու՞ր է եղբայրը վեճ ու խառնակչության,
թշնամությամբ եղբայր, թե՛ եղբայր է արյամբ...
Քանի դեռ լքված է ու խռով է հոգով -
նա կրկնակն է բո դժբախտության գծով,
նա հենց ինքն էս, բայց արգելված խոսքում:

Ուղտերը հիշում են, իսկ Արգայությունը
չի կարող լավել ասեղի ծայրին,
երբ վճռվել է ընդառաջ գնալ...
Արգելված պտուղը դեղով է ծածկված
կասկածից՝ կյանքը ճշտի՞վ կամփոփի,-
բայց թե ուր է նա, չեմ պատասխանի:

Եվ անդ, ու իսանդը տեղ չունի հուշում,
ուր ամենքը վաղուց ներել են միմյանց,
ուր իրավներ չկան, չկան մեղսավորներ,
բո ամայության օրհնությունը կգա
դեպի բեզ՝ առանց ջանքի սներեր,
չամբաստանելով բեզ կորուստներում:

Այգին գարնանը կվիթթի ճյուղերին՝
հանդիսավոր տեսքով գիտակցության գաղով:
Արդեն վերեւներում դատարկ երկինքների
հուշերն են լողում սմայերի մասին:

Մա քեզ մերձիմոտո կմատուցի դեմքին,
ունց հայելուն, որը կիսախորթ է արդեն,
եւ պատեֆոնի ասեղիկով հին
կֆռացնի երգը մինչեւ վերջ:

Հետո ձեռքով իր՝ հանց լուսաճառաբ,
հանց հետնաբակի վառվող մի բարաբ,
նախապաշարմունքը կտրքի կյանքից:
Լինել թե չլինել՝ հարց չկա արդեն:

Բայց այն, ինչ վախով հաղթահարում ես,
ուխտյալ աշխարհը կվերադարձնի քեզ
առօրյա մահվան հորձանքից անդուլ,
որը կոչված ես կրել լիաբուն:

Արի գնանք այնտեղ ճանապարհով կեռման,
ուր ձկան մաշկով բարդին է արծաթ -
ալմաստ, որ երբեք չի զիջում չարքին:
Այնտեղ գետակն է քնում դարձդարձիկ:

Նրա երազն անգապելի այնպես՝
երեսակվում է մեր ցոլանքներից,
իսկ նրա ներքո գյուղական կյանքն է,
որ օրվան դատարկ հայացք չի թողնի:

Լքված նեխումի ծղոտ ու աթար,
բազանապատված ուժերի դեզեր -
կարծես մեր կողմից սկիզբն արարչությանն
նախ մեր ծնունդը մատնված է եղել:

Ահյակ հոսեցին ոլոր ու խռով
կենսահյույթվ լի արվակները բյուր -
գունատ՝ երանգով հնավառ ոսկու
եւ արյանք թեթեւ խառնված խարույկով:

Քունը չէ արդեն՝ քամին է սուրսայր
մեռյալ անտառի վրա արշավում
ամանակստի թիկթակով անկանգ
եւ դադվում կացնի հավածքով դաժան:

Խշշում է անտառը՝ հոտոդ բույսերին
տանջահարորեն փորձելով շրշալ:

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

Բայց ծառերին այն սուվեր չի աճում,
եւ նրանց համար պատասխան չկա:

Անոթը ծառ է դարձնում անտառի
ամեն արձագանք՝ հետմահու ազատ:
Ընդարմանում է ճամփան ոտքի տակ:
Հազարամյակը թեքվեց վախճանին:

Ոսկորքս շնչում են հրդեհի պահին,
ածխապողեր եմ բորբում ձեռնափիս:
Բայց իսարոյկում նման գոյգ չէ կրկնակս ինձ -
տասիկնոցի են վիհերը իստում քնկոտ
հատակներին:

Բարձրաձայնե՛ք հստա՛ չկան կուլիս, դեկոր,
մատների մեջ առե՛ք բռունցքն հանապազոր,-
քեզ ամոթանե՛ք կտան ինն ծիածան խոնարհ,
մաշկոտ երկինքը եւ կրակներն անչար:

Նման հունձից ծուխը աչք չի ոտի երբեք,
քեզ սպիրտի տեղակ արճիճը կբարշի վեր:
Գուցե այդժամ իրոք դարը ինձ չմատնի -
ոսկորներիդ երգն եմ, Տեր, լսում ես անքե՛ն:

ՎԵՐԱԴԱՐՁ

Դռան թակոց չէր ծուլ, որ նվում էր ներսում,
շրխկոցով բացվեց պատուհանը մեկեն,
սսես տունն էր թռել տանիքներից դեն,
փայտե իր մարմինը թողնելով իզուր:
Որտեղ նա եղավ, գաղտնաձայնով եւ պարզ
ոսկե բռնակն էր դռան շողում նրան,
հիմա խոնարհելով աչքը իջնող մթան՝
ահով սպասում է նա վերջաբանին մառ:
Ճանապարհի վերջում մի պատասխան գտնել,-
անտեղի է սակայն բռունցքի մեջ կարծես
շողում ոսկեջրված բռնակը սառնորեն -
հուսաբեկ ու տրտում, կորստյան եզրին:
Մայրը շեմը կելնի, նրա ծանոթ «Ո՛վ է»
հարցին կարձագանքվի վերարկուով իր հին,
որ խամրել է դեռ պատերազմից առաջ:
Ցավն ու նեղսրտությունը կալեկոծվեն սաստիկ,
մեղսավոր օրերի տիղմը դուրս կհոսի:
Գուցե բանը իրոք ծխախոտից դենն է,
սսում են՝ չար որդին ոչ այնպես է դարձել,-
անձրեւի պես օտար, լացին անընտել,
սսես իր պարտքերից մանր դեռ կառնի
Հարության տեսքով - դա մանրուք է փուչ:
Օրհնյալ է նա, որի ուղին պարզ է կանուխ,
ով չի կորցնում աչքից՝ աղոտ իր թիկունքում
վերադարձի ոգին ու ամպերն է հիշում
նշաններում այն խառն, որ իր վիշտը գիտեն:
Ի՞նչ է կիրակին - մի ճեղքվածք նեղլիկ,
ուր ոչ մի տեղ չկա տաբուկ սպաստանի,

ինչպես՝ գետի համար պատյանը քարափե՝
հավիտյանս իլված անցողարձից անհերթ:
Քոնե նա իմանար՝ որտեղ պիտի հառնի
նույն այն տունը, ուրկից նա հեռացավ անհետ,
գաղտնի նրան կտար ամեն թանկն իր ներսի,
որ չի մսխվում երբեք ոչ մի վայելքի մեջ:

ԾԱԳՈՒՄ

Արժե քայլ անես՝ ես հայտնվում ես ասեղի ծայրին,
խրված անձանոթ վայրի քարտեզին,
ուր ծակոցի տեղ՝ սղոթյուր է՝ քիտղ իտավարի ներսից,
մրկող մացառուտն իսկ քաշում է ջուրը դեպի

սիրույթն իր:

Աղբյուրի շուրջը՝ զոհասեղանն է կլոր ու փայտյա,
ճենճահուտը կյանքի, իրանված ցորենի

ծուխը երկարուկ:

Անդ սկսվում է արշալույսների կամքը լիահունչ,
իտավարի շեմին քարտեզն է այնտեղ

հեշտ պատաստովում:

Ամենն այդ, իրոք, կարելի է սիրել, չվախենալով այն
կորցնելուց,

գուցե մտոք այն, որ չես ճանաչի ոչ մի քարտեզով
անձայր ու անտես հողակտորն այդ՝ թզաչափ
ընկած,

որ շունչ է առնում՝ սպառնալով սրտին:

Կրնկի ներքո զոհասեղան չէ, այլ՝ բարձունք ես այն
լայնություն է մի խիտ բնակեցված, որից մթնում է
լույսը կուրորեն,-

լեռն է խոնարհվում, կամ էլ բարձունքն է փլվում
իր վրա,

կամ էլ ծակոցը ողջ քիժն է մաքրում քարտեզից
խառնակ:

Գա քո ծագումն է, որում հառնել է կերպարը լեռան,
որ աստ վերջապես հաղթահարել է իրեն աներկբա:
Եթե հարություն գոյություն ունի, դու ուղեկիցն ես
ցասման ու ուժի, որ ամոթանքի թիրախ չեն

փնտրում:-

Քաջ Գեորգին է տեղով իր բացում
գերված աղբյուրը, որ սնուցում է մարմինը փռված:
Մարտի ողջ փայլով, ոնց պսպղուն աղ,
կցանվի նրա գլխին ամենն այն, որ չի հատթել լեզ:
Գուցե կա իրոք մի գեղեցկություն, ում առաջ

պարտք է

այդ գեղեցկուհին՝ հանց ապաստարան սեր ու

դյութանքի:

Հեծյալը, որ իր նշանակետը ոտխին է տալիս,
անպարտելի է, քանզի կոչված է ծախսել իր ընծան:
Այդ ժամանակում՝ չիք հավերժություն,
թե մարտնչելով՝ կործանում է լեզ նա անգթաբար,
թե նշաններից չերկնչելով՝ նա հողին է տրվում -
օտար ամենքին, ամենքի աչքին՝

անըստգյուտ մերժված:

Գրա համար չէ՝ իսպթոցը սրտին

բո մեջ վեր հառնում ողջ տոհմածառով,

եւ ծաղիկների կախայթեղուկով դաշտերն է

ցողում,

արձագանքելով կորստյան բախտին զարմի

հուշերով:

Անկարելի է պահպանելը դա, խորտակել՝ նույնպես,

թե նոր հուշ-լուրի վրա չես վստնում

համիությունդ ողջ:

Ուրեմն չայել - նշանակում է թարմ աղբյուր բացել,

ուրեմն գնալ՝ աշխարհի աչքն ես դառնում

սղոպիսով:

**ՋԵՌՈՒՑԱՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՏԿՈՑԻ
ՈւՊՍՈՂԻՄՆ**

...Պահածոյի դանակով խոր վնասված ու
բացապարզվող երկինք,
վերից նետում է ծաղկե դառարկ ռումբեր,
վառ կիսադուսիւնը ծաղկաթմբին ընկած է
սփռոցի պես:
Իսկ վարդի թուփը՝ ծագելով սեղանի
կլորավուն ծայրին,
ցնցվում է բրոնխիտով եւ նիկոտինի սող
ցիրուցանում -
շողարածակելով ռենտգենի սարսուռ սեւ
նեգատիվին:

Ռիմացս նստած ամեն ոք ունի նման կերպարանք,
հատկապէս թանձր պորտվէյնի խոշոր
բաժակից հետո,
ծիսախտով գույգ՝ տրամվայի գնդուն
թախիժով նայող,
այդպիսին կթվամ նրան, ով որ ինձ նկատի անող:
Եվ որ դեմքը չէ սուզված տիեզերքում,
չրասպտոյտն է այլ
ներքաշված խուլ ու հարմարավետ ճահճում:

Սրճարանի բյուրեղ ծիսում քանդակված կապույտ
մի պուրակ,
Ապօրինի գետեր՝ ձնշված ջեռուցման ջեռ գարեջրից,
ուր մարտկոցների ջուգունե կրկներգով տանում են
անկանգ
խուլ Օրփեոսին, եւ Օրփեոսը թվում է հարբած...

ՀԱԿԱՄԱՐԳԱՐԵ

/«Մարգարեներ» բանաստեղծության 2-րդ մասը/

Եթե լեռները ընթերցվում են ձախից
կամ հակառակ կարգով՝ աջից դեպի ձախ,
բայց ոչ ներքեից, ինչպես ցերեկով, եւ ոչ վերեւից,
գիշերը ինչպես,-
նշանակում է, որ ժամանակը հոգնել է հաստատ,
հրաժարվել է տարիւհից, առանց շուրջը նայելու
փոխվել է նրա կամքը անկաշառ:

Եվ երբ ի հաճոյս անթիվ բնայքների
շաղկապվել ուզես ինչ-որ տենչանքի,
բացելով ճամփան՝ կանխատեսողի լոյս
շավիղների,
/ասես Հերակլեսի սիրանքն Անթեյին
վերագրվել է նրա համար, որ խնդության պահին
կտրվես հողից եւ թռչես երկինք/,
այնժամ մերձիմոտ կտեսնես, գարմանքով
սրատես դարձած, ինչ չկա շուրջը
եւ մոտակայքում, եւ այն, որ այնպես խոցոտել է քեզ:
Կկռահես՝ որքան խոր-ահավոր է վիհը կանոնի:
Պատկերագրման կես ես՝ վախի մեջ պինդ
շրջանակված,
դու՝ ուղղիչ սարսափ անհյուրընկալ ուժի:

Կարելի է փուշը հանել կակաչից նորածագ ու ալ,
որ նա այլևս չհեղի սոյուն խիզախման պահին,
կարելի է հանել պատմությունը իր անխոնջ
հետխոնջից,

ԻՎԱՆ ԺՂԱՆՈՎ

սովորեցնել հյուժված բառերի վառ գեղեցկությամբ,
սկսար թղթերից շինված արկղերը տեղաշարժել, որ
նրանց մեջ ուրիշ տեսակը սգա դատարկությունն էր:
Կեղծամ կարելի է շինել մազերից սեգ Արտեմիդի՝
աճած էֆեյսան հրդեհում գտած իր մահից հետո,
որ անգլիտակից ծածկես նրանով մարմինն
անգլուխ,
բազմապատկելով ցնցում ու կսկիծ,
կամ լավ է՝ հույսը մատուցես իբրև սպրանգ
սիրունիկ,
բայց չի կարելի, քանզի... այդտեղ է գաղտնիքը
թաղված:

Կտեսնես՝ ո՞նց են լեռները մեկտեղ հեռանում
անխոս,
եւ ամեն մեկը մի հորիզոն է իր հետը տանում, մի
հեռանկար,
եւ ժամանակը ճիշտ հաշվարկելու հմտությունը իր:
Ու թե՛ քեզ միայն անկումն է իշխում
խոսքի բարձունքի անգուսպ տենչի մեջ -
սվայտանքը քո ծարավով է լոկ սատ բացատրվում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Եվգենի ՍՏԵՊԱՆՈՎ

ՄԵՏԱ - ՄԵՏԱ...

Մետամետաֆորը/փոխափոխաբերությունը/ մի եզրույթ է, որ ստեղծել է գրական հանրությանն է առաջարկել բանաստեղծ, գրականության տեսաբան ու փիլիսոփա Կոնստանտին Կեդրովը:

Տողերիս հեղինակին հղած նամակում նա պատմում է.

«Առաջին անագամ մետամետաֆորն ի հայտ է եկել իմ «Անեզր» պոեմում 1960 թվականին. *«Երբեք չեմ մոտենում քեզ մերձիմոտրո/ որքան ծաղիկն է մոտենում արեւին»...* «ես դուրս եկա միջով/- ընդառաջ - ից / եւ անցա ԸՆԴ/ առաջնդմամբ Վրասն»: Ավելի ուշ ծանոթանալով Լորաչեւակու, Խլերնիկովի աշխատություններին եւ իմ ազգական Պավել Չելիշչեւի գեղանկարչությանը, ես հասկացա, որ խոսքը Ռիմանի երկրաչափության եւ այն հեռանկարի մասին է, որը Չելիշչեւն անվանել է «հրեշտակային»:

1974թ. Մոսկվայի պետհամալսարանի հոգեբանության ֆակուլտետի ուսանողուհի Օլգա Սվիբլովան եկել էր ինձ մոտ՝ Գրականության ինստիտուտ, բանահյուսության վերաբերյալ դասախոսությանը. «Խնդրում եմ՝ կարդացեք իմ ամուսին Ալեքսեյ Պարշիկովի բանաստեղծությունները, նա ձեր առաջինկուրսեցի ուսանողն է»:

Ես այդ բանաստեղծություններում զարմանքով տեսա մետամետաֆորի տարրերը: Հետագայում Պարշիկովը ինձ մոտ է բերել իր համակուրսեցի Ալեքսանդր Երյոմենկոյին. *«Իսկ, այնուամենայնիվ, ինչո՞ւմն էր մտադրացումը Էյնշտեյնի/ Նա նույնպես, ինչպես եւ ես, շրջել է բաժակը./ Չփոխելով բարձակի կառուցվածքը»* /մեջբերում եմ հիշողությամբ/: Մետամետաֆորին, պարզվեց, ավելի մոտ էր նրանց ընկեր Իվան Շդանովը. *«Մեղուն իր ներսում թռել-հեռացել է»:*

«Մետամետաֆոր» բառը ես մտահղացել եմ Պերեդելկինոյում, 1982-ի գարնանը՝ Սվիբլովայի, Պարշիկովի եւ ֆին սլա-

վոնագետ Յուկկի Մալինենի ներկայությամբ: 1983թվի ամռանը Պարշչիկովը եկել էր ինձ մոտ՝ «Մալեկա» ստեղծագործական տուն, իր «Ամանորյա տողեր» պոեմին վերջաբան տալու խնդրանքով, «Լիտերատուրնայա ուչյոբա» ամսագրի համար: Ես գրել եմ. «Ալեքսեյ Պարշչիկովի մետամետաֆորը»: Ի զարմանս ինձ, այն տպագրվել է հիշյալ ամսագրի 1984թ. 1-ին համարում: Կես տարի անց Ս.Չուպրինինը «Լիտերատուրնայա գազետայի» «Ի՞նչ կա բարդության հետևում» հոդվածում առատորեն եւ ազնվորեն, գրեթե ամբողջությամբ մեջբերել է իմ այդ հոդվածը հղումներով եւ չակերտներով: Ես գրել եմ. «Վարժվեք մետամետաֆորին, այն անսահմանորեն ընդարձակում է ձեր տեսադաշտը»:

1989թ. «Պոետական կոսմոս» գրքում ես հանգամանորեն շարադրել եմ մետամետաֆորի պատմությունն ու տեսությունը: Գիրքը գրվել էր 1985-ին: Այն թթու են դրել, բզկտել, կցել մարքսիստական վերջաբան, բայց, այնուամենայնիվ, հրատարակել են: Խմբագիր Ա.Գլադկովայի վկայությամբ՝ տպաքանակը դուրս բերելու ժամանակ այն բռնագրավել են փորձել ՊԱԿ-ի երկու ծառայող, բայց նրանք վկայականից բացի ուրիշ ոչինչ չունեին, եւ գրքերով բեռնված մեքենան պահեստից, այնուամենայնիվ, դուրս է եկել:

Այնուհետեւ սկսվել են խաղը-խայտառակությունն ու խաբեբայությունը: Մետամետաֆորը վերակնքել են սողացող մատերիալիզմի պիտակով: Ոչ մի ռեալիզմի հետ ես չունեմ որեւէ առնչություն: «Մետամետաֆորը նոր իմաստի մեծ սափորն է»:

Կեղքովը նաեւ գրել է. «Մետամետաֆորը, իհարկե, պայմանական հասկացություն է, կարելու են հոգետուր նոր իրողությունները, որ նշանակված են այդ եզրույթով, իրողություններ՝ բացահայտված ժամանակակից ֆիզիկայի, տիեզերագիտության, կրոնի եւ... պոեզիայի կողմից: Կարող է, նախեստառաջ՝ պոեզիայի»:

Իմա՝ խոսքը արվեստի եւ գիտության սինթեզի մասին է՝ մարմնավորված ինքնակա բանաստեղծական բառահյուսվածքում: Սակայն նախքան այդ սինթեզը վերլուծելը, պետք է հասկանալ այն հիմնական ոճական հնարքները, որոնցից օգտվում են վերոհիշյալ արտասովոր բանաստեղծները,- նրանցից յու-

րաքանչյուրը, անշուշտ, ինքնաբավ է եւ եզակի իր տեսակի մեջ:

Երաժշտականության /էվֆոնիայի/ որպես պոեզիայի կարեւոր բաղադրիչի մասին քիչ չի գրվել: Գրել են եւ գրականագետները, եւ բանաստեղծները: Հիշենք մի քանի մեջբերում. «*Կարծում ես նույնպես աշխատանք է /անհոգ ու անփույթ ասորուսարը այս - մեղեդուց ինչ-որ բան լսել-առնել/ եւ այն կարակով փալ ոնց սեփական*» /Ա.Ախմարովա/: «*De La musique avant toute chose*»¹ /Պոլ Վեռլեն/: Եվն: Բանաստեղծական այդ հակիրճ տողերում ձեւակերպված են որոշակի ՄՏԽՄ-ի /ՏՏԻՄ - ՏՏԻՄՈՎՅԱՅՏԻՄՅԱՅՏԻՄՅԱՅՏԻՄ- բանաստեղծական համակարգի/ հիմնական կանխադրույթները: Պոեզիան որպես երաժշտություն: Ընդ որում, միայն եզակիները, իրավ խոշոր պոետներն են /օրինակ՝ Բորիս Պաստերնակն էր արհեստավարժ երաժիշտ, կամ Գեորգի Օբոլդուեր/ շրջանում /շրջանցել/ ոչ խրթին /ներկա պայմաններում՝ պարզունակ/ վանկա-շեշտային հնարավորությունները եւ վերածում /վերածել/ բանաստեղծությունն երաժշտության:

Պոեզիան հաճախ սկսվում է այնտեղ, ուր միջոցների ընտրությունը գտնվում է խիստ սահմաններում - բանաստեղծության չափի շրջանակներում:

...Մի փոքր քննաբանենք Իվան Ժդանովի ստեղծագործությունը, ով պոետ-մետամետաֆորիստներից մեկն է: Այս բանաստեղծը մի շարք գործերում փորձում է ծավալվել Պ.Վեռլենի եւ Բ.Պաստերնակի ՄՏԽՄ-ի շրջանակներում, ավելին, հաղթահարում է նախորդների ազդեցությունը եւ վանկա-շեշտայնության խիստ ասպագենով զարգացնում բառի հանդեպ նոր մոտեցում: Ժդանովը ցույց է տալիս եւ փորձում է ասպացուցել, որ պոեզիայում իմաստը պարտադիր չէ,- նրա փոխաբերությունները չունեն իմաստաբանական հաստատուն նշանակություն, ազատ, ներզգայական եւ անգամ ինքնաբերական են:

Խոսքի իմաստը խոսքն է: Գեղեցկության իմաստը՝ գեղեցկությունը: Ահա, օրինակ, մի հատված նրա «Որմնախորշ եւ սյուն» բանաստեղծությունից.

...*Ասես ծառի քայլքից պոկվում է փերերը համրացած
հեփքով,*

հանց լորենու մեղր, որ բարձրանում է նկուղային կրից,

*փռում է քո ճանփան, քո առաջ դեղին միրածներ
դիզելով,
պարերից դուրս սողում եւ ամբոխի մեջ շարում է
ցցիչներ ցից...*

Բանաստեղծության իմաստաբանական շղթան բացարձակ չէ: Քառատողում բառերը հեշտորեն փոփոխելի եւ հաճախ պատահական են. Օրինակ՝ «ծառեր» բառը կարելի է հեշտությամբ փոխել, ասենք, «տարիներ»-ով: Դրանից իմաստը չի փոխվի, որովհետեւ բանաստեղծությունում այն ընդունված նշանակությամբ բացակայում է, երաժշտությունն ինքն է հանդիսանում միակ իմաստը: «De La musique avant toute chose»: Հնարքը, որ ստեղծել է Վեռլենը եւ զարգացրել Պաստեռնակը, Ի. Ժղանովը հասցրել է մինուս-հնարքի աստիճանի, շատ բանաստեղծություններում գիտակցաբար հրաժարվելով իմաստային ներարկումներից: Երաժշտությունն որպես միակ հնարանը: Դրանում Ժղանովը բարձրակարգ է:

Իսկ բանաստեղծ Կ.Կեղրովի մոտ հիմնական ոճական հնարքը անագրամման է: Նա բառերը շարում-դասավորում է՝ վանկատելով դրանք, ասես՝ ըստ ատոմների: Եվ ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տաղաչափական ատոմ ինքնակա է, այն պոետական տիեզերքի մի մասնիկն է:

Ես դուրս չեմ փակում

Ես դու չեմ

Ես փակում եմ

Այդ հնարքով են կառուցված Կեղրովի շատ բանաստեղծություններ, նա ասես ստիպում է նորովի նայել բառերին եւ փոքր չափաբաժիններով ստեղծում է իր պոետական կոսմոսը:

Պոետ-մետաֆորիստներից առավել բարդ է Ալեքսեյ Պարչիկովի բանաստեղծությունների ընկալումը: Կ. Կեղրովը գրում է. «Պարչիկովը մետամետաֆորի ստեղծողներից մեկն է, մետաֆորի, որտեղ ամեն մի իր տիեզերք է: Նման փոխաբերություն նախկինում չի եղել: Նախկինում բոլորը համեմատում էին: Բանաստեղծը որպես արեգակ, կամ ինչպես գետակ, կամ ինչպես տրամվայ: Պարչիկովի մոտ համեմատություն չէ, այլ՝ առնմանում/մանավորություն/: Նա հենց այն ամբողջն է, ինչի

մասին գրում է: Այստեղ չկա ծառ հողից առանձնացած, հող՝ առանց երկնքի, երկինք՝ առանց տիեզերքի, իսկ տիեզերքը բաժան չէ մարդուց: Դա տիեզերական մարդու հայացքն է: Դա մետամետաֆորն է»:

Դրա հետ մեկտեղ, Պարզչիկովը ունի ոճական հիմնական հնարքների մի հավաքածու, որոնցով նա բարձրարվեստորեն ու մշտապես բանաստեղծել է: Նման հիմնական հնարքներից մեկը լիտոտան է: Պարզչիկովի համեմատությունները /որոնք, անշուշտ, ինքնաբավ են/, կառուցված են հակառակ հիպերբոլի սկզբունքով. բանաստեղծը նպատակայնորեն փոքրացնում է, ջանում խոշորի մեջ տեսնել փոքրը, այդպիսով՝ խոշորացնում այդ փոքրը: Ահա մի քանի օրինակ. «Մայրուղին փայլկրում է, հանց փափագելի ունելի», «Ես գիրքի, որ գեպուսկը՝ հանց գիշերային վագոն, / չմռանը դուրս է գալիս ռելսերից եւ զննվազում», «Անդունդը քնաթմբի մեջ է իրերի միջեւ, հանց կայրադած սամույրների», «Կգայթի նա որդի ուղղագիծ մթության մեջ», «Մոսկվա-կվա-կվա: Մայրաքաղաքը/ հեշտ րեդավորվում է ցանկացած ոսպրեի մեջ», «Վեր կբարձրանան, ինչպես մուրը երդիկով», «Ոգիս նման է գոդացված պարկի»...

Սրբազան, խորապես մտերմիկ ու ճակատագրական բաների/անդունդ, մթություն, ոգի, բարձրանալ/ մասին բանաստեղծը խոսում է կարծես թե կատակով, ստորացնելով սեփական ցօն: Ոչպաթետիկ, ցածրահունչ բառապաշարը նույն բանաստեղծության մեջ /հաճախ՝ նույն տեղում/ հարեւանություն է անում խոր կրոնա-փիլիսոփայական հասկացությունների հետ: Դա բառույթների եւ հասկացությունների կցորդում է՝ ճարտարորեն կառուցված լիտոտաների վրա, ինչը կամա թե ակամա վստահություն եւ համակրանք է հարուցում հեղինակի հանդեպ: Բարդ փոխաբերական, երբեմն ծածկագրված դիսկուրսը դառնում է մատչելի ու հասկանալի: Որովհետեւ՝ հոգու, մարդու, կյանքի ու մահվան մասին է: Այն մասին, թե ինչ կա մահից հետո:

Ի դեպ, մահվան թեման ոչ սակավ /թեպետ հպանցիկ/ ի հայտ է գալիս «Ընտրանք» գրքում, ի մասնավորի, անհավանական ներշնչական եւ մասամբ պրոֆետիկ «Ամմահը» բանաստեղծությունում.

Նրանց ծոծրակները պրկված են հար:

Ամմահը՝ ծծակն է ամեն հավարի:

*Իմ դեմ երկունս են: Իսկական խցան՝
մեր մթնոլորտի ճոճուն հայրակին:
Պսակն է ներկված: Այն կարմիր է վառ:
Նշանառությունն է ճշրվում մի թափից
պարվանդանների կենտրոնի վրա՝
հանդիսարեսին մարմնելով մեղքի:*

*Ի՞նչ սավառնակ է պարուհանից դեն
պրփրվում խելառ՝ անհարթ ապակու ոլորքով երկար -
նա շրջանցում է խութերը բոլոր: Հենարան է ձիգ,
ամպերից հեռու անվերջ դեզերող խելքի պարառիկ:*

*Ծաղիկ անթառամ - ոչ դրասանգ է, ոչ փշահոգի,
ոնց սառցակալած ընկույզի ներսում
պրուրակահան - փոշեցրելով կրում է կրկին
առանց վրիպման ոչինչը սին:*

*Քարտեզն է պարից պոկում անվրդով,
որ Կոպեռնիկոս գիրունն է գծել,
եւ Տարարտուն է փաթաթում դույնով -
պարճենում իրեն անմահը ընկրել:*

*Կարմիր դագաղին նա հակվում է վարժ:
Նրանում մահն է սեպվել փեղկի պես:
Երկու մեջք ունի: Կարճշուրթ է ու պարզ:
Բախրի թարմ խոզան: Սրբի սածիլ հեզ:*

Ցայտուն լիտոսա է առկա վերջին քառատողում՝ «Նրանում մահն է սեպվել փեղկի պես», որը մեկ անգամ ես ընդգծում է բանաստեղծի իդիոմճի յուրահատկությունը՝ պատումի ցածրացում, գլխավորի/ճակատագրի/ մասին խոսակցություն պարզ, առօրյա լեզվով:

...Ալեքսանդր Երյոմենկոն որպես բանաստեղծ կայացել է բացարձակապես տարբեր ավանդույթներով,- նա ե՛ր փոխաբերության, ե՛ր հեզմանքի վարպետ է: Անշուշտ, առավել հայտնի

են Երյոմենկոյի գրոտեսկա-հեզնական բանաստեղծությունները: «Ես կոկորդիլոսների նորոգման վարպետ եմ», «Ես բարի եմ, գեղեցիկ ու լավը» են:

Եթե համեմատենք բանաստեղծի երկու` տարբեր ոճավորումով գրված բանաստեղծությունները, կարելի է ենթադրել, որ մեր առջեւ է երկու տարբեր պոետների ստեղծագործություն:

Ես հուշարձան եմ ինչ...

*Բարի եմ, գեղեցիկ ու լավ,
խմաստուն` օձի պես հարկավ:
Կնոջը երկինք եմ թռցրել,
եւ իմն է այդ կինը դարձել:*

*Երբ ես „Մասանդրա“, շոյվ
հայրում եմ ռեստորանը լայն,
հարքած` դեսանտային հանց,
եւ ճարպիկ` քարայծի նման,*

*մայրներով մեջքիս եւ խիում,
եւ ինչ է շունչը հասնում.
Կնոջը ներել է երկինք,
եւ կինը կախված է երկնից...*

*Ամոթ չէ` խոստովանել ձեզ -
բոլորը կանգնում եմ, երբ ես
մրնում եմ, գրկում եմ ինչ պինդ,
համբուրում ու փող եւ փայլիս:
Ամենքը ուրախ եմ դառնում
եւ ասես մի փոքր հարքած,
երբ ես կարդում եմ բեմից
լուրերս անիմաստ կովից,*

*եւ գործը ծեծի է հասնում,
երբ որ տարիներ հետո*

հիշում են մարդիկ ինչ սրտանց
ես վիճում` ոնց էի հագնված:

Վճռական, փութկոտ, ածիլված,
ջղերս մի կծիկ դարձրած`
նսխարար կարող էի ես
աշխատել, նսեւ նավավար:

Բերեմ շեզ երեք օրինակ.
կարող եմ արորպնէր անել,
անգիր եմ Հումերոս կարդում,
օղանսւմ եմ վայրէջքի փարեմ:

Մի քանում մեղա եմ գալիս
ես անկեղծ ասում եմ հիմա.
փիեզերք չեմ թռել, քանզի
ծիտում եմ վաղուց մոլեգին...

Իհարկե, ուզում եմ հավեր
աշխատել, ապրել, սովորել
ի փառս նորեկ սերնդի`
հերքելով դեպեկտորը սրի,
որպեսզի ամեն ոք նորովի
ի գորու լինի ասելու.
կնոջը երկինք եմ թռցրել,
ես իմն է այդ կինը դարձել:

Անբառի ապակե-դատարկ ուրվագիծն է այնպեղ
փշրովում,
սոսափում է իր եզրագծերով, ապա անպիտան
սաղարթին փրովում:
Ճամփի երկայնքով հեռագրասյունների բզզունն է
կախված,
որից ցավում է գլուխդ, ինչպես թույնից սրսկված:

Օղն է փուլ գալիս, եւ խարխլվում եւն կապերը անծայր
ուրվագծի եւ ծաղկի անպարտող խոկմունքի միջեւ,
եւ ակամա գեպն է սահում ինքն իր փակով,
խշշում է սպա, եւ համընկնում եւն ֆազերը նրանց:

Էլեկտրական քամին պինդ կապկապած է փուլ
հանգույցներով,
եւ կարմիր հողին, թե նրա վերին շերտը եր փանեւնք,
վերջից սոճիք եւն, կրեսնեւնք, գամված
փակից հեղույսներով, պարուրակով կավե:

Ու հենց պարուրակին եղեւնիները առկայծեն
երկշարք,
կրեսնեւն՝ գեպի կեղրակուր աջում
քանավանն է թրթռում հեշտին ու անհագ,
աղյուսի գործարանը անցք ունի կողում...

Հերո ինչ՝ այսրեղ չեւ եղել մի ողջ փասնմեկ փարի..
Աշնան անպարտակ փանող կածանը մաքուր ու ջիւնջ է:
Այնրեղ քեկվածքը նույն փեղում է, ինչ ժադրքին
Կոլկան

խարույկի մուր գլիսիս արճիճ է թափել:
Այնրեղ իմ կինն է երկար բազմոցին ճադիյուում
փրփում,
այնրեղ հարսնացուս նստած է ճոճուն մի աթոռակի:
Այնրեղ իմ մայրն է վայ փալիս կրծքին միգում
ակնակուր,
եւ պարուրակին հենված իմ թոռը ավերված
օդի միջով է նայում:

Ես մեռա այնրեղ երեկ կեսօրին,- լսեցի աղուր՝
ունց էր սալարկով երիվարն անցնում
իր լի խոնջությամք,
լսեցի նսեւ՝ երբ լեռը մտավ,
ունց շիաուժը նրա թափ առավ, հանց քեկաաղոց:

Երյոմենկոն հետետղականորեն զարգացրել է, պայմանականորեն ասած, եւ՝ Օսիպ Մանդելշտամի, եւ՝ Նիկոլայ Գլադկովի ավանդույթները: Եթե առաջին բանաստեղծությունում հիմնական ոճական հնարքը հեզնանքն է, ապա երկրորդում /այստեղ նա ակնհայտորեն ձայնածում է Ի.Ժդանովին/ առկա են բարդ փոխաբերական համակարգ, նոր մակդիրներ, որոնք արտացոլում են 20-րդ դարի մարդու պատկերացումներն աշխարհի մասին: Ընդ որում, հենց Երյոմենկոն է մյուսներից առավել լավ արտացոլել արվեստների այն սինթեզը, որի մասին հիշատակեցինք մեր այս գրության սկզբում:

Ամփոփելով վերոնշյալը եւ ձգտելով ըմբռնել մետամետաֆորիստների ֆենոմենը, կարելի է ենթադրել, որ նրանց ընդհանուր մեթոդի հիմքում ընկած է բարեհնչունությունը, մետաֆորը, անագրամման, լիտոտոան եւ հեզնանքը/ինքնահեզնանքը/: Բոլոր դեպքերում, այդ փոխաբերություններն ու հնարքներն առավել նկատելի են, դրանք նշյալ եւ նրանց մոտ կանգնած մյուս բանաստեղծների /ասենք՝ Ե.Կացյուբայի/ համար հանդիսանում են հիմնարար եւ անկյունաքարային բանարվեստային միջոցներ:

*/հողվածը տպագրվում է
մասնակի կրճատումներով/*

*1 De La musique avant toute chose/ֆրանս./ - ամենայնի
երաժշտությունը*

Նատայա ԳԱԼԻ

ՄԵՏԱՄԵՏԱՖՈՐԻՍՏՆԵՐԸ

Միանգամից վերապահումով ասեմ, որ մետամետաֆորիստների պոեզիան ինձ թվում է մտացածին, հնարովի: Դա հենց այն դեպքն է, երբ իրականում սկսում ես հասկանալ Ա.Պուշկինի այն ասույթը, որ «պոեզիան պետք է լինի հիմարավուն»:

Բայց ես այնպես, Ա.Երյոմենկոյի, Ի.Ժդանովի, Ա. Պարչիկովի եւ Կ.Կեդրովի անունները լայնորեն հայտնի էին արդեն անցած դարի 70-80-ական թվականներին... Նրանք իրենց անակնկալ հայտնությամբ խռովել են հասարակական կարծիքը, ընթերցողների մոտ հետաքրքրություն հարուցել հայրենական պոեզիայի հանդեպ: Նրանց գրական գլխավոր դիրքորոշումը, հավանաբար, եղել է էպատաժը: Նման ստեղծագործություններում քննարկական հերոսն անհետանում է, տարալուծվում տարբեր տեսանկյուններում, հաճախ՝ կամայական: Սեփական «եսից» մահանջի կեցվածքը մահանջ է անհատականությունից, նշանակում է ես՝ սեփական Խոսքից: Թեպետ դա երբեմն արվում է բավական սրամտորեն /ինչպես Ա.Երյոմենկոյի մոտ/, բայց դա հենց «արվում է», պատրաստվում է ասես կոնստրուկտորի կողմից:

Հնարավոր է՝ տվյալ պոեզիայի վերաբերյալ մնան տեսակետը հարուցված է իմ անգիտությամբ եւ այդ հեղինակներից ունեցած փոքր հեռավորությամբ: Բայց հո ցայժմ հիշում եմք նշյալ դարի սկզբին տեղ գտած փորձարարություններն ըստ «ДЫР БУЛ ШИЛ» կարգի եւ դրա նմանողությամբ, որոնք պոետական խոսքը դիտարկել են որպես կախարդություն, աստվածների լեզու՝ մատչելի միայն ընտրյալներին: Յանկացած պարագայում ինձ կարեւոր թվաց ի մի բերել, ծայրահեղ դեպքում, այն նյութը, որ վերաբերում է մետամետաֆորիզմին եւ հեղինակներին, որոնք դավանում են այդ «տարօրինակ իզմը»: Եվ թեպետ աշխատանքի արդյունքում մետամետաֆորիզմի վերաբերյալ տեսակետը փոխել չհաջողվեց, այնուամենայնիվ, ես ձգտել եմ զերծ մնալ կանխակալությունից եւ վերոնշյալ պոետների ստեղծագործությունները քննել այդ հոսանքին հարող քննադատների աչքերով:

...Մետամետաֆորիզմը՝ դա ոճական ուղղություն է ռուսական գրականությունում եւ արվեստում, որ սկիզբ է առել 20-րդ դարի 70-ական թվականներին, բայց հանրահայտ դարել 80-ականներին: Այդ ուղղության պոեզիայի ծագումը թվագրվում է 1983-1984-ով, երբ գրեթե միաժամանակ մոսկովյան երկու քննադատ՝ Կ.Կեդրովը եւ Մ. Էպշտեյնը, բարձրաձայնեցին նոր «իզմի» մասին: Ճիշտ է՝ Էպշտեյնը այն կոչել է փոքր-ինչ այլ կերպ՝ մետառեալիզմ:

Խոսելով այդ ուղղության ներկայացուցիչների մասին, որպես կանոն, հիմնականում հիշատակվում են Ա. Երյոմենկոյի, Ի. Ժդանովի, Ա. Պարչիկովի եւ Կ. Կեդրովի անունները /*նրանց հետազայում միացավ Ելենա Կացյուբան-խմբ.*: Իմիջիայլոց, կա նաեւ Ալեքսանդր Չեռնովը, ում անունը չգիտես ինչու չեն հիշատակում, թեեւ Կեդրովն ինքը Չեռնովի «Глазomир» գրքի առաջաբանում գրել է. «Սկզբում նրանք չորսն էին՝ Ա. Երյոմենկո, Ի. Ժդանով, Ա. Չեռնով եւ Ա. Պարչիկով: Հետո նրանցից յուրաքանչյուրը թռել է իր ուղղությամբ եւ կորել երկնքում: Ես նրանց եւ իմ պոեզիայի համար մտածել եմ նոր բառ՝ մետամետաֆոր»: Կեդրովի «Սիրո համակարգիչ» պոեմը քննադատ Ս.Ջիմբինովը առաջարկում է դիտարկել որպես մետամետաֆորիզմի գեղարվեստական հանգանակ:

Բայց նոր հոսանքն առավել լիովին հատկանշել է Մ. Էպշտեյնը: Նա այդ ուղղությունն անվանել է մետառեալիզմ եւ հակադրել ոճական այն ուղղությանը, որից մետառեալիզմը սահմանագատվել է՝ կոնցեպտուալիզմից: Էպշտեյնի առավել հայտնի հոդվածներն են «Թեզիսներ մետառեալիզմի եւ կոնցեպտուալիզմի մասին»/1983/ եւ «Ի՞նչ է մետառեալիզմը»/1986/: Մետառեալիզմը, նշում է Էպշտեյնը, ծագել է ռեալիզմի հաղթահարման փորձից: «Տիպային ռեալիզմի հաղթահարումն ընթանում է, ծայրահեղ դեպքում, երկու ուղիով: Արվեստագետների մի մասը ամրապնդում է /եւ խոշորացնում/ իրականության արտաքին, պատրոդական շերտը, մյուսները խախտում են այն: Ոմանք հիպերտրոֆացնում՝ գերաճեցնում են դրանց մետաֆիզիկական խորքը: Մի մասին հատկանշական է հիպերբոլը՝ առկայի խոշորացումը: Մյուսին՝ ՄԵՏԱԲՈՒԼԸ, այլի մեջ տարալուծումը, ցատկը հնարավորի մեջ /մետաբոլ՝ բառա-

ցիորեն նշանակում է գերցատկ, հեռաթռիչք, տեղափոխություն, շրջադարձ/»:

Մետառեալիզմի սկզբնաղբյուրը ոչ թե բանաստեղծական ինչ-որ որոշակի երեսույթ է, այլ համաշխարհային արվեստի ողջ պատմությունը՝ իր հանրագիտարանային սեղմվածքներում եւ քաղվածքներում: Մետաբոլը դա, ըստ էության, բառարանային հողված է, մշակույթի միրոհանրագիտարան՝ մամլված իր բոլոր ժանրերով ու մակարդակներով, որ քեզ լեզվից լեզու է տեղափոխում: Այստեղից՝ ակնհայտ արտահայտված քնարական հերոսի բացակայությունը, որը փոխարինվում է հայեցումների հանրագումարով, հավասարահեռու տեսակետների երկրաչափական տեղով: Մետաֆորի եւ մետաբոլի գանազանության ցուցադրության համար հատվածներ են մեջբերվում Ա.Վոզնեսենսկու եւ Ա.Երյոմենկոյի բանաստեղծություններից.

Ոնց եմ գմբեթները ոսկեչրվում

շինարարական թեթեւ անլառներում,

նարնջագույն լեռը

հառնել է դարարկ անլառներում:

/Ա.Վոզնեսենսկի. «Աշունը Գիլիզանում»/

Մերալուրգիական թավ անլառներում,

ուր քլրոֆիլի սրեղծման գործընթացն է եռում,

պոկվեց փերերը: Աշունն է արդեն աննկար իջել

մերալուրգիական թավ անլառներում:

/Ա.Երյոմենկո/

Առաջին հատվածում Գիլիզանի աշնանային անտառը համեմատվում է եկեղեցու շուրջ ծավալված շինարարական անտառի հետ /անտառը նման է դրանց/: Մետաբոլը՝ դա ամբողջական աշխարհ է, աներկատելի, բայց իր մեջ բացահայտում է բազմաթիվ չափումներ: Բնությունը եւ գործարանը, անտառակերպ կառույցների միջոցով, վերածվում են մեկը մյուսին, որոնք աճում են սեփական անհասանելի օրենքներով. տեխնիկան ունի իր օրգանիկան, եւ միասին դրանք կազմում են մի ամբողջություն, որում ճանաչելիորեն ու սարսափելիորեն միախառնվում

են մետալուրգիական եւ անտառային ուրվագծերը:

Եթե ռեալիզմն ընդամենը իրողություններից մեկի ռեալիզմն է, ապա մետառեալիզմը դա շատ իրողությունների ռեալիզմն է՝ շաղկապված մետաբոլիստական ներհյուսումների անընդհատությամբ: Մետաֆորիզմը խաղում է տեղական իրողության հետ, իսկ մետառեալիզմը ջանում է լրջորեն հասնել այլ իրողության: Մետառեալիզմը դա մետաֆորի ռեալիզմն է՝ որպես կերպափոխություններ, որպես իրականության ըմբռնում իր փոխանցումների եւ վերափոխումների ամբողջ լայնությամբ... Մետաիրական արվեստում յուրաքանչյուր երեսույթ ընկալվում է իբրեւ ինքնակա նպատակ, եւ ոչ թե միջոց մի այլ բանի հասնելու համար:

...Ժղանովի պոեզիայում իրերի առնչությամբ իմաստը որոշ չափով խճողված է: Ժղանովը իր պատկերային համակարգը զարգացրել է՝ դիմելով ժամանակակից իրողություններին /«ջեռուցման համակարգի մարտկոցը» եւն/: Նրա պոեզիան դուրս է գալիս առօրեականության շրջանակներից եւ մուտք գործում այլ իրականություն: Դա տեղի է ունենում բանաստեղծական խոսքի մակարդակում: Բանաստեղծը ձգտում է ձեռք բերել գեղարվեստական նոր լեզու երեսույթների նկարագրության համար, որոնք պարտակված են իրերին հղված սովորական հայացքի մեջ:

Ժղանովի լեզուն նման չէ առօրեականին, նրա բանաստեղծություններում թաքցված են իմաստի զանազան շերտեր, դրանք խաչաձեւվեւ են, միահյուսվում եւ վերափոխվում բանաստեղծական խոսքի, իսկ բանաստեղծությունը, պարզվում է, հագնում է կերպարներով ու մետաֆորներով: Բայց Ի. Ժղանովին չի կարելի ներկա պոետ-մետամետաֆորիստների հետ դնել մի շարքում, որոնք, ինչքան էլ ծանրաբեռնեն մետաֆորը, մշտապես գիտեն արդյունքը՝ հնարավորինս թաքցրած իրենց կողմից: Ժղանովը նախապես երբեք չգիտե արդյունքը: Նա բանաստեղծ-լուսնոտ է՝ իր երազները բարձրաձայն վերապատմող: Նրան բնորոշ չէ բլոկյան «ճանապարհի զգացումը», որ եմթաղում է եւ ժամանակի, եւ պատմության զգացում: Նրա մոտ չկա սկիզբ, միջակայք, ավարտ: Ժղանովի ընթերցած բանաստեղծություններում առկա է ինչ-որ ինքնիրեն առաջ մղող սկզբնաղբյուրի անվիճելի ինքնաբավություն, որ սաստկանում է նա-

ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆԸ

Եւ նրանով, որ նա բանաստեղծութիւնները կարդում է ոչ թե արտաքնահասցե՝ դիմելով լսարանին, ինչպես դա արդարացված կլինէր տրամաբանորեն, այլ՝ ներքնահղմամբ, դէպի իր ներսը: Ամենն այդ ասես տեղի է ունեցել իր ներսում, եւ նա հետեւելով դրանց զարգացմանը սեփական ներաշխարհում, բառերի լուսնոտային սոսափյունով վկայում է կատարվածը:

*Պահածոյի դանակով խոր վնասված ու բացապարզվող
երկիրք, վերից ներսում է ծաղկե դարարկ ռումբեր,
վառ կիսալուսինը ծաղկաքմբին ընկած է սիրոցի պես:
Իսկ վարդի թուփը՝ ծագելով սեղանի կլորավուն ծայրին,
ցնցվում է բրոնխիտով եւ նիկոտինի աղ ցիրուցանում -
շողարաշակելով ռենդգենի սարսուռ սեւ նեգաթիվին:*

*Դիմացս նստած ամեն ոք ունի նման կերպարանք,
հարկապես թանձր պորպփեյնի խոշոր բաժակից հետո,
ծխախոտով զույգ՝ փրամվաշի զնգուն թախիծով նայող,
այդպիսին կթվամ նրան, ով որ ինչ նկարի անդող:
Եվ որ դեմքը չէ սուզված փիեզերքում, ջրապտույրն է այլ
ներքաշված խուլ ու հարմարավետ ճահճում:*

*Սրճարանի բյուրեղ ծխում քանդակված կապույր
մի պուրակ,
Ապօրինի գետեր՝ ճնշված ջեռուցման ջեռ գարեջրից,
ուր մարտկոցների չուգունն կրկներգով փանում են
անկանգ
խուլ Օրփեոսին, եւ Օրփեոսը թվում է հարքած:*

*/«Ջեռուցման համակարգի մարտկոցի
ռապտոդիան» բանաստեղծութիւնից/*

«Իվանը ասես Նավիի հակառակ երեսն է», - նրա մասին գրում է քննադատ Դ.Բավիլսկին: Ժղանովի բանաստեղծութիւնը փշոտ է եւ կոշտ; Չնայած դրան, որ նրա բանաստեղծութիւնների ներսում անդադար թափվում են հրեշտակներ ու տեղումներ, ինքը նման է գեղագրի, որ հղկված ասեղով ավելի փա-

փուկ նյութերի վրա փորագրում է պատկերներ՝ գծված մանրանկարչորեն: Ընդ որում, նրա բանաստեղծություններում չկան որեւէ առանձնահատուկ գերբնականություն եւ այլակեցություն, գործնականում նրա բոլոր տեքստերը ամուր կանգնած են հողին եւ իրենց արմատներով խորացած են այդ հողի մեջ: Բայց դրանցում կան խորհրդավորություն, ամենահասարակի խորհրդավորություն, չհորինված գոյականներ՝ հող, տուն, սեր: Եվ մշտապես ալիքվում է ինչ-որ համընդհանուր մեղքի զգացում,- կարելի է հավաքել մեղավոր ճպտուների մի ամբողջ դեզ, որոնք առկայծում են ժղանովյան շատ տեքստերի անկյուններում:

Պատասխանելով հարցին՝ «Ինչո՞ւմ է Ձեր անհասկանալիությունը», Ժդանովը ասել է. «Կարծում եմ՝ այնպիսի հասկացությունների համակցման առեղծվածն է, ինչպիսիք են կանոնը, էլիպսիսը /իմա՝ ակնհայտ ըմբռնողության թույլատրումը/ եւ դրվագը: Հիմա, երբ ընդհանուր կանոնը ձեռքբերված չէ, դժվար է հասկանալ, թե որ կանոնում ես դու էլիպսիս արել: Ես բաց եմ թողնում այն, ինչն արդեն գտնվում է բզկտվող մշակույթի կարծրատիպի մեջ»:

*Եվ երբ ի հաճույս անթիվ քմայքների
շողկապվել ուզես ինչ-որ տենչանքի,
բացելով ճամփան՝ կանխատեսողի լույս շավիղների,
/ասես Հերակլեսի սիրանքն Անթեյին
վերագրվել է նրա համար, որ խնդության պահին
կտրվես հողից եւ թռչես երկինք/
այնժամ մերձիմուր կտեսնես, զարմանքով
սրապես դարձած, ինչ չկա շուրջդ
եւ մոտակայքում, եւ այն, որ այնպես խոցուրել է քեզ:
Կլռահես՝ որքան խոր-ահավոր է վիհը կանոնի:
Պարկերագրման կեր ես՝ վախի մեջ պիկո
շրջանակված,
դու՝ ուղղիչ սարսափ անհյուրընկալ ուժի:
/«Մարգարեներ» բանաստեղծությունից/*

...Ա.Պարչիկովի /եւ Իլյա Կուտիկի/ ոճի առնչությամբ տեղին է առաջադրել նոր եզրույթ՝ презентализм -«поэзия присутвия - «ներկայության պոեզիա»: Առնչակցելով ֆու-

տուրիզմի ավանդույթներին՝ արդիականության, իրերի տեխնիկական պլաստիկայի հանդեպ իր շեշտված հակվածությամբ, պրեզենտալիզմը գերծ է նրա սոցիալ-գեղագիտական մարտաշնչությունից եւ ուտոպիականությունից, ուղղված է ոչ թե ասպագային, այլ հավերժ ներկային, տվյալ պահին՝ որպես այդպիսին: Պոետական մոնիզմի /իրերի եւ իմաստի միախառնման/ եւ դուալիզմի /դրանց տարանջատվածության/ ծայրահեղությունների միջեւ այստեղ պատկերագծվում է իրականության հանդեպ հաստուկ, ֆենոմենոլոգիական մոտեցումը: Պրեզենտալիզմը հաստատում է իրերի ներկայությունն ինքնին, դրա տեսանելությունը, շոշափելիությունը եւ նման կարգի բաներ, որպես դրա իմաստավորության անհրաժեշտ ու բավարար պայման: Պոետական ստեղծագործությունն արարվում է որպես իրի նկատմամբ տարբեր հայացքների, դրանց ընկալման ու նկարագրության եղանակների հաջորդականություն, որոնք ամբողջության մեջ բացահայտում են իրի սեփական էությունը: Իրը շաղկապված չէ գաղափարի հետ եւ չի հակադրվում նրան, եւ այն ինքնին գաղափար է:

*Դարչնե շուրթերով, կաղնեսադարթի պես խշշուն
մազերով,
նրա ակնոցները, նախ, մզացան դանդաղ,
մերմակակաթով ողողվեցին ապա,
ուր սիրահարները խաչաձեւվում են իրենց քթերով,
ուր ուղղաթիռն է ծխահար շարժվում՝ չհիշելով գոնե
մեկին սիրոժար:*

*Ես գերանից թռա եւ խաշխաշի մարգում ծանր
տրապալվեցի՝
կրակմարիչ, դանակ նրան նվիրելու թաքուն
ցանկությամբ:
Ոնց շեմը սողալով հալոող խեցգեպիկներ՝
երկու հավակնորդուհի մենամարտի ելան:*

*Լուսավոր ու կորսվող անվանումներ հին՝
ճանկռված՝ դպրոցական նստարանի նման,*

*երբ ես մայրցամաք եմ տեսնում Շոքրլանդիայի
Եւ Նորվեգիայի միջեւ՝ քարտեզում ցայսօր չգծված:*

*Դա թորած ջրի, սպիտակ աղմուկի մայրցամաքն է, ուր
չկա որ ջրվեժ, ոչ կրակ ու լիճ:
Մենամարտողները Ուլյալյումին գոնե վկա վերցնեին:
Ավադ, ինքնասպանությունը փախչում է ինչնից:
/«Լուսնորը»/*

Պարշիկովի պոեզիայի գլխավոր խնդիրը ձեռնարկի մակարդակի վրա՝ դա տեսադաշտի, տեսողականության խնդիրն է: Պարշիկովին դուր է գալիս իրեն Գուլիվեր գգալ: Խաղալով մասշտաբներով՝ նա փոխնիփոխ ընկնում է մերթ գաճաճների երկիրը, մերթ՝ հսկաների: Հաճախ՝ մի քառատողի սահմաններում: Պարշիկովն ինքը հաճախ է խոսում լարվածության մասին, որը ծնվում է հապաղումից, միմուս-շարժումից, աստիճանական դադարից:

*Ես զենքը թաքցրի, անջարեցի կապը եւ շրջվեցի դեպի
Տարանցման հովիտ:*

*Մնաս բարով, ծիծաղելի իմ առափնյակ:
Ի՞նչ եմ ես փնտրել...*

*Չեմ ասի Ալբորֆենն ու Դարիոն: Հեղացույց հայելում
ազոսվն է կաղում, երեւին է տալիս շնագայլը ծեր:*

*Լեռներում հովիտը պղպջում էր՝ ասես
զինադադարների հպվածք լիներ:*

*Մեղուն՝ գառիվերին, ցածում՝ գլադիատորական
դպրոցների բաց հրաչգարանն է:*

*Ենթակայանների ապակիներն են եւ
խողովակաշարերը՝ հարկ հարկի վրա:*

*Եվ նավթագործների սրվերներով լեցուն
վերելակները կաթասն են ծածկել:*

*Հանց էլեկտրոնային երկու խուճում ոլորք,
նկատելով միմյանց՝*

ի փոխ անհեղափայտ ազոսվների երկու սրվերները,

*ապա՝ շնագայլը ծեր,
ունց էլեկտրոնային երկու ցուցանիշ, որ դողդողալով
մաքրում են համառ մանրամասները:
Հովիտն, հակառակը, արչակվում է՝ նման
օդապարանի:*

*Եվ շրջանի ամեն տեղամաս ճշրիվ մեղսագրված է ու
նշագրված,
նա դարարկ է եղել, եւ առավելս՝ դարարկությունների
հրաշալի կարգով,
ունց խորանարդիկ՝ միշտ վեցի վրա, կռահումն է հուշել
մնացյալ այն հիևզ մակարդակների
կեղծության մասին:
/ «Տարանցման հովիտ» քանասրեղծությունից/*

... Թեպետ Ա. Երյոմենկոն հարում է մետառեալիստների խմբին, նա միջանկյալ դիրք է զբաղեցնում մետառեալիստների եւ կոնցեպտուալիստների միջեւ. Նա բառերով ստեղծում է առարկայական հատուկ իրականություն եւ միաժամանակ հեզնաբար ավիրում այն: Բարձրի եւ ցածրի միջեւ մատնանշվող միջանկյալ դիրքը գրավում է տեխնիկայի եւ գիտության աշխարհը, Երյոմենկոն դիմում է հենց դրա եզրաբանությանը՝ իր տեքստերը կազմավորելով տարատեսակության ամենատարբեր շերտերից: Մեջբերումներն երկայնաձգում են տեքստերը՝ կարծես թե այն պաշտպանելով կողմնակիներից:

Մեջբերումների հետ ձեռնածությունն ինքնին բավական վտանգավոր է. դրսից նեմուծվածը, եթե անգամ այն օրգանապես տեղին է, ներգծվելով տեքստի կառուցվածքին, իր հետեւից քարշում է այլ տեքստերի ձայներն ու հոտերը: Մեջբերումն իմաստաբանական հանգի տեսակ է, քանի որ այն ոչ միայն կապակցում է տարբեր ափեր, այլեւ ուշադրություն է սեւեռում իր իմաստային թանձրուկների վրա: Հանգը վերջնական մեջբերման ենթատեսակ է. Երյոմենկոն առաջինն է մտնում պոստ-մոդեռնի ջուրը, տարալուծվում մեջբերումների մեջ եւ օգտագործում պատրաստի կառույցահատվածներ: Նրա բանաստղծությունը կեղծագործում է կյանքը:

Անքնություն: Երևաբեմ Հոմերոսը գնաց:
Չիսնի սրանսներով լի եմ կիսով չափ:
Աշխարհները՝ հանց նագանի համակարգ՝
մեքենայի պես աստ գործող հարակ:

Յոթ շրջանի է քմբուկը կիսված,
բոլորին՝ արված անել յոթ անգամ,
ամեն ռասայի՝ ոռնոցի դրոշմ,
հասցնել միևնույն լույս - ինքնասպանություն:

Պոետի խոսքով՝ «հաչոց ռետլվերի»
/նշեմ լուսանցքում՝ հաչել եմ ինքզինք/,
քաղաք-այգին, թե հանդերձյալ դրախտ
մտնում եմք, ըստ մեզ՝ հանց Փոքր Հաչան:
49 սրանս եւ պարասիսան մի սուր,
խսկ սա երկհատորյա մեկնություններ ունի:
հասկացա՝ մարդը իջնում է հանց լույս,
եւ ամեն աշխարհ կրակոց է մի:

49 սրանս եւ մի խոցում դառն,-
ու՞ր եք լողում դուք, Հեղինե՞ն դեպի...
Ուր էլ որ նայեք՝ փեշերն են նրա,
նրա ծունկն է ցից՝ ամեն անյունից:

Ամեն ինչ պրկված է նրա բախտով չար,
ուր էլ որ նայես՝ փեշերն են նրա:
Ամեն գրույցի վերջն է Հեղինեն՝
ունց սեռը փոխած պոետն է ասել:

Բայց Բուդդան ճիշտ է՝ միշտ հնար կա աստ,
ոչ ոք չի փախչի պարենադարձից:
Ես անգիր գիրեմ 49 սրանս,
պորտվեյն «777»-ի հետ չեմ շփոթի այն:
Սրիխը թե չլինի, հնար ունի լավ
ամեն մեկը: Բայց վերանում է այն սուլոցով բարկ,
եւ 220 վոլտը, 49 սրանսը,
եւ անգամ Բաքվի 26 կոմիսարք...

Պարբերական մամուլում Երյոմենկոն հրապարակվել է սկսել 1986-ին, առաջին գիրքը լույս է տեսել 1990-ին: 1990-ականներին բանաստեղծություններ գրեթե չի գրել, սակայն ամբողջ տասնամյակի ընթացքում նա ընդունվել է որպես գրական գործընթացի ակտիվ մասնակից, ինչը մեծավ մասամբ բացատրվում է նրա ինտերտեքստային, հղումային բանաստեղծական արվեստը ընդօրինակողների մեծաքանակ հայտնությամբ, որոնցից առավել հանրաճանաչություն է ձեռք բերել Թիմուր Կիբիրովը: Երյոմենկոյի քնարական հերոսը մարդ է, ով սրությամբ ընկալում է ժամանակակից աշխարհի հարստությունն ու գեղեցկությունը, ունակ՝ միասնականորեն տեսնելու կենսությունն ու տեխնոլոգիան:

*Պրոպեղերը՝ մրգաջրի հսկց կորիզ,
մեկաքսաշոր պարառություն՝ ունկերում:
Հայրական անցավ: Հավերժական շախն է ուր՝
ինքզինք՝ ասես հավերժական մի շարժիչ:*

Նման միասնականության մեջ են Երյոմենկոյի աշխարհում գոյակցում բնությունն ու գրական մշակույթը. «Պերեդելիկն» բանաստեղծության մեջ բնանկարն անբաժանելի է բանաստեղծական շատ քաղվածքներից եւ աղոտ վերնուշներից ու արձագանքներից, որոնք վերաիմաստավորվել են ողբերգական, հեզնանքի նշանի ներքո:

*Անչրե է մաղվում... Լռություն է հեղզ
շրաք-բնակարանում ծեր պարրիարքի,
իսկ անգլիական պուրակի մեջտեղ
Վեներան է չիզ: Առանց վարրիքի:*

.....

*Ամառանցում խոնավ է ու խառն:
Կերոսինի բույր-հոտն է ռունգերիդ:
Անչրե է մաղվում... Քնած են որդիք
օղի ու կոնյակ կոնծելուց մի լավ:*

*Խաչերից փարփամ թռչում են կորմեջք
ագռավները սեւ ու գաղպնակորով:*

*Եվ գիշեր ու փիվ գիտնականի պես
Պաստենռնակն է աստ քայլում շրջանով:*

*Աջից անտառն է՝ սպիտակ, ցանցի պես:
Չախից զանգվածն է շիրմաքարերի:
Շունն է փաք ոռնում, եւ Ֆեդիկը խեղճ
սակված նստել է կեչու ճյուղերին:
... Այսպեղ խնցի ոսկի զարեջուր՝
մարմնավորելով մահը, ոչ՝ կսկիծ,
բայց ինչ-որ մեկը մեկնված ձեռքիս
սեւ քար է դրել... ու մաղձի փշուր:*

*Խաղում է քամին, փեղկերն են զարնվում:
Իսկ կայմը ծովում եւ ճռռում է մառ:
Իսկ գիշերները Սյրալինն է շրջում:-
Վնասակար է հյուսիսն ինչ համար:*

... Բռնկվելով եւ վառվելով պոեզիայում, մետառեալիզմը մշտապես խթանել է մյուս ժանրերի՝ արձակի, խոհագրության, գեղարվեստական քննադատության զարգացումը: «Միանգամից պարզ դարձավ,- իր «Երեք աղբյուր, մետառեալիզմի երեք բաղադրամասերը» էսսեում վերհիշում է Մարկ Շատունովսկին,- որ յուրաքանչյուր ոք, ինչպես այդ մետաֆորիստները, հենց փորձի սուզվել սովորել մինչեւ սեփական Ես-ի խորքը, կարող է խորանալ մինչեւ ունիվերսալ համաշխարհային օվկիանոսի հատակը եւ այնտեղից, նրանց պես, հանել սեփական նշխարները: Ի ցույց է հանվել ակնհայտ արդյունավետ եղանակ, թե ինչպես, պահպանելով սեփական անհատականությունը, կարելի է ձեռք բերել նաեւ ընդհանրականություն: Դա իսկական հայտնագործություն էր»:

/հոդվածը տպագրվում է կրճարումներով/

Կոնստանտին ԿԵՂԻՐՈՎ

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՊՈՒԷՏԻԿԱ

/հատված «Մետամետաֆոր» գրքից/

Աստղերի համն ու բույրը ես զգացել եմ մանկուց: Քաղցր, դառնավուն Սիրիուսը, կարմրա-կապույտ, թթվահամ Կասսիոպեն եւ Մեծ Արջից տարածվող օժանային ալիքը: Մայրիկս ինձ աստղահաշվորդ է անվանել, բայց միաժամանակ ես նվազավար էի: Լսելով պատի սեւ ափսեից սփռվող ցանկացած երաժշտություն, ես տեղնուտեղը սկսում էի նվազավարել: Ես չէի տարբերում մեղեդին, վարում էի ինչ-որ աղմուկ ու դրդոց:

Աստղերի երգչախումբը ինձ համար վերացական հասկացություն չէ, այլ միանգամայն լսելի հնչողություն: Այն վաղուց վերածվել է իմ բանաստեղծություններին: Եթե ես նվազավարելի իմ բանաստեղծության երաժշտությունը, ապա վաղուց կերպափոխված կլինեի հարյուրածեռ Շիվային: Հազարաշորք եւ հազարաչ երկինքը համբուրում էր ինձ իր լույսով եւ փաղաքշում էր աստղերի թարթիչներով: Ծիշտ չէ, որ Դրախտը անտեսանելի է, հառեք աչքը վերեւ՝ երկինք, եւ այն ձեր առջեւ է: Ֆլամարինոն հաստատել է, որ եթե աստղաերկինքը տեսանելի լիներ Երկրի սուկ մի վայրում, այնտեղ կփութային միլիոնավոր ուխտյալներ:

Բայց առավել մեծ խոնարհման արժանի է անտեսանելի երկինքը, որ հայտնագործել է Ալբերտ Էյնշտեյնը: Որքան էլ սարսափելի լիներ 20-րդ դարը, այն բացահայտել եւ գիտությանը մատչելի է դարձրել տիեզերքի այնկողմնային աշխարհը: Սլանալ լույսի արագությամբ՝ նշանակում է աշխարհը տեսնել Հրեշտակների աչքերով: Մեծն Ալբերտի հրեշտակային լուսատեսությունը՝ դա ժամանակակից գեղանկարչությունն է եւ մետամետաֆորը պոեզիայում: Ոչ մի եկեղեցի ինձ համար չի բացահայտել այնքան, որքան զգայատեսել եմ Լոբաչեսկին եւ Էյնշտեյնը: Յավոք, ֆիզիկոսներն ու մաթեմատիկոսները Դրախտի մասին խոսում են դժոխքի լեզվով: Էյնշտեյնին դրախտի լեզվի փոխադրելը առաջին անգամ փորձել է Պավել Ֆլորենսկին «Երկրաչափական գեղժարարություններ» գրքում: Այնուհան-

դերձ, ոչ մի գրքում ես չգտա ամենայն արարչագործության այն անասանան մտերմիկ աշխարհը, որը հատուկ է ինձ ծննդյան օրից: «Պոետի եւ մուսայի միջեւ առկա է արեւային ձգափոկ», - ասել է Ալեքսեյ Պարշչիկովը: Ձգափոկ քո եւ տիեզերքի միջեւ, իսկ առավել ստույգ՝ քո եւ տիեզերքի միջեւ մրկող քաղցր ներքաշումը քեզ այլաշխարհների մեջ եւ առավել քաղցր ներքաշումը բոլոր աշխարհների՝ քո մեջ: Եվ ոչ առանձին ազդակով, այլ ամբողջ ներքին ու արտաքին, ավելի ճիշտ՝ ներքնա-արտաքին միացյալ քո գոյությամբ:

Իմ աշխարհը չի բաժանվում ներքինի ու արտաքինի, տիեզերքի ու մարմնի, ոգու եւ նյութի: Նյութը ոգեղեն է, իսկ ոգին՝ մարմնավոր: Կյանքը հագեցած է մահվան ներկայությամբ, իսկ մահը եռում է կյանքով: Այր ու կին միաձույլ գոյություն են՝ տարանջատված միայն արտաքնապես: Նույն մաքրությամբ արտաքնապես ենք մենք տարանջատված աստղային երկնքից:

«Աստղերը իմ աղիներն են», - ինձ ասել է Անդրյուշա Վրադի սանիկս, երբ նա 6 տարեկան էր: 7 տարեկանում այդ մասին նա մահացու կերպով մոռացել էր: Իմ աստղային հիշողությունը կարկառվում է մինչեւ ծննդյանս պահը, երբ քաղցր ձգափոկը քարշել է ինձ ներկա աշխարհի ձգողական տարածության միջով: Եվ պահ է եղել, երբ ներքին՝ մայրական եւ իմ արտաքին աշխարհի միջեւ սահմաններ չեն ձգվել: Հավանաբար, դա եղել է միասնական մի աշխարհ մինչեւ պորտս կտրվելը: Այդ կտրվածքի վնասվածքն այնքան մեծ էր, որ ես համառորեն չէի ուզում ապրել, մինչեւ իմաստուն բժշկուհին իմ բերանին չէր մոտեցրել ստերլետ ձկան խռիկով գրպալը:

Թե ինչ հնարով էր հաջողվել ստերլետ հայթայթել 42 թվի Ռիբինսկում, անդադար ռմբակոծությունների տակ, դա մեծ գաղտնիք է: Հետագայում ես իմացա, որ ռիբինսկյան անտառներում, 18-րդ դարում իմ նախնի Չելիշեններից մեկը հիմնել է Ռոզենկրեյցերների մենաստանը, եւ նա հրամանատարն էր ամբողջ հրետանու: Բացի դրանից, իմ ծննդյան տարում, 1942-ին, Ռիբինսկում վախճանվել է աստղերի ծածկագրագերծող ինստիտուտայ Նիկոլայ Մորոզովը: Երեւի ինձ էր միացել նրա հոգին, եւ ես ողջ կյանքումս եղա «աստղահաշվորդ»:

Ջարմանալի է, որ Աստվածաշնչում Մորոզովը տեսել էր մի-

այն մոլորակներ ու աստղեր եւ ամենեւին չի նկատել համաստեղությունները: Հեքիաթների հետազոտող Աֆանասսեւի պես նա համաստեղությունների մասնակի նկարագրությունը ամպածեների տեղ է ընդունել: Համաստեղությունների հանդէպ այդ կուրությունը բավական բնութագրական է այսպես կոչված արեւային դպրոցի ներկայացուցիչների համար: 70-ական թվականներին Մեծ Օրդինկայի տաճարում եւ լսել եմ արքեպիսկոպոս Կիպրիանիի քարոզը: Տոնվում էր Կազանյան Աստվածածնի օրը: «Հրաշագործ սրբապատկերը ներկայումս կորսված է կամ գաղտնի պահվում է Ամերիկայում: Բայց նայեք աստղալից երկնքին եւ ահա Նա Ձեր առջեւ է»: Մեծն Վասիլին հաստատել է, որ ճիշտ չեն նրանք, ովքեր պնդում են՝ իբր Քրիստոսի դեմքը մարդկանցից թաքցված է մինչեւ երկրորդ գալուստ: Արեւը մի՞թե Փրկչի դեմքը չէ: Սի այլ տեղ նա ասում է, որ արեւը դա Քրիստոսի սիրտն է: Կասսիոպեի համաստեղության ուրվագծերը հստակորեն նշմարվում են Օդիզիտրիի պատկերում, եւ դրանք օրինությամբ տարածվում են նաեւ Աստվածածնի կերպարում:

Միայն կույրը չի տարբերի Օրինոն համաստեղությունը լայնաթիկունք Օզիրիսի կերպագծերում: Միեւնույն ժամանակ, մասնաբաժանված Օզիրիսն ու Դիոնիսոսը - այդ Լուսինն է փուլային համընկնմամբ, եւ միաժամանակ, այդ Արեւմուտքում մայր մտնող եւ Արեւելքում ծագող արեւն է: «Դու հենց արեւն ես, արեւը, որ մեկ-մեկ անցնում է», - այսպես է երգվում Քրիստոսի տանջանքների մասին հիշատակություններում: Օզիրիսի եւ Դիոնիսոսի պառակտումը հիշեցնում է Հիսուսի հագուստի ծվատման դրվագը: «Շուրջառս է պատառոտուն եւ վիճակ է նետված իմ հագուստի համար»: Քրիստոսի անկար քիտոնը՝ դա նաեւ ողջ աստղային երկինքն է գլխավերեւում: Այն եւ Իզիդայի աստղային ծածկոցն է: «Հագած շուրջառո լուսն՝ մերկ կանգնած եւ դատաստանին»: Բայց երկինքը Քրիստոսի լոկ շուրջառը չէ, այն եւ տիեզերամարդ Ադամ Կադմոնի մաշկն է:

Յուրաքանչյուր մարդու ձեռնափում հստակ դրոշմված է Կասսիոպեի համաստեղությունը եւ այն հատող Ծիր-Կաթինը:

Ներշնչեք խունկը անասհման է այն

Ներշնչում՝ եւ դու լուսամուտի խորքն ես

Մի անգամ նայեցի շեռնափիս ունայն
Հեծյալ ու նժույզ այնպեղ րեսսս ես
Հեծյալը նեյրեց նիզակը բախարի
Եվ կյանքի գիծը չգվեց դեպ գեկիթ
Եվ սրբի գիծը չգվեց ներսը իմ
Երջանկության գիծը չգվում է անդին
Ոնց Կույսի րեզը Օռլեանից վեր
Ոնց Գողգոթային րեզը հռոմեացու
Այդպես հայացքն իմ Ժաննային խոցեց
Հոյոգրաֆիայի բռնկումով սուր
Տեսնում եմ Ժաննասն զրահն է մրնում
Խաղապրունը լայն ասրդախաղերի
Թափավազք - րեզը սուրաց մարտաշունչ
Թռիչք - գեկիթը խոցվեց նադիրից

Թե պարսպի մեջ ասրեի հանց Տեր
Ես այն ինչանով լի կլցնեի
Բայց Տերը մերկ է առանց հագուարի
Հագուարը նրա րաճարն է լուսեղ

Պրովանսն ու Ռեյմսը երես թողնելով
Ժաննայի րեզն է սուրում անվթար
Մի վառ չվերթով
Այդպես Բայրոնը լքելով Անգլիան
Հին հույնի նման լողաց Հելլադա
Մարդը մարդուն աննահ Հրեշտակ է
Հրեշտակն Հրեշտակին՝ մարդ

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԿԵԳՐՈՎ

Սիրո համակարգիչ.....	9
ԴՕՕԱ.....	15
«Թափանցիկ շղարշով թռչում եմ հանց թիթեռ».....	17
«Սետամետաֆոր».....	19
«Գառուդի եւ հեռաստանի միջեւ ընկած բացատներով».....	20
Թիթեռի նվազավարը.....	21
Աթոռը.....	22
Սպինոզայի աղամանդը.....	23
Աստժո հիերոգլիֆը.....	25
«Իմ տանը».....	26
Աերողար.....	27
«Քո սիրտը».....	28
«Չվող թռչունը».....	29
«Եռուն կրքերն արդեն բարձրակետին են».....	30
Կալվինը.....	31
Շուրթերի երկխոսությունը.....	32
Ստվերային ծիածան.....	33
Թիթեռի աստվածաշունչը.....	35
Համլետը իժորյան մենաստանում.....	36
Ծովահարսերի հավքը.....	38
Լերմոնտաժամ.....	40
Ուլիսը եւ Նավգիկեն.....	42
Նոր լսուկոն.....	45
«Աղոթքը դա նավ է».....	47
Մաժինոյի գիծը.....	48
Հարավի քերովբեն.....	49
Խնձորը.....	51
«Բյուր անգամ կարելի է կրկնել.....	52
«Երկիրը թռչում է».....	53
Ծովի թանաքամանը.....	54
Դեկարտի հողմերը.....	55
Վերամարմնավորում.....	57
Հրաշասարյակ.....	58
Հոգու բանաձեւը.....	59
Կամուրջների ապստամբությունը.....	61
«Ներշնչեք խունկը անասհման է այն».....	63
Անեզր.....	65

ԵԼԵՆԱ ԿԱՅՅՈՒՔԱԸ

Կրակի մարդիկ.....	73
Դիմակը.....	74
Մոմը.....	76
Ուղի.....	77
Գ-նդակը.....	78
Քնքանքի դպրոց.....	79
Այգեպանուհին.....	80
Նզովք կարմիրով.....	82
Հանգը.....	83
Գ-իշերային անցում.....	84
Մանեկենի հարցաթերթը.....	85
Աղբանոցում փոխարինվողներ չկան.....	86
Լուրը.....	87
Թատրոնախոս.....	88
«Կյանքը նշանակված է մի վարդով միայն».....	89
«Նախ իր ծնունդը կերպարն ապրում էր».....	90
Քարեր, կամ մարդիկ.....	91
Սանդղուք.....	95
Ճյուղ.....	97
Երբ.....	102
Լուսնի վկայությունը.....	103
Հրեշտակի օրագիրը.....	104
«Գ-նայի ու գնայի ուր աչքս կտրում է».....	105
«Մի՞թե ամեն ինչ կավարտվի այսպես».....	106
«Ստեղծների վրա սիրո մասին մեկը».....	107
«Մի օր ասել եմ ես քեզ.....	108
«Ես կապված եմ քեզ».....	109
«Ես մնում եմ: Հայելուց դուրս».....	110
Սիրահար ձկները.....	111
Ամպրոպ.....	112
Զգեստը.....	114

ԱԼԵՔՍԵՅ ՊԱՐՇՉԻԿՈՎ

Նախերգանք.....	119
Ուժ.....	121
Փախուստ-2.....	123
Ցուցարարների շները.....	124
Սանդղիկ.....	126
Լուսանկար «Ընտրանքի» համար.....	128
Լուսանկարիչը կինոհրապարակում.....	129

Հեռակայություն.....	131
Անմահը.....	134
Երբ.....	135
Ողջը այդպես էլ կա.....	136
Ազարակում: Կալիֆորնիա.....	137
Հընթացս լեռներում.....	138
Տիպ: Հոկտեմբեր.....	139
Սան-Ֆրանցիսկոյի առափնյա հանրախանութը.....	140
Էքսկուրսիա.....	142
Ես ուրացվում եմ կապիկներից.....	143
Օ, այգին ընկերներիս.....	144
1971 թիվ.....	145
Երկու գրիմարարուհի.....	147
Լոքո.....	148
Ապակե աշտարակներ.....	149
Արձաններ.....	152
Ամայուտ.....	153
Եղերերգ.....	154
Թռչնակը.....	155
Պոետը եւ մուսան.....	156
Իրական պատմեչը.....	157
Ես չեմ ըմբռնում քո ընտրությունը.....	158
Ածելին վայրագ փայլում է լոգարանում.....	159
Ես քեզ բաց թողի կույր գայլի հանգույն.....	160
Դիրիժաբլներ.....	161
Լուսնոտություն.....	166
Ռումֆիուս.....	169
Ճանապարհ.....	171
Երագ.....	172
Երկրաշարժ սրճարանում.....	173
Խուսավարումներ.....	174
Տարանցման հովիտ.....	176

ԱԼԵՔՍԱՆԳԻ ԵՐՅՈՄԵՆԿՈ

«Ձեռքերը՝ արմունկով թեորեմից ներս».....	180
«Ամպրոպաճեղքերին համընկնելով».....	181
«Չույզվում-պարում եմ եւ սողում պատից».....	182
«Թեժ արեգակի եւ լուցկու միջեւ».....	183
Անհայտ գինվորի հիշատակին.....	185
«Մանդելշտամի հետ խմել եմ Կուրսկում».....	186
«Անքնություն: Ետնաբեմ Հոմերոսը գնաց».....	187

Գողական սոնետ.....	189
Անհանգ սոնետ.....	190
Երեկոյան սոնետ.....	191
«Բարի եմ, գեղեցիկ ու լավ».....	192
Տոնավաճառ.....	194
«Փայտի երեկո».....	195
«Պատուհանից դեմ».....	196
«Երեկոների թանձր լուծույթում».....	197
«Ռացիան երագի, Ֆերմոպիլների հույները նաեւ».....	198
«Վառվելով, սպիրտը՝ ոնց պիտներուի».....	199
«Անդրդվելի են չափերը հոգու».....	200
«Եվ Շուբերտն է ջրին, եւ Պուշկինն է սետվ».....	201
Պարզումակ խոհեր.....	202
«Երանելի ու օրհնյալ կիրակի».....	205
«Կերոսինի նման բռնկվում է դյուրին».....	206
Հոքու-1.....	207
Հոքու-2.....	208
«Գիշերն այս տաք է, ինչպես ռադիատոր».....	209
«Ցուցափայտը մղվում է հեռուները դեպի».....	210
«Նկատել եմ՝ ինչքան էլ խմում եմ».....	211
«Փոխզնդապետը ինքնաթիռ նստեց».....	212
Ձմեռայինի գրոհը.....	213
«Երբ բախտաբերի ծածկագիրն է ճեղքվում».....	214
Հայացքի երկարության հարցի առիթով.....	215
«Չճանաչված թռչող դու օբյեկտ».....	216
«Հորիզոնական երկիր».....	217
Տխուր կանխատեսում՝ ընկերոջս.....	218
Պերեդելկինո.....	219
«Հիվանդասենյակի ցուրտը սոսկալի».....	221
«Նա մագլցեց ու,- օրը երկուշաբթի».....	222
«Գարունը Սարատովում նման է Օդերի».....	223
«Անհանգիստ լուսին».....	224
«Երբ իշխանները երկրի վրաց».....	225
«Անձրեւի շեղակի վահանով».....	226
«Անտառի ապակե-դատարկ ուրվագիծն է այնտեղ».....	227

ԻՎԱՆ ԺՎԱՆՈՎ

Հորս դիմանկարը.....	233
Սկրտություն.....	234
Ձայնակարգություն.....	236
Հուդայի լացը.....	238
«Երբ զարկված թռչունը մեռնում է՝ սրտում».....	239

«Ջուրը աչքերում չի սուզվում - թախծի նշան է».....	240
Աշուն.....	241
«Գիշերը եկավ».....	242
«Ուղղաբերձ գետը անձրեւի».....	243
Հայացք.....	244
Հայելիներն են նվաղում.....	245
Դիմանկար.....	246
«Անտառաշենին կանգնած ես մենակ».....	248
«Հոգին կգարթնի եւ այն ժամանակ».....	249
«Չեն ընտրում նման գիշերը».....	250
«Երբ պարզ չէ հանցանքը».....	251
«Վառվում է սիրտը լուռ, աշնան հոգով».....	253
«Անցորդը».....	254
«Դատարկ սայլն արդեն ետեւում մնաց».....	255
Սրճարան.....	256
Աղոթյալը.....	258
«Ծովը, որ սեղմված է թռչնոց կտուցներում».....	259
«Կթափանցի շողը պարապի մեջ սեւ».....	260
«Փորձիր ասել ինձ, որ ես ուրու եմ».....	261
Ուր է քառասունը քառասունի.....	263
«Քարը լողում է հողում».....	265
Այլակերպություն.....	266
«Թե հավք է - ապա ճախրի ստվեր կա».....	267
«Չմանրվող տիրության գոտի».....	268
Կրնկաբաց դռներ.....	269
«Հապաղած խնձորը բնավ չի ննջում».....	270
Կալանված աշխարհը.....	271
«Ես լուսնոտ չեմ, քնում եմ ես ոտքի վրա».....	273
«Քաղաքն այս ձախող ֆոտոռոբոտ է».....	274
«Արձակության մեջ, ուր հեռաստան երկու».....	275
«Այգին գարնանը կփթթի ճյուղերին».....	276
«Արի գնանք այնտեղ ճանապարհով կեռման».....	277
«Ոսկորքս շնչում են հրդեհի պահին».....	279
Վերադարձ.....	280
Ծագում.....	282
Ջեռուցման համակարգի մարտկոցի ռապտոդիան.....	284
Հակամարգարե.....	285

ՀԱՎԵԼՎԱԾ

<i>Եվգենի Սրեպանով. «Մետա - Մետա».....</i>	288
<i>Նսիրալյա Դալի. «Մետամետաֆորիստները».....</i>	298
<i>Կոնստանտին Կեդրով. «Հրեշտակային պո-էտիկա».....</i>	310

ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՏԱՄԵՏԱՖՈՐԻՍՆԵՐ

Քանաստեղծությունների անթոլոգիա

Թարգմանություններ ռուսերենից

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015

Կազմող եւ թարգմանիչ՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Սաթեոսյան
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձևավորումը՝ Մ. Դրավյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 20 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25